Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Ս Ա Ր Մ Ե Ն

# ԹՌԻՉՔ



ՊԵՏՀՐԱՏ

ՀԱՅԿ
ՊԵՏՀՐԱՏ

## ՍԱՐՄԵՆ

# ԹՌԻՉՔ

A II 39527

ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1935 ՄՈՍԿՎԱ

Պատ. խմբ. Ա. ԱԴՈՅԱՆ
Տեխ. խմբ. Հ. ՓԱՐԱՄՅԱՆ
Շապիկը և տիտղոսաթերթը
ԼԵՏԿԱՐԻ



# ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

## I.

— *Սարմե՞ն։*

— *Ճիշտն ասած՝ առաջին անգամն եմ լսում այս պոետի անունը։*

— *Ի՞նչպիսի արագությամբ աճում ու հասունանում են գրական մեր ույժերը։*

*Ահա մոտավորապես այն նախնական, սակայն միանգամայն բնականոն զարմունքը, վորը մենք լսելու յենք սույն յերկի ընթերցողներից։*

*Տվյալ դեպքում մենք վատ նշան չենք համարում ընթերցողների զարմանքը։ Զի վոր տակավին անտիկ աշխարհի մեծ մտածողն ե ասել, թե զ ա ր մ ա ն ք ը՝ մ ա յ ր ն ե ի մ ա ս տ ո ւ թ յ ա ն։*

*Անհերքելի յե այն իրողությունը, վոր յուրաքանչյուր գրող իր տաղանդն ու ձիրքը պարտական ե վոչ միայն բնության (ծնողներին), այլ և գերազանցապես այն դ ա ս ա կ ա ր գ ի ն, վորին պատկանում ե նա իր աշխարհայացքով ու հասարակական կեցությամբ։ Գրողին մտավոր և զգայական սնունդ տվողն ու կազմակերպողը, նրան դաստիարակողն ու վոգեվորողը՝ յուր հասարակական բարդ միջավայրն ե։ Յուրաքանչյուր գրողի օրրանը՝ նրա սոցիալ-դասակարգային շրջապատի ամբողջությունն ե։ Ճիշտ ե ասված, վոր բ ա ն ա ս տ ե ղ ծ ծ ն վ ու մ ե ն, իսկ գ ի տ ն ա կ ա ն՝ դ ա ռ ն ու մ։*

*Սույն ճշմարտությունը մեզ համար, անշուշտ, հարաբերական ե։ Ուստի մենք այն ընդունում ենք վորոշակի վերապահումով՝ այն, վոր տվյալ գրողի բնատուր ձիրքի հորդաբուխ և կենսատու ապրումների ակունքները վորոնում ենք նրա ապրած ժամանակաշրջանի պատմության դաշտավայրում։*

*Իսկն ասած, սա արդեն սոսկ վերապահում չե, այլ հաստատված մի պատմա-հասարակական ըմբռնում, վորը մեզ կտակել են մարքսիզմի հիմնադիրները։*

Սոցիալիզմի մեր մեծ ու անպարտ հայրենիքում, անծայրածիր և շող հորիզոն է բացվել մարդկային ստեղծագործ մտքի վեհագույն թռիչքների համար։ Յուրաքանչյուր վոք հնարավորություն ունի իր կարողությունների համեմատ մասնակցելու այն հոյակապ համերգին, վորը սոցիալիզմի կառուցում է կոչվում։ Անսպառ է և վոգևորիչ մեր իրականությունը մանավանդ զննող ու ստեղծող մտքի համար։ Ահա յեն այն հասարակական-նյութական նախադրյալները, վորոնք պայմանավորում են զարգացող մտքի ամենաբարդ ոլորտն անգամ։

## II

Ընթերցողին առաջարկվող այս գործը՝ ընկ. Սարմենի (Արմենակ Սարգսյանի) բեղուն գրչի գրեթե առաջին պտուղն է։ Ասում ենք գրեթե այն նկատառումով, վոր 1925 թվին հրատարակված նրա «Դ ա շ տ ե ր ը  ժ պ տ ու մ  ե ն» փոքրիկ գրքույկը վորևե ակնառու նշանակություն ունենալ չի կարող հեղինակի ստեղծագործական զարգացման համար։ Թե ձևի և թե բովանդակության տեսակետից այդ «յերկը» բնավ չի կարելի համեմատել ներկա գործի հետ։ Սարմենի սույն յերկը վորքան հյութեղ է ու գրավիչ, նույնքան և պրոբլեմներ դնող է ու արժեքավոր։

Նորափթիթ այս գրողը լուրջ և ուշագրավ մի քայլ է անում՝ անկասկած հաջող, անցյալի կուլտուրայի քննադատական վերամշակման, առավել համեմատաբար կայուն արժեք ունեցող գործ։

Սակայն, այստեղ սկզբից ևեթ պետք է նշել մի չափազանց կարևոր հանգամանք՝ այն, վոր յեթե պոետը համարձակ է ու վորոնող բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ա ն բնագավառում, ապա նա ակներև պահպանողական է ձ և ի ասպարեզում։ Սա չի նշանակում հարկավ, թե Սարմենը միանգամայն զուրկ է ինքնատիպությունից ձևի՝ մանավանդ իր պատկերավոր վոճի բնագավառում։ Ընդհակառակը, հենց այդ ասպարեզում էլ նա ցուցաբերում է [illegible] նվաճումներ և հուսալի հեռանկարներ։

Վորո՞նք են Սարմենի պոեզիայի բնորոշ մոմենտները. ն յ ու թ ի  գ ա ղ ա փ ա ր ա կ ա ն  հ ա գ ե ց վ ա ծ ու թ յ ու ն, պ ա տ կ ե ր ն ե ր ի  բ ն ա կ ա ն ու թ յ ու ն  և  հ ա ր ա զ ա տ ու թ յ ու ն, մ տ ք ի  թ ա ր մ ու թ յ ու ն  և  ա կ ն ե ր և թ ա փ, պ ա տ կ ե ր ն ե ր ի  ջ ե ր մ  հ ու զ ա կ ա ն ու թ յ ու ն՝ հյուսված հաճախ խ ո ր  գ ա ղ ա փ ա ր ա յ ն ու թ յ ա ն  հ ե տ։

Սրանք են այն հատկանիշները, վորոնք վոչ միայն բնորոշում, այլև զ ա ն ա զ ա ն ու մ են նրան իր հասակակիցներից, անգամ մի շարք «ավագ» գրողներից էլ։

Բայց սրանով չի սպառվում վողջ ճշմարտությունը։ Հարցն այն է, վոր այս յերիտասարդ պոետը իր մի շարք հասակակիցների անձնու-

թյամբ, ակներև նվաճումներ ունի գրական ստեղծագործության վճռական տարրը հանդիսացող՝ լեզվի բնագավառում։ Դեռևս լեզուն նա չի ցուցաբերում այն խոսելի անփութությունը, վորից զերծ չեն գրական բազմաթիվ դեմքերը։ Սարմենը ջանք ե թափում իր լեզվի կատարելագործման վրա։ Յեվ պետք ե ասել, վոր նրա ճիգերը ապարդյուն չեն անցել։

### III

Անդրադառնալով պոետիկայի գլխավոր մոմենտներին, ռուս մտքի տիտաններից մեկն ասում ե, թե պոեզիան ճշմարիտն ե՝ հայեցման ձևով։ Պոետը մտածում ե պատկերներով. նա ճշմարտությունները չի ապացուցում, այլ ցուցադրում ե։ Նորագույն պոեզիան իրականության պոեզիան ե՝ կյանքի պոեզիան։ Պոեզիան մտածողությունն ե, պատկերներով արտահայտված. ուստի, յեթե պատկերներով արտահայտված իդեան կոնկրետ չե, այն կեղծ ե, թերի, ապա և պատկերն ել անհրաժեշտաբար գեղարվեստական չե։ Նույն մտածողն իրավամբ, յուրաքանչյուր յերկի գեղարվեստականության կարևորագույն պայմանն ե համարում՝ ձևի և բովանդակության ներդաշնակությունը։

Այս տեսանկյունից մոտենալով Սարմենի ստեղծագործությանը, պետք ե նշենք, վոր նա բավականին հաջող կերպով ե կիրառել յուրաքանչյուր պոետիկային առաջադրվող վերոհիշյալ կարևորագույն սկզբունքները։ Ավելորդ աշխատանք կլիներ մեր կողմից այս բանի ապացուցումը։ Ուշադիր ընթերցողը դյուրությամբ կնկատի այդ։

Յերկու կարծիք չի կարող լինել այն մասին, վոր այս սկսնակը ակներևի հաջողություն ունի պատկերներով մտածելու մարզում։

Սոցիալիստական մեր առորյայից և պատմությունից վերցրած իր մտապատկերները պոետը վոչ միայն ցուցաբերում, այլ և ապացուցում ե, ապացուցում ե համոզելու կարողությամբ և համառ հետևողականությամբ։ Նա պասիվ չի դնում իր գտնված ճշմարտությունները, այլ կրակոտ հուզականությամբ և իմաստավոր դատողություններով հիմնավորում ե դրանք։ Չի կարելի անտեսել, վոր այս գրողն անքակտելի կապերով կապված ե մեր իրականության հետ։ Նրա մոտ գրեթե չկա այն, ինչ կոչվում ե բռնազբոսիկ հույզ։

Սարմենն իր յերգերը բնավ չի անջատում յուր դասակարգի անմիջական պայքարից։ Այս առումով, նա կարիք չունի ժամանակավոր «ստեղծագործական գործուղման», հույզերի «նախասկզբնական կուտակման» պրոցեսն ավարտելու համար։

Իբրև պայքարի մարտիկ, նա իր գործի զենքերից է դիտում ու-վերլուծում մարդկանց հոգեկան աշխարհի բարդ և բազմազան յե-րևույթները։ Ահա թե ինչու նա սկզբից եվեթ անհրաժեշտ է հա-մարում կողմնորոշել իր ընթերցողին, հետևյալ տողերով.

Ինչպես սառնությամբ եղերական
Երգեմ վերելքը մեր վիթխարի,
Երբ դասակարգը իմ հաղթական
Փոխել է ընթացքն հին աշխարհի
Երբ տասը տարում կարում ենք անցնում
Տարածությունը մի ձիգ դարի,
Ինչպես ցնծությամբ վառ, անպատում՝
Չերգեմ խոյանքն այդ հաղթարի։

Այս գեղեցիկ հատվածում պետք մեզ տեսնել է իր ստեղծա-գործության և իրականության առնչության մ ե կ ն ա կ ե տ ը։ Նրա գործն իր վրա կրում է մեր հերոսական օրերի ջերմության և արագացող թափերի անջնջելի կնիքը։ Այս հանգամանքն, անշուշտ, ավելի արժեքավոր է դարձնում յերիտասարդ հեղինակի պոեզիան։ Նա խույս չի տալիս պայքարի դառն ովկիանի փոթորկալի հորձա-նուտներից և փակվում սուբյեկտիվ զեղումների գաղջ աշխարհում՝ ինչպես այդ անում են անգամ այսօր մեր գրողներից վոմանք։ Նրա յերգը ձուլված է իր դասակարգի յերգին։ Նա գիտակցաբար իր պոեզիան ստորադասում է հին աշխարհի ընթացքը փոխող մարդ-կանց կյանքին ու պայքարին։

## IV

Սարմենը խոր և անդրդվելի հավատքով է լցված դեպի սո-ցիալիզմի հաղթանակը մեր յերկրում։ Նրա խնդալի պոեզիան, իրոք՝ բավական հրապուրիչ և մերթ վորոշակի վարպետությամբ է նկարագրում կործանվող բուրժուական և հաղթած սոցիալիս-տական հասարակարգերի վերջնական մարտը։

Նրա կուռ յեզրակացությունները տրամաբանորեն բխում են իր արծարծած հարցերի զարգացումից։ Հեղինակին հաջողվում է ուշագրավ, բազմաթիվ վառ պատկերների միջոցով վարակել իր ընթերցողին։

Իր մտահղացմամբ և մասամբ, թեմայի կոնկրետությամբ, Սար-մենը համարձակ է ու վորոնող։ Հիրավի, մեր պոետներից ով է փորձել սովոր մի աշխատությամբ, և այն էլ չափածո, մեր ան-ցյալի և ներկայի հետ միասին, պատկերել և վ ա ղ ը։ Վ ա ղ ը՝ վոչ աբստրակտ, այլ կոնկրետ նյութի հիման վրա։ Վ ա ղ ը՝ այսօր-վա շինարարության լուսարձակի տակ։ Վորքան մեզ հայտնի յե —

բները։ Առանձնապես ընդգծելով անհերքելի այն անհրաժեշտությունը, որ մեր յերիտասարդը դեռ յերկար ժամանակ պետք է աշակերտի գրական ստեղծագործության վարպետներին, մենք կամենում ենք միայն նշել, որ Սարմենի հաջողած փորձը՝ մեր վաղը պատկերելու ուղղությամբ՝ անպայման խրախուսելի յե։

Նա փորձել է իր պոետական քնարով պատկերել վերափոխված Չիբուխլուն ու Բժնիները՝ Սևան-Զանգու կասկադի իրագործված ֆոնի վրա։

Ցեվ չի կարելի ասել, որ նա վրիպել է իր նպատակից։

Պոետը լավ գիտե յուր գաղափարի անցած և անցնելիք դժվար ուղիները։ Նա նմանապես լավ գիտե, որ այժմ մեզ համար կարևորագույն և դժվարին, — բայց լուծելի, — խնդիր է մարդկանց գիտակցությունից կապիտալիզմի մնացորդների արմատահանումը։

Մի քանի վառ տողերով նա տալիս է յերկրի վերածնության պատմական մեծ պրոցեսը։

Ճիշտ ասաց Լենինն, որ մենք ե՛ փոխում,
Ցե՛վ փոփոխվում ենք անվերջ, անընդհատ։
Բայց ճիշտ է և այն, որ մեր մեծ ուղին
Չէ՛ այնքան հանգիստ, ալարկված ու հարթ։
Մենք ամեն մի դիրք, մի բերդ, մի գագաթ,
Մի նոր մարդ անգամ նվաճելու համար
Պայքարել ենք միշտ, պայքարում ենք դեռ,
Մարտեր ենք մղում և՛ խիստ, և՛ համառ։
Ու ամեն մի օր, ամեն մի վայրկյան
Մենք թե՛ կերտում ենք, և թե՛ փոփոխում...
Ի՞նչպես դիմանա քո այդ խանդ-արքան
Մեր մեծ մարտերի փոթորկոտ բովում։

Վորքան ճիշտ և վորքան հաջող է տվել պոետը սոցիալիզմի կերտման մեր պայքարի ստեղծարար վոգին. «պ ա յ ք ա ր ու մ  ե ն ք  դ ե ր,  մ ա ր տ ե ր  ե ն ք  մ ղ ու մ  և՛  խ ի ս տ  և՛  հ ա մ ա ռ»։ Նա քաջ գիտե մեր վերափոխիչ պայքարի պատմական արդյունքները։

Ահա թե ինչ իմաստ է տեսնում նա Հայաստանի ելեկտրիֆիկացիայի իրականացած պլանի մեջ։ Մի օրինակ նրա կերտած գողտրիկ և լիրիզմով հյուսված պատկերներից․

Ել չկան նրանք — խրճիթները կուզ,
Հորանջող գյուղի ձանձրույթը մռայլ,
Այժմ լույսերի լամպերը վողկույզ,
Բոցկլտում են վառ ու արևափայլ։
Ցեվ մարդու հոգին հինովին փոխվել,
Սրտում ծաղկել են նոր զգացմունքներ,

Յերկիրս այժմ արշավում է վեր՝
Դեպի նորանոր պայծառ բարձունքներ։
Աշխարհափոխման ինչ յեռանդ, ինչ թափ,
Վոգևորության ինչպիսի ալիք,
Յես ինչ խորքերով քո պատկերը տամ՝
Կոմունիստական վառվեցող գալիք։

Այսպիսի ճշմարտապատում և վճիտ պատկերներով լի յեն ընթերցողին առաջարկվող՝ պոետի այս յերկը։ Հակառակ իդեալիստ Վարգենյանների, վորոնք Հայաստանի ելեկտրիֆիկացիայի մեջ միայն չարիք են տեսնում, Սարմենը ցնծությամբ է վողջունում բնության կուսության այդ «խախտումը»։ Նա համոզված է, վոր յերկրորդ հնգամյակում ավարտվելու յե մեր գյուղի սոցիալիստական վերակառուցումը և արմատապես փոխվելու յե այն ամենը, ինչ մեզ մոտ դեռ մնացել է անցյալից։

Սևան-Զանգուի պրոբլեմի կենսագործումը վոչ միայն արագացնելու յե մեր աշխատավորության ունևոր կյանքի բարգավաճումը, այլ և դրա հետևանքով աննախընթաց թափով վերանալու յեն հին կենցաղավարության մնացորդները։ Պոետն այդ տեսնում է այսպես։

Ո՞ւր են քրդական վրանաբնակ
Հովիվները խեղճ ու վաչկատուն,
Ել չեն յերևում, ել չկան նրանք
Մեր այս լեռների տարածում։
Ո՞ւր են, ո՞ւր կանայք — կեղտակուր, անտաշ
Յեվ անգրագետ, համր ու լալին…
Նրանք ել չկան, անցել են անդարձ,
Ինչպես ձմեռը մեր՝ լեռնային։
Ո՞ւր են ցեղական վրիժառության
Սրամարտերը արնավարար…
Յերգի՛ր, Լաթիֆա, յերգիր բարձրաձայն,
Յերկինքը ջինջ է, արևը՝ վառ…

V.

Սարմենին յուրահատուկ է *հեռանկարների պարզությունը*։ Դրա համար ել նա հարցերը դնում է համարձակ և յեզրակացությունները հիմնավորված։ Սովորական սխեմատիզմը, վորը մաշում է մեր մի քանի սկսնակներին՝ հիմնականում oտար է այս գրողին։

Իր ստեղծագործությամբ նա անպայման կանգնած է սոցիալիստական ռեալիզմի ճանապարհին։

Բայց սա դեռ չի նշանակում, թե Սարմենի պոեզիան կատարյալ է *և անթերի*։

Ամենևին վոչ։

Ինչ խոսք, վոր տիպերի մշակման բնագավառում նա ակներև թերություններ ունի (խարակտերների թերի մշակումը)։ Այսպես օրինակ, յեթե նրա Վարդենցը գրեթե ամբողջական մի տիպ է, ապա նույնը չի կարելի ասել Լենայի մասին։ Լենայի կերպը բավականին աղքատ է և վոչ ցայտուն։ Սրա համար էլ հեղինակը ստիպված է քայլ առ քայլ հետևել Լենային և օգնել նրան «նեղ մոմենտներին»։ Սերգոյի ներկայությունը չի պայմանավորված սյուժի ներքին կառուցվածքով։ Նա պատահական և թերապատկեր գիծ է, այդ պատճառով էլ նա կողմնակի մարդ է մնում դեպքերի ու դեմքերի մեջ։

Յեթե հարկ լինի հակիրճ արտահայտել Սարոյանի այս գործի պակասությունը, կարելի յե այդ ասել յերկու խոսքով. համայնապատկերականություն, վորոշ վերացական տեղեր, ուր հրապարակախոսությունը չի զիջում «դուռ» պոեզիային, չուշադիր հարցերի երբեմնակի անտեսում և աննշանական կապերում է կողմնակի նյութի առատություն։

Հեղինակը սակայն յողած չափով չի թողել իր յերկը ավելորդ խառնուրդներից։

Խրախուսելով Սարոյանին իր անհերքելի արժանիքների համար, մենք բնավ չպետք է անտեսենք նրա բացերն ու թերությունները — ակներև պահպանողականություն ձևի ապարփակում և մշակված նյութի նկատելի ձգձգվածություն ու կրկնողություն։

Սակայն սրանք միանգամայն հաղթահարելի պակասություններ են, վորոնց վերացմամբ, Սարոյանն անկասկած ավելի առաջ կգնա։

Նրա պոեզիան նման է սարալանջից պոռթկացող մի խոխոջացող աղբյուրի, վորը սակայն սկզբում իր հետ բերում է ավազի ու քարի հատիկներ։ Բայց մենք համոզված ենք, վոր նա խաղաղ ջինջ կդառնա ժամանակի ընթացքում։

## VI

Կարող են մեզ մատնանշել այն, վոր Սարոյանի գործն իր վրա կրում է գրական մեր վարպետների, առաջին հերթին Հ. Թումանյանի ազդեցությունը։ Այո, այդ ճշմարիտ է։ Բայց այն վոր յերեխան է, վոր առանց մոր կաթի առնացել է։ Ո՞ր գրողն է ասպարեզ իջել սկզբից եվեթ կաղապարված, ստեղծագործական ճշգրտված դիմքով։ Վոչ վոք։ Այդ հնարավոր էլ չէ։ Յուրաքանչյուր մանկիկ ծնվելիս՝ կրում է առավել կամ պակաս ատավիզմի հետքեր։

Կարևորն այն չէ, վոր հայտաբերվի գրողի ժառանգական կապը իր նախորդների հետ, այլ այն, վոր ճշգրտորեն ցուցաբերվեն այդ հեղինակի ուրահատուկ գծերը։

*Թռնակյան զեղումների և «բռնակալմոլության» փոխարեն, նա մեզ տալիս է վառ ապագայի և այսօրվա վայելչունչ յերգեր.*

*Մինչ վենը թափի թևեր է առնում,*
*Փոքրիկ կրակը դառնում է հրդեհ,*
*Զանգուլի ափին, խորախոր ձորում*
*Դյումուշ կայանն է բարձրանում մեր դեմ։*
*Դյումուշ, ո՛վ, Դյումուշ, վիթխարի մի սիրտ,*
*Որ բաբախում է անվերջ, անընդհատ,*
*Ու մեր աշխարհին տալիս է և՛ խինդ,*
*Եվ ճերմակ ածուխ, և՛ ալիտակ վարդ,*
*Որ մեր գյուղերին, մեր քաղաքներին*
*Տալիս է անթիվ, անթառամ շուշան,*
*Ու շաղշաղում է՝ գերթ գալիքներին,*
*Վառ գալիքների մի ազդանշան։*

*Սրանք այն կենսաթրթիռ ու ջերմ ապրումներն են, որոնք պետք քաղել է մեր ստեղծագործ հարվածայինների հուզաշխարհից։ Սրանք այն խրախճան և խնդալի հույզերն են, որոնք վոգևորում են մեր բանվորներին և կոլտնտեսականներին, որոնք յերկրի ինդուստրացման, մեր կուսակցության հոյակապ ծրագրում տեսնում են իրենց յերջանիկ կյանքի փայլուն առհավատչյան։*

## VII

*Սարմենին հետաքրքրում է նաև անցյալի կուլտուրայի լենինյան վերամշակման, գրական ժառանգության հարցը։ Եվ պատահական չէ, որ նա այս խնդրին հետապնդում է այնպես, ինչպես Համլետին՝ հոր ուրվականը։ Անցյալի գրական ժառանգության հարցը նա գտնում է ավելի մ ե ծ ծ ա վ ա լ ո վ և կոնկրետությամբ, քան նրանից առաջ գրական համբավ վաստակած մեր մի քանի յերիտասարդ գրողները։ Եվ նա չի սխալվում նաև նրա լուծման մեջ։*

*Անդրադառնալով Խ. Աբովյանի գրական ժառանգությանը, նա տալիս է միաժամանակ հին կուլտուրան քննադատորեն վերամշակելու լենինյան թեզի պոետիկ և գեղեցիկ ձևակերպման մի օրինակ.*

*Մենք ուրանում ենք մի մասին միայն*
*Նրա բազմազան ժառանգությունից,*
*Այդ էլ մեր դարի բոցաշունչ քուրան*
*Մաքրում ենք փոշուց, ժանգից ու թույնից։*
*Հին սերունդների կերտած կուլտուրան*
*Մենք ժառանգում ենք անվերջ, անընդհատ,*

Բայց ձեռք ենք տալիս, մատնում նրան՝
Վորպես փորձագետ, հմուտ վիրահատ:
Կտրում թափում ենք՝ ինչ վոր անպետք է,
Ինչ վոր փայլուն է, բայց վնասակար,
Ու ժառանգում ենք այդ առատ բերքից՝
Ինչ վոր դեռ կապրի յերկար ու յերկար...

Այո, քան մեկ այլ խնդրում, յերևան է գալիս հեղինակի դրական կուլտուրայի աճող պաշարը: Բուն այս գործից յերևում է անցյալի կուլտուրայի հաղթահարման Սարմենի թափած արգասալի ջանքերի ակներև արդյունքը:

Հեղինակը շատ ճիշտ է վարում, յերբ մտրակում, խարազանում է ազգային սահմանափակությամբ տառապող Վարդենցներին, վորոնք մի Քուչակից, Նարեկացուց բացի, չեն տեսնում արվեստի տիտան Շեքսպիրին, Տոլստոյին, Պուշկինին կամ Սերվանտեսին:

## VIII

Հաջողված և ամբողջական գործ է «Ռաջիկի Ջնդի» պոեմը: Այս պոեմում Սարմենը փորձել է գունեղ շտրիխներով պատկերել մեր յերիտասարդության քաղաքական և բարոյական այն վերասերումը, վորին յենթարկվել եր նա, դաժան ու մռայլ վորբանոցներում, «Ամերիկյան մանդատի» և տխրահռչակ դաշնակների «անկախության» որոք: Մյուս կողմից, նա ճիշտ կերպով տալիս է ազգային հարցի լենինյան լուծման մի կոնկրետ և իրական պատկեր, վերցված մեր վոչ այնքան վաղ և այսօրվա պատմությունից: Հեղինակը կարողացել է բավական վառ գույներով նկարագրել քյուրդ ժողովրդի սոցիալիստական վերելքը, վորպես անմիջական արդյունք Հոկտեմբերյան հեղափոխության: Սարմենն առաջինն է, վոր կոնկրետ և ծավալուն նյութի հիման վրա (պոեզիայի բնագավառում անշուշտ), արծարծում է ազգային հարցի լուծման արդյունքները մեր յերկրում: Մեր խոսքը քյուրդ ժողովրդի մասին է, վորն ազատագրվեց դարավոր ստրկությունից միայն հանձինս խորհրդային իշխանության:

Սարմենը դեռ նոր է վոտք դնում գրական մշակույթի հուրհուրատող շեմքին: Նա ասպարեզ է գալիս վորոշ պաշարով, կենսուրախ և հետևողական հայացքներով: Նա իր ստեղծագործության շաղախը թրծում է սոցիալիստական ռեալիզմի քուրայում:

Սակայն նա չպետք է հանգչի իր նվաճած տակավին դալար դափնիների վրա: Ընդհակառակը, նա պետք է յերկար ու դժվարին աշխատանք թափի՝ սոցիալիստական նորակերտ ու մեծ պոեզիայի փայլուն կատարին հասնելու համար:

Մենք համոզված ենք, որ նա կգործադրի բոլոր հնարավոր միջոց-ները՝ այս ասպարեզում նոր նվաճումներ վաստակելու նպատակով:

Յուր այս յերկով, Սարմենը հաստատ և անվարան քայլերով մըտնում է գրական կուլտուրայի պատվական դաշտը, ուր նա անպայման արժանանք կգտնի, կաճի և կամրանա, գրավելով հանդերձ իր արժանի տեղը յուր գրչակիցների շարքում:

Պետհրատը խոշոր գործ է կատարում, յերբ այսպիսի խնամքով ու հոգատարությամբ աճեցնում է գրական կադրերը, հրատարակելով նրանց գործերը:

Ա. ԱԴՈՅԱՆ

# ԱՅՍ ԿՅԱՆՔԻ ՀՈՒՆՈՎ

## ՈՒՂԵՆԻՇ ՑԵՐԳ

Ինչպե՜ս սառնությամբ եպիքական
Երգեմ վերելքը մեր վիթխարի,
Երբ դասակարգը իմ հաղթական
Փոխել է ընթացքն հին աշխարհի։
Երբ տասը տարում կարում ենք անցնում
Տարածությունը մի ձիգ դարի,
Ինչպե՜ս ցնծությամբ վառ, անպատում՝
Չերգեմ խոյանքն այդ հաղթարի։

Եվ երբ լսում եմ հաստակաչափ
Հասկերի յերգն անափ արտում,
Երբ մանուկները — ժիր ու զվարթ՝
Պայծառ աչքերով ինձ են ժպտում,
Ու երբ մտնում եմ ծովն յեռանդի՝
Գործարանները փոթորկահույզ,
Ինչպե՜ս քնարովս չերգեմ մարտի,
Վորտե՞ղ պարփակեմ խինդը հոգուս։

Ու երբ բամբակի արտերի մեջ
Կոլխոզուհին ալ մի վարդ դարձած՝
Կանգնում է հպարտ և լայնալանջ՝
Աչքերում արեն անդրադարձած.
Եվ երբ տեսնում եմ մեռնող չութը՝
Խորհրդանիշը աղքատության,
Ես ինչպե՞ս պահեմ բորբոք սրտում
Հնչյուններն անզուսպ ուրախության։

Ու յերբ տեսնում եմ հիմնահատակ,
Փոշիացումը հին տների,
Շենքերը շարան ու բազմահարկ
Տիրում են տեղը խրճիթների,
Յեվ յերբ լամպերը ելեկտրական
Ծաղկում են մթնում գիշերային,
Ինչպես մեղմություն երկնքական
Այդ տեսարանին հանդարտ նայեմ։

Ու յերբ տեսնում եմ նոր կյանք կերտող
Այգերը բազում ու բազմազան.
Մտաիրտ ու հաշտ, աչքերում՝ շող,
Յեղբայրությամբ կուռ ու անսասան.
Յերբ բոցկլտում են յեռանդից վառվող
Կոմյերիտական միլիոն աչքեր,
Ինչպես անձնեմ սրտիցս ժայթքող
Հրճվանքի, յերգի քաղցր կանչեր։

Յերբ, ինչպես ալիքն ավկիանոսում,
Դասակարգին մեջ ձուլված ե յես՝
Արևոտ շենքի քարն եմ տաշում,
Ձեռքերով իմ արևակեզ.
Յեվ յերբ տեսնում եմ՝ բարձրանում ե
Մեր կերտած շենքը վեհ հասակով,
Ինչպես նրան չփաղջունեմ
Ծնծաղին հազար խոր հրճվանքով։

Հնարավոր ե, չբոցկլտալ,
Յեվ մտերմորեն ձեզ չողջունել,
Ո՜, դուք տիպար հերոսության,
Անվեհեր, խիզախ տղաչուներ.
Յեվ ձեզ՝ հյուսիսի արկածալի,
Ծրատաշունչ ուղին հարթողներից,
Ինչպես չձոնեմ ջերմ, ցնծալի
Լիրիքական յերգ ու սրտի խինդ։

Ինչպե՜ս լռությամբ մոտենամ քեզ,
Աշխարհը փոխող աննկուն մարդ
Եվ ինչպե՜ս քեզ հետ, յերգս ու յես
Գրոհի չելնենք, չմղենք մարտ.
Ինչպե՜ս նայեմ յերջանկությանդ
Անկողմնակալ ու անտարբեր,
Ինչպե՜ս կարող եմ քո խնդությամբ
Նյությամբ համայն չայրվե՜լ, չարբե՜լ...

Երբ լայնարձակ, գոռ ալիքանում
Մեր նավն է վարում հանճարը մեծ,
Ու եվ վոչ մի խութ չի սասանում
Սուրացող նավը մեր հողմածեծ.
Եվ յերբ անցնում ենք դժվար ուղին
Քայլերով հսկա ու մարտական,
Ինչպե՜ս չերգեմ մեծ հաղթողի
Թռիչքի թափը տիտանական։

Ու յերբ տեսնում եմ՝ արեակամ
Այս ջինջ որերի աչքերի մեջ
Անդրադառնում է մեր ապագան
Իր փարոսներով վառ ու անշեջ.
Ահա փռվում է աչքիս առաջ
Լուսե գալիքը՝ վորպես ներկա,
Ինչպե՜ս չերգեմ բազմաշառաչ,
Մշտածիծաղ մեր ապագան...

## ՁԱՅՆԵՐ ԳԱԼԻՔԻ

Ես ամենուրեք լսում եմ պայծառ,
Երջանիկ կյանքի — գալիքի ձայներ...
Տեսնում եմ, ահա, բյուր նորատունկ ծառ,
Արտեր լայնածիր, վոր նոր են ցանել.
Տեսնում եմ, ահա, անդուստ գետերի
Ջրերը սանձող բազմազգի մարդկանց...
Ու ծիծաղում են լույսի լամպերի
Կախված պարանները՝ գյուղերում ծաղկած։
Տեսնում եմ, ահա, պիոներներ կայտառ
Ու հերոսների այնքան արձաններ,
Եվ ամեն կողմից լսում անդադար
Շողշողուն կյանքի — գալիքի ձայներ։

Տեսնում եմ, ահա, սառցահատ նավեր,
Վորոնք բացում են աշխարհներ անհայտ,
Ստրատոստատն է ճախրում դեպի վեր,
Արծիվներից էլ է վեհ, և հպարտ...
Տեսնում եմ, ահա, նոր մարդիկ, նոր սեր
Ու հին հույզերի անվերջ փլուզում.
Վո՞ր դարն է այսքան նոր յերգեր հյուսել,
Այս ինչ ուրախ է հնչում մեր լեզուն։
Ի՞նչ գրոհ է սա, ո՛, ինչ ցնծություն,
Աշխարհն են փոխում անթիվ միլիոններ,
Ու ամենուրեք լսում եմ խնդուն,
Արևոտ կյանքի — գալիքի ձայներ...

## ԱՊԱԳԱՆ—ՆԵՐԿԱ

Մի լեռնային լճի ափին
Ու լայնանիստ սարահարթում,
Սալերի տակ ճերմակ ամպի՝
Մի նոր քաղաք էր դղրդում։
Հանդիպում են այդ քաղաքում
Գնացքները արագընթաց,
Ու ռելսերն են գիլ գլնդում,
Լուսաբացից մինչ լուսաբաց։

Անց՝ են կենում կայարանից
Ուղևորները բազմահազար,
Փողոցները — պայծառ ու մեծ —
Աղմկում են գիշեր ու զոր...
Ու քաղաքից դեպ մոտակա
Հանքահորերն բազմաբեղուն —
Սլանում է էլեքտրական
Նորակառույց յերկաթուղին։

Մարմարահատ բանվորների
Յերգը հնչեղ ու հորդահոս
Ցնցում է սիրտը լեռների,
Ինչպես հեղեղն վորոտախոս։
Զայնակցում է այդ հաղթ յերգին
Թանձր անտառը հողմահար,
Ու նրանց հետ մի մեծ յերկիր
Իր վերելքը յերգում է հար։

Ապրում են այդ քաղաքում
Բյուր մանուկներ ժիր ու խաժամ,
Պատանիներ լայնաթիկունք
Ու աղջիկներ արևանուշ։
Այգիներում վարդեր, վարդեր՝
Յեվ յերփներանգ, և՛ շողշողուն,
Հեռվում ծփուն, հասուն արտեր —
Ու վոսկեհասկ ծանր ցողուն։

Այս քաղաքը ժամանակին
Կոչվել է գյուղ — Ցելենովկա,
Ջուր է մաել արեծագին
Ծեր պյուղացին — ձեռքին ուռկան։
Ցուր թշնամու, ու ծովի դեմ
Մաքառել է — հացի համար...
Այժմ կյանքը վառ կերտում են
Հզորազոր բյուր կոմունար։

Լճի կապույտ ու պարզ ծոցից
Խոր փորել են փրփուր մի գետ,
Դարձել է նա են ոռվանից
Հորդ լույսերի հանգուցակետ։
Ու հոսում է ջուրը վարար,
Իջնում է լիճն — վեհությունից,
Բարախում է կուրծքը նրա՝
Վորպես հուժկու, հանճարեղ սիրտ։

Քաղաքի դեմ կատարը ցից,
Ինչպես գլուխը հովազի,
Դուրս է ցատկում ծովի ծոցից
Կանաչազարդ մի հին կղզի։
Հնադարյան բլրի լանջին,
Ուր յեղել է յեկեղեցի,
Բարձրանում է աչքերով ջինջ
Շենք մի լուսե ու գեղեցիկ։

Իսկ ներքևում — ծառուղիներ,
Սանատորիան՝ լուսավառ,
Շատրվանն է ընդվզում վեր՝
Յոթ գույներով գլորվում վար:
Մարդիկ՝ շուրջը շատրվանի,
Ծառերի տակ — նստած խաղաղ,
Նայում են այդ ծիածանին
Ու հրճվում են ջրի խաղով:

Ու աշխարհում մեր լեռնաստան,
Ուր ձորերն են հանգուցվում խոր,
Կարծես կանչը ուրախության,
Ճիչն է լսվում յերկաթուղու:
Ծխնելույզի անտառներից
Ծուխն է փռվում լճի վրա...
Քանի՛ պոետ կա յերազած
Այս օրերը և՛ ջինջ, և՛ վառ:

Հասել եմ յես այս օրերին,
Ու արցունքի ել վոչ մի լար
Չի ծանրանում իմ քնարին,
Իմ քնարին՝ արեվի պես վառ:
Նրա համար եմ յես խնդուն,
Ու քնարս չի տրտնջում.
Ո՜, յերկիր իմ, քո վեհ յերթին
Սրտապարար վողջո՜ւյն, վողջո՜ւյն:

## ԼԱԹԻՖԱ

Յես ու Լաթիֆան—խաժակ քրդուհին,
Մի հանրահռչակ ճարտարապետ,
Հեծած սև ձիեր, ձիերն ամեհի,
Կտրում անցնում ենք սար, ձոր ու գետ.
Ուղին դարիվեր, վոլորապտույտ,
Ժայռերի շուքն ե ընկել վրան,
Դիմացից՝ դեպի յերկինքը կապույտ՝
Հատակն ե ցցվում խրոխտ լեռան։
Գարնան գիշեր ե. ցոլում ե վերից
Լուսինը՝ վորպես հսկա գոհար,
Կայծեր են ցայտում սուր հարվածներից
Խճաքարերը սմբակահար։

Հանդարտ գնում ենք Ստալինաբադ,
Հայրենի գյուղը ընկերուհուս,
Լաթիֆան այնպես հուրհուրան, հպարտ
Յերգում ե վճիտ ու սրտահույզ։
Յերգում ե նա նոր քրդական մի յերգ՝
Յեվ բազմահնչյուն, և՛ հորդաբուղխ.
Ո՜, այդ յերգում կա ցնծագին վերելք,
Նոր մարդ, նոր աշխարհ, նոր կյանք, նոր գյուղ...
Ո՜, այդ յերգում կա արևելյան բույր,
Ու վեհությունը մեր լեռների.
Սրտի ակունքից, զերթ հստակ աղբյուր՝
Պռոթկում ե նա՝ կարկաչով լի...

Վառ գեղեցկությամբ մի լիալուսին
Լողում է յերկնի կապույտի մեջ,
Ցեվ նա հանդարտվում ու կարդում է ինձ
Իր կյանքի գրքից մի դյութիչ եջ։
Նա պատմում է ինձ, ինչպես մի գիշեր,
Ցերբ հողմն եր թակում դռները փակ,
Ցերբ մարել եյին ճրագի լույսեր,
Ներսում վառվում եր բուխարին բարկ,
Ինչպես այդ գիշեր յերազուն նստած՝
Պատկերել է նա նախագծեր,
Ցեվ առավոտյան լույսը չբացված՝
Նոր գյուղի հիմքն է հաստատ գցել...

Ու հիմա այնտեղ, ուր կուտակվում են
Կապար-ամպերը կայծակնածին,
Ուր շղթան փշրած բքաշունչ քամին
Թռչում է ինչպես մոլեգնած ձի,
Ցեվ ուր գետերն իրենց սլացքին
Վերահաս ցրտից համրանում են,
Ուր ծաղիկների գորգերով անգին
Լեռները գարնան պճնվում են,
Այնտեղ ընկած է նորաշեն մի գյուղ՝
Շենքերով շողուն ու բազմահարկ։
Ցերբ նոր եր շիկնում արևը ծագող,
Ընկերուհուս հետ այդ գյուղն հասանք...

. . . . . . . . . . . . . . . . .

Ահա կանգնել ենք մի գեղածիծաղ,
Լուսալի շենքի բուրոտ բակում,
Մեր գլխի վերև մի հոյակապ ծառ
Իր ճյուղերի տակ բակն է ծածկում։
Շենքից դուրս գալով մոտենում է մեզ
Ալեհեր, ժպտուն մի ուսուցիչ,
Ձեռքս է սեղմում հին ծանոթի պես՝
Ցեվ ջերմագգաց, ե՛ւ սիրալից։

Ու մենք միասին անուշ զրույցով
Շրջում ենք բակում այդ լայնարձակ,
Չորս կողմը բուրմունք, ծաղիկների ծով,
Իսկ ծաղկի ծովում — մի վեհ արձան։

Մինչ մենք շրջում ենք՝ հնչում է զանգը,
Ու դուրս է թափվում խինդի հորձանք.
Սիրտս կապում է, ինչպես յերկինքը,
Գարնան գունազեղ մի ծիածան։
Բակը նախշում են այնքան մանուկներ,
Վառ պատանիներ — ուշիմ ու կիրթ,
Նրանց սրտերում — կյանքի խարույկներ
Աչքերը շողուն՝ ինչպես հակինթ։
Իզուր չի կորչում և վոչ մի վայրկյան,
Սկսվում է ահա ճկուն մարզանք...
Կոլեկտիվ վոգի, կոլեկտիվ կյանք,
Արևոտ աչքեր, սրտի հուզանք։

Ներկա յենք լինում մենք Արևելքի
Գրականության ուսուցչի դասին.
Դասատու Ֆաթման, մի նորակերտ կին՝
Յերբ վերլուծում է մեծ Ֆիրդուսուն։
Մայրենի լեզվով կարդում են նրանք
Հատվածներ, յերգեր «Շահնամե»-յից,
Ու վորպես զուլալ լեռնային վտակ
Հոսում է խոսքը ակունքներից։
Ու Հայնեյին են յերբեմն հիշում,
Քաղվածքներ բերում Հոմերոսից.
Ո՛, այս դեմքերը աստղանախշուն
Յերկինքների պես — գերում են ինձ։

Ուր վոր նայում ենք՝ մաքուր է ու ջինջ,
Դասարաններում՝ լույսերն առատ,
Ու ներս են նայում պատուհաններից

Մեր վեհ լեռները անտառապատ։
Մեզ առաջնորդող սևաչ քրդուհին,
Որ բժշկոս է այս գյուղում
Առաջարկում է այցելել մի հին,
Հարուստ թանգարան — հին ամրոցում։
Յերկնակամարում վոչ մի ամպի բիծ,
Կապտավուն ծովն է վառվում անբոց,
Յեվ մենք դուրս գալով գյուղի բակից,
Ուղևորվում ենք դեպի ամրոց։

Թանգարանը գյուղի, հոյակապ մի շենք՝
Ընկել է բլրի ստորոտում.
Յես ու ընկերս բարձրանում ենք՝
Մերթ մտամոլոր ու մերթ ժպտուն։
Լեռների վրա մեր այս բարձրաբերձ
Գարունն է փթթում խոր խնդությամբ,
Ու արշալույսն է բոցկլտում անբիծ
Գույների, շողքի առատությամբ։
Յեվ բորբոքվում է սիրտը արևի,
Որպես յերկաթի հսկա հալոցք,
Կարծես թե մեկը կապույտ վերևից
Ոսկե շողեր է թափում խուրձ-խուրձ։

Պատմում է նա ինձ այրող հուզմունքով
Սիամանթոյի սիրո մասին, —
Խաջեյին սիրել ու մաքառումով
Հաղթել է դառող եվ Աղասուն,
Մենակ կռվել է տերերի դեմ,
Ընչազուրկ, անհող, այդ սեգ տղան,
Անվրեպ նետով փշրել է, ջարդել
Իշխանազուններ, բեգ ու աղա,
Ու բարձրացել է Սիփանա քարին,
Վայրի այծերին ընկերացել,
Գերի յե դարձել Խաջեյի սերին
Այդ կորյուն տղան — արծվացել։

Ո՜, պատմում է նա մի հերոսավեպ՝
Ճորտի գլուխը տերերի դեմ,
Պատմում է սրտանց ու բուրումնավետ՝
Շնչավորելով ամեն մի դեպք։
Պատմում է այնպես հմայիչ վաճով,
Որ ունի խոսքի այրող դյութանք.
Ես տարվել էի անուշ անրջով,
Երբ թանգարանի խորքը մտանք,
Ուր այնպես մռայլ ու տխրաթախիծ
Պատկերն է բացվում մի աշխարհի,
Ու տարիների ծանրության տակից
Տխուր նայում է անցյալը հին։

Ահա հին սայլը, արորը ծուռ վիզ,
Ձեթի ճրագը — արցունքոտ աչք.
Ու լուծը վզին մի չալճակատ յեզ՝
Նայում են, վորպես մտապատրանք։
Բայց իմ աչքերը ինչ վոր մի բանի
Մեխվեցին մեկեն նիզակի պես, —
Մահակը ձեռքին մի քյուրդ չոբանի
Նկարն է կարել զիգզագ ճամբես...
Շարերը մաշված ու խայտաբղետ,
Բոլորը՝ վորպես ձյունոտ կատար՝
Զրուցում են իմ խոհուն մտքի հետ
Ու պատկերում են մի անցած դար...

. . . . . . . . . . . . . . . . .

Շրջում եմ գյուղը ու խորագնին
Դիտում եմ դեմքերը նորագիծ,
Եվ չի դայլայլում յեղեգնյա շվին
Իր լացող «լոլո»-ն դառնակսկիծ։
Ո՜, գարնանային այս լուսաբացին
Ժպտացող աչքեր այնքան, այնքա՜ն
Երգում են քյուրդ բանաստեղծի
Երգերը հուզիչ, հերոսական։

Նրանց խնդության խենթ հորձանքներում
Պայքարի շեշտ կա, վերելքի թափ։
Հնչեղ զնգում է նրանց յերգերում
Գալիքը այնպես պայծառությամբ...

Կոմունար քյուրդը մայրենի լեզվով
Հոմերն է կարդում մտասուզված,
Ու աղջիկները հաճելի նազով
Աշխատանքի մեջ այնպես թրծված՝
Հետո խոսում են համաշխարհային
Խնդիրների շուրջ և՛ պարզ, և՛ խոր,—
Ո՞ւր են գյուղական ապշությունը հին,
Հարսները համր ու գլխակոր...
Նրանք էլ չկան, կորել են անհետ,
Ինչպես մի մռայլ ամպամած օր,
Ու յերբեք, յերբեք էլ չեն դառնա հետ
Այդ գորշ օրերը — տխուր անցորդ։

Ո՞ւր են քրդական վրանաբնակ
Հովիվները խեղճ ու վաչկատուն
Էլ չեն յերևում, էլ չկան նրանք
Մեր այս լեռների ստորոտում։
Ո՞ւր են, ուր կանայք — կեղտակուր, անտաշ
Յեվ անգրագետ, համր ու լռին...
Նրանք էլ չկան, անցել են անդարձ,
Ինչպես ձմեռը մեր՝ լեռնային։
Ուր են ցեղական վրիժառության
Սրամարտերը արնավարար...
Յերգիր, Լաթիֆա, յերգիր բարձրաձայն,
Յերկինքը ջինջ է, օրերը՝ վճռ...

## ՏՈՆԱԿԱՆ ԳԻՇԵՐ

Ծանրանիստ ուսերին ծեր Արագածի,
Ինչպես ձյունափայլ կատարը լեռան՝
Վեհությամբ հմայուն ու յերազածին՝
Բարձրանում է մի նոր աստղախարան.
Մի զողարիկ ձեռակերտ, հոյակապ կոթող
Ու ճարտար արվեստի հազվագյուտ ախոյան,
Վոր այնպե՛ս գրավիչ, այնպես հողեթով
Նայում է աստղերին — հաղթ ու տիրաբար։

Ու այսօր տոնական նրա բացումին
Թմբուկին զարկին են նոր «ուխտավորները»,
Զարկերում թնդում են խենթ արբեցումի,
Արևոտ սրերի նվագներ, յերգեր։
Նստել եմ զովաշունչ մի պատշգամբում,
Մանթաշի ծաղկառատ ձորի յեզերքին.
Սարերի վերևում յերկինքն է ամպում
Դեմքը մերթ մռայլում, մերթ պարզում կրկին

Մեղմորեն հանգչում է վերջալույսը վառ,
Ու հեռվում հովիվն է սիրաբաղձ յերգում.
Հիասքանչ աչքերով, հոտավետ, զվարթ
Փռվում է Շիրակի չքնաղ յերեկոն։
Մտքումս խոհերի զինավառ գնդեր՝
Յես էլ եմ բարձրանում դեպի Արագած,
Յերկու լավ ուղեկից ընկեր եմ գտել՝
Մեկը հին վարորդ, մյուսը՝ դաշնակահար։

Մեր ճամբին ընկած են սեպաձև ժայռեր
Ժայռեր զարավոր, մամռապատ, մռայլ,
Աստղերի հմայքն է մեր հոգին այրել,
Կարծր ենք այս տանին սանձասիրտ ձեռը։
Մոլորման կրակը հավետ վառ պահած՝
Ցելնում ենք ուղին այս օձագալար,
Վերևից նայում են լեռներ սիգապանծ,
Ներքևից՝ լայնեղախ անդունդներ խավար…

Վարարումը պատմում է մի արկածալից
Ու հեքիաթանման սիրո պատմություն.
Վոչխարի հոտերն են մոտակա սարից
Շարքերով քայլերով վերադառնում տուն։
Ու նախկին դառնացած տառապաշխը այս
Ցերկնքի տաղտուկ պահն է կարդում.
Մերկալանջ լուսինը—սահուն, հեզանազ,
Կախարդիչ կնոջ պես նայում է, ժպտում։

Անցնում են նույն ճամբով ուսանող խմբեր,
Ցեկել են բանվորներ հանքերից մոտիկ,
Գետինը դոփում են մի խումբ հանքափոր,
Զլապինդ, առնական ու խրոխտ մարդիկ.
Աստղերի աչքերն են մեր սիրտը գերել,
Մտքերին տվել են արծվային թռիչք,
Կտրում են ձորերը խորախոր, անել—
Վորպես պիրկ աղեղ՝ լարած ջանք ու ճիգ…

Ու ահա կանգնել ենք լայն հրապարակում,
Ուր վեր է խոյանում շենք մի սրածայր,
Ծնդության յերգերի հուրն է համակում
Գիշերը, աշխարհը ու սիրտս պայծառ
Իջնում են վերալաց աշտարակից ցած
Ուխտավոր ջահելներ — զույգեր թևանցուկ,
Մի սևաչ դեղուհի այնպես է հուզված,
Վոր լուռ թափում է հրճվանքի արցունք։

Ճեղքելով բազմության անտառն ալեկոծ՝
Ես վեր եմ բարձրանում կարոտով անզուսպ.
Սրընթաց ընկնում է լազուր յերկնքից
Բանկուն կայծերով հուրհեր մի առու։
Ներսումն եմ։ Հոգիս լի հրճվանքի բոցով
Դնում եմ աչքերս հեռադիտակին.
Բացվում է անսահման, հարաշարժ մի ծով —
Աստղանախշ, նըրբակերտ գորգը յերկնքի։

Հիասքանչ բնության վեհության առաջ
Ուռճանում է հոգիս ու անհունանում,
Հայացքս նոր ավյուն, նոր թևեր առած՝
Այդ ուր են, ուր են այդպես սավառնում։
Տես, այդ ինչ հմայիչ աչքեր են փայլում,
Ո՞, նրանք անծանոթ աշխարհներ են մեծ,
Աստղեր են հեռավոր, հավետ թափառուն,
Վոր այդպես հմայում, մագնիսում են մեզ։

Սակայն այդ աչքերից ավելի դյութիչ,
Ավելի գերող են աշխարհն այս պայծառ,
Այդ դաշտերն անսահման, այս յերկինքը ջինջ։
Այս կյանքը, ա՛, կյանքը՝ ծաղկած դալար ծառ։
Ու ահա իջնում եմ աշտարակից ցած,
Նստում եմ մոտակա ձորակի ափին,
Մտքերիս ալեծուփ ովկիանն ընկղմված՝
Նայում եմ մեր կորած խորդուբորդ ճամփին։

Հուշերիս ճեպընթաց գնացքը նստած՝
Կտրում եմ պատմության վոլորուն ուղին.
Բարձրանում է իմ դեմ հավիտյան անդարձ
Անհունում խոր թաղված անցյալը մեր հին։
Տեսնում եմ դղյակներ — շքեղ, վեսկեառ,
Իշխաններ հայկական և՛ փոքր, և՛ մեծ,
Տիկիններ փափկասուն, աղջիկներ մարմար —
Ցոփության, վայելքի, կրքի ծովի մեջ...

Ու անվերջ հոսում է թանկարժեք գինին.
Ցնծում են տերերը «յերջանիկ» յերկրի,
Ո՞ւմ ինչ փույթ, վոր անթիվ տղամարդ ու կին
Այրում են հյուղերում՝ կարիքին գերի։
Ո՞ւմ ինչ փույթ, վոր անսեր, անշուք անկյունում
Մեծաշուք ու շվայտ մի հին վոստանի
Սովահար մեռնում են, դեղնում, թառամում
Տերադեմ, վոսկրացած հաղմը պատանի։

Ո՞ւմ ինչ փույթ, վոր չարքաշ չութի գյուղացին,
Վողջ տարին թափելով քրտինք ու արյուն,
Միշտ կարոտ է մնում մի պատառ հացի
Ու կյանքում չի տեսնում խնդության գարուն։
Ո՞ւմ ինչ փույթ, վոր ծեծի, ահի ճանկերում
Անապատ ռամիկն է տառապում անլուր,
Ո՞ւմ հոգն է, վոր հարուստ, «յերջանիկ» յերկրում
Մուրացիկ մարդիկ են շրջում ամենուր...

Պալատում, դղյակում — մոլի խրախճանք,
Ճորտատեր վանքերում՝ անզուսպ ղեխություն,
Իսկ կյանքի հատակում՝ մահացու տանջանք,
Ցավ թախիծ, և՛ կսկիծ, և՛ հիվանդություն...
Բայց մրոտ, անարև, անթիվ հյուղերում
Մեծանում է ցասման, վրեժի վոգին,
Վոր մի օր ընդվզի՝ յելնի — աններում,
Վիրավոր վագրի պես՝ խենթ ու մոլեգին...

Ու ահա տեսնում եմ, վոր ուխտ է գնում
Այդ տանջված, ժրաջան, խավար գյուղացին,
Վանքերին, սրբերին նվեր է տանում՝
Ծիծաղը խառնելով սրտառուչ լացին։
Ո՜, մեկը տանում է իր միակ մաքին,
Մի ուրիշն՝ իր ազիզ յեզը սևաթույր,
Տես, ահա, ծայրահեղ չքավոր մի կին
Իր միակ չալ հավն է տանում սրբի դուռ։

Ո՜, անդարձ գնացած օրեր զմնդակ,
Իղձեր եք հույզերի գետը պղտորում.
Ես հիմա տխրում եմ վառ արևի տակ,
Մայիսյան վարդերն են սիրտս զարդարում։
Ես հիմա լսում եմ յերջանիկ յերկրիս
Տոնական գիշերվա յերգերը զվարթ,
Յերջանիկ յերկրիս հետ ցնծում է հոգիս,
Հոգուս հետ ցնծում են սար, անտառ ու արտ։

Տեսնում եմ՝ վառվում են աստղերից էլ վառ
Լույսերի լամպերը՝ շողշողուն վողկույզ,
Ու վորպես գինասաղ, վորպես յերիվար՝
Ելեկտրաքարշն է թռչում գյուղից գյուղ։
Ել չկա հայկական յեզասայլային
Ու մահվան թափորի դանդաղկոտությամբ
Իր տարը ահասող չուլթի գյուղացին,—
Նա հիմա հեծել է ելեկտրական ձին։

Լույսերի լամպերը՝ կարմրավառ կակաչ՝
Նախշել են խավարը կես գիշերային,
Սակայն դեռ հնչում է մեր քաղցրակարկաչ
Սպենդիարյանի չքնաղ յեղելին։
Այդ յերգը հնչում է դարձյալ սրտահույզ,
Ինչպես մանկության ժամանակներում.
Ո՜, վողջույն քեզ, վարպետ մեծ ու Նորբանյան
Այդ սիրտս է կարկաչում քո ջինջ յերգերում։

Ձորերում լսվում են հար ու անդադար
Դեպանուշ ձայները անտակյան յերգի,
Աստղերով, արևով ու իր խորությամբ
Յերկինքը պոկել ենք ու թափել յերկիր։
Աստղերի նվաճման տոնն է այս գիշեր,
Արվեստի, գիտության, հերոսության տոն,
Ցնծության կրակն է իմ սիրտը կիզել,
Վողջո՜ւյն քեզ, գիշեր, գիշե՛րն իմ խնդուն։

## ԶՈՆԵՐԳ

*(Ղուկաս Ղուկասյանի հերոսական հիշատակին)*

Աշուն է Բերքառատ, բերկրալի աշուն։
Նստել եմ պուրակում մտախոհ ու լուռ.
Մաքրաջինջ յերկինքը, վորպես մի անհուն,
Անսահման ովկիանոս՝ խաղաղ է ու լուրթ։
Իմ շուրջն ամեն կողմ ծիծաղում են արդ
Ծաղիկներ, ծաղիկներ՝ և՛ գունեղ, և՛ վառ.
Արևը վերևից այնպես ձեռնառատ
Վոսկեշող անձրև է հորդում — թափում վար։

Պուրակի կենտրոնում աստղադիտարան,
Իսկ շուրջը, շողշողուն շենքեր ու շենքեր,
Մեղմ հովից թփերը փարում են իրար,
Առվակը կարկաչով ճամփա յե ընկել։
Մոտակա ծառուղով անցնում են արագ
Կենսախինդ աղջիկներ, ջահելներ թիկնեղ,
Բորբոքվում է, վորպես դյութական մի այգ՝
Իմ յերկրի առօրյան մեծ ու փառահեղ։

Ու ահա խայտալով՝ զերթ պարող ալիք,
Մշտավառ ժպիտը խաղում աչքերում,
Թևի տակ պայուսակ, ձեռքին խաղալիք,
Անցնում է մի աղջիկ գանգրահեր, սիրուն։
Անցնում է աղջիկը… բայց մի այրող հուշ
Տիրում է մտքերիս, հույզերիս, հոգուս.
Հիշում եմ քրոջս աչքերը խաժում
Ու գանգուր վարսերը սևաթույր վողկույզ։

3*

Հիշում եմ։ Աշուն էր, սոսկալի աշուն։
Անհաց էր, անկրակ մեր խրճիթը խարխուլ.
Հեկեկում էր քամին, ինչպես կույր աշուղ,
Մեր յերդը լալկան էր, անարև, տխուր։
Թաղմաղաշտ էր գնում քրտնաջան գյուղացին,
Եվ վոչ վոք չէր հերկում արտերը խոպան,
Ցերեկները կարոտ էր մի պատառ հացի,
Սարերում չէր յերգում և վոչ մի չոբան։

Հիշում եմ այնպես վառ՝ կարծես յերեկ էր,
Ունեյի մի չքնաղ, լուսաժպիտ քույր,
Հայացքը գարնային խնդուն ցերեկ էր,
Հոնքերը թռչնի թև, մազերը գանգուր,
Ո՜, նոր էր կոկոնում, հասակ առնում նա,
Յերբ բուքը մահաշունչ մեր դուռը ծեծեց,
Ու սովը ժանտատես մի գողի նման,
Մեր խրճիթը մտավ՝ վորպես կրծող ցեց։

Նիհարեց, գժգունեց իմ քույրը բոկոտն,
Աչքերը փոս ընկան, հուրերը հանգան,
Ցավ աշնան տխրամած մի ցուրտ առավոտ
Նա մտավ անկողին՝ հիվանդ ու անկար։
Որերով տառապեց, անընդհատ հազաց,—
Խրճիթը խոնավ էր, հատակը՝ քարոտ,
Ու յերկրիս հուրհրան այգը չտեսած՝
Մահացավ իմ քույրը՝ սև հացի կարոտ։

Անխնա հնձում էր սովի գերանդին...
Ո՜, քանի մանուկներ մեռան սովահար,
Իշխում էր բռունցքը ժանտ խմբապետի,
Մեր կյանքը գիշեր էր արնալի, խավար։
Ու չկար վոչ մի վառ ապագա մեր դեմ
Բռնության ճիրանն էր մեր շունչը խեղդում,
Մեր սրտում դառնորեն մահացող վարդեր,
Չունեյինք վոչ ծիծաղ, վո՛չ սեր, վո՛չ խնդում։

Բայց ահա հուշերիս նժույգին նստած՝
Մտքերս թռչում են հեռու, շատ հեռու.
Հիշում եմ մի չքնաղ, մի վեհ լուսաբաց
Այդ դժնի, մահահոտ և ցուրտ օրերում։
Հիշում եմ մայիսյան օրերը Ղարսում,
Նրան եմ վերհիշում այդ խիզախ հերոսին,
Տերերի, հնի դեմ մարմնացած ցասում՝
Այդ խոհուն, խանդավառ մարտիկ Ղուկասին։

Աշուն էր Վոսկեսարս, ցնծալի աշուն,
Ու առուն է յերգում մեզ, քաղցրակարկաչ,
Հիշում եմ Ղուկասին, մեր այդ բոցաշունչ,
Այդ ըմբոստ, այդ կրակ ապստամբին քաջ։
Հիշում եմ մայիսյան մարտն հերոսական,
Օրերը փոթորկոտ, անդուլ, հողմածեծ...
Հիշում եմ հարվածը մեր մասսայական,
Վարն զաղիր, բարբարոս կարգերը ցնցեց։

Հիշում եմ կռիվը Արգինեյի մոտ,
Ո՜, մարտը դաժան էր ու անհավասար...
Ընկնում է ահա, վիրավոր, արնոտ,
Անվեհեր, անձնազոհ մի յերիտասարդ։
Ընկնում է Ղուկասը հեռավոր ձորում
Թշնամու կրակի հորդ կարկուտի տակ.
Ո՜, նրա բորբ վերքից արյուն է ծորում,
Մարում են աչքերը և դյութիչ, և բարկ...

Ընդվզման կրակը վառվեց մեր սրտում,
Փրփրաց, փոթորկեց ծովը ցասումի
Յեվ ինչպես վոր գարնան գետերն են հորդում՝
Փռվեց մեր հողում և արնավառ, կարմիր
Գյուղերում, հանքերում, գործարաններում։
Մեծացավ ու կոփվեց պայքարի վոգին,
Ու ըմբոստ գնդերը մեր խոր ձորերում
Դարավոր զայրույթով բարձրացան վոտքի։

Ու յեռան գրոհի հին աշխարհի դեմ,
Փշրեցին կարգերը ժլատ ու բռնակալ,
Եվ մինչև այսօր էլ գրոհում են դեռ
Մարտական շարքերը մեր հաստատաքայլ։
Նոր պայքար, նոր կռիվ հին թշնամու դեմ,
Մաքառում յերջանիկ գալիքի համար,
Եվ ո՞վ կարող է մեր կերտածը քանդել,
Հանգցնել մեր վառած կրակներն անմար։

Ու ահա լսում եմ յերգը մուրճերի,
Հղկում են վիթխարի գրանիտ քարեր
Ինչ անուշ է հնչում կարկաչը ջրի,
Ինչ ուրախ է այս սուս վարպետն ալեհեր։
Նա զվարթ հարթում է քարերը վայրի
Եվ նրանց տալիս է նոր տեսք ու նոր փայլ,
Որ վաղը բարձրանա նրանց կատարին
Սիրելի Ղուկասը՝ վեհ ու հաղթաքայլ։

Ու ահա կանգնել է կուռ պատվանդանին
Ղուկասի արձանը խրոխտ, ահռաբար
Հասարակ, բայց վեհ մի դրոշակիր՝
Աչքերով վառվռուն ու արևափայլ։
Ու նայիր, ինչ համառ, ինչ հաստատակամ
Գրոհի յե գնում հերոսն անվեհեր.
Ո՜, այդպես — վեհորեն, այդպես հաղթական
Լենինյան արծիվը է ճախրում դեպի վեր։

Այդ բոցոտ, ռազմաշունչ ապարատակյանին—
Քսանմեկ տարեկան Ղուկասին պայծառ
Հաղթական յերկիրս ձեռքով մարդկային
Կերտել է անխորտակ մի վեհ հուշարձան։
Իր թևին հրացան, մարտական դիրքում,
Արևոտ աչքերը գալիքին հառած՝
Յերջանիկ օրերի կարոտը հոգում՝
Նա հաստատ հավատով նետվում է առաջ...

# ՌԱԶԻՅԵ ՋՆԴԻ

*(Պ Ո Ե Մ)*

*Մի գեղածիծաղ, աստղալի գիշեր,*
*Հեռավոր, անհայտ, մոռացված գյուղում,*
*Խաշնարած Ջնդու հինավուրց հյուղում*
*Լսվեցին լացող նորածնի ճիչեր,*
*Ու աշխարհ յեկավ մի սևաչ մանկիկ,*
*Որ այս պոեմիս հերոսը դարձավ,*
*Ու մաքառումով կյանքի հատակից*
*Լեռան կատարը յելավ բարձրացավ,*
*Որ խիզախորեն իր նավը մղեց*
*Ընդդեմ փոթորկի, ալեկոծության,*
*Որ... սակայն լսեք վիշտն ու խինդը մեծ*
*Իմ այս տողերի նվագածության...*

*Խաշնարած Ջնդու անշուք խրճիթում*
*Ծնվեց մի տղա, անունը Ռազի։*
*Այն Ջնդին ուներ մի շուն, մի կատու,*
*Մի քանի վոչխար, մի սիրուն աղջիկ.*
*Այն Ջնդին ուներ մի հոգեզմայլ,*
*Չնաշխարհիկ կին՝ անունը Զոզան.*
*Այն Ջնդին ուներ մի ալեզարդ մայր*
*Ու մի պառավ տատ՝ անունը Սայրան։*
*Լեռների լանջին, ժայռի ստվերում*
*Մի արտ էլ ուներ այդ հովիվ Ջնդին.*
*Ո՜, նա ուրիշի չութով էր վարում*
*Այդ հողամասը՝ ուժատ, անջրդի։*

Հովիվ էր Զնդին հիսուն տարեկան,
Սակայն մազերում՝ ոչ մի ճերմակ թել,
Մանուկ օրերից այդ պարթև հսկան
Լոկ փրփրացող թարմ կաթ էր կթել,
Ծծել լեռնային օդը կենսարեր,
Աղբյուրի ջուր էր ըմպել անհագուրդ,
Ծաղկի բույրով էր մեծացել, որպես
Այդ ծեր — ջահելը, այդ հովիվը քյուրդ։
Իր չոբան հորից ժառանգել էր նա
Նամուս, քաջություն, հյուրասիրություն.
Ոչ մեկ չէր կարող չարաչք մոտենալ —
Զնդին իր հոտին հսկում էր արթուն...

Ահա այն օրը, երբ ծնվեց Ռաջին,
Նստել էր Զնդին սառն աղբյուրի քով,
Ականջ էր դնում ջրի կարկաչին,
Հիանում կապույտ — լազուր երկնքով...
Հոտը փռվել էր ծով կանաչի մեջ,
Այծերն էին լոկ կաթնել ժայռերին,
Իսկ Զնդու կողքին նստել էր մի մեծ,
Հաստավիզ գամփռ՝ խիստ ու ահեղ։
Զնդու աչքերը հոնքերի տակից
Բոցկլտում էին՝ ինչպես զույգ խարույկ,
Բարձրանում էին մտքի հատակից
Հուշեր սրբազան ու հավետ առույգ։
Եվ հաջորդ օրը Զնդուն լուր բերին,

Թե Զաղանն ծնեց մի թխլիկ տղա.
Ինչպես յերաշտից խանձված արտերին
Հանկարծ կենսատու հորդ անձրև տեղար,
Այնպես էլ Ռաջու ծննդյան լուրից
Ջերմ ջահելությամբ հուրհուրաց Զնդին...
Ո՜, տղան որ կա՝ ուրիշ է, ուրիշ,
Հովիվը սիրում է տղա հաջորդին.
Եվ այդպես անվերջ սերունդից սերունդ

Կանցնի կես ցուպը՝ անդին հիշատակ,
Հովիվ կդառնան Ջնդինները քյուրդ,
Կապրեն կեղտակուր վրանների տակ...

Ռաջին եւ բռնեց պապերի ուղին՝
Մանուկ հասակից դարձավ դառնարած
Ու սար էր տանում դառները գյուղի
Արեւածագից շա՜տ ու շատ առաջ։
Ո՜, ամբողջ տարին բոկոտն, կիսամերկ
Իր դառների հետ շրջում էր Ռաջին,
Անուշ յերգում էր սրտառուչ մի յերգ
Բարձրաբերձ ու զով լեռների լանջին.
Մեծանում էր նա սարերի գրկում
Իր պապերի պես՝ բնության գերի,
Ցավ նրանց նման գլլոծ էր յերգում,
Ցերանի՜ տալիս յերկնի հավքերին։

Նախանձում էր նա և բուռն ատում
Թե՛ բեկ Բրոյին, թե՛ ռես Մուրադին.
Բրոն հարուստ էր, հզոր, մեծատուն,
Իսկ ի՞նչ էր այն խեղճ խաշնարած Ջնդին...
Բրոյի տղի շորերը շքեղ,
Կողքին կապում էր արծաթապատ սուր,
Եւ ինչո՞վ ասես իրեն չէր զուգել
Այդ չեչոտ Զայդոն՝ ցուրտ, մահասարսուռ.
Ինչե՜ր չէր անում այդ փոքրիկ աղան,
Կարդում էր գրքեր անծանոթ լեզվով.
Թեկուզ վողջ գյուղը հաներ կախաղան՝
Նրա կամքի դեմ ո՞վ դուրս կգար, ո՞վ...

Ռաջին հաճախ էր նստում քարափին,
Անդունդին հառում աչքերը թախծոտ,
Նայում վոլորուն գետակի ճամբին,
Ջրերին փրփուր, հավքերին անցորդ,

Հաճախ տարվում էր վառ յերազներով,
Օդում կառուցում չքնաղ դղյակներ,
Ու վարդա-յերազի հետքից վազելով
Քիչ էր մնում՝ խոր հեղեղատն ընկներ...
Յերբ սթափվում էր յերազուն Ռաջին,
Նորից նույն աշխարհն, նույն լեռները լերկ.
Ու այդ ահալի լեռների լանջին՝
Թախծալի լացող առինդների յերգ...

Բնության ծոցում — աճում էր Ռաջին
Ու կոկոնում էր, վորպես վայրի վարդ,
Յերբ պատերազմը՝ անգութ, ահածին՝
Արյունով ներկեց ձոր, անտառ ու արտ,
Յերբ տիֆը հրեշ, սովն անագորույն
Մահվան մատնեցին յերկիրը համայն,
Յերբ մարդը մարդուն մորթում էր, մաշկում,
Նույնիսկ մի պատառ չոր հացի համար,
Յերբ ամայացավ գյուղը վշտահեծ,
Ու էլ հոտերը սար չբարձրացան,
Յերբ աղջիկները ու հարսները հեզ
Մի մեծ, վիթխարի վշտից համրացան...

Սոսկալի սովը՝ մի համաճարակ,
Աշխարհակործան հիվանդության հետ
Ներս մտավ նաև մի խարխուլ տնակ,
Ուր հառաչում էր պառավն ալեհեր,
Ուր մանուկները հաց էյին հայցում,
Ուր տնքում էր մի հաղթանդամ չոբան,
Ուր մայրը գրկած դառնացած Ռաջուն՝
Լացով հիշում էր հին կյանքի ճամբան...
Ու սրեր անցան... հյուղում մնացին
Լոկ Ռաջին վորբուկ ու իր գորշ կատուն.
Բոլորը մեռան, անդարձ գնացին,
Իսկ արտում Ռաջին մտավ մանկատուն։

Այդ մանկատունը խարխուլ էր դեռ
Հին Գյումրու բերդից հազար քայլ հեռու.
Դիմացը՝ վեհ Արագածը ծեր,
Իսկ ինքը՝ տոչոր, վոչ ծառ, վոչ առու.
Դա մի ինքնիշխան փոքրիկ քաղաք էր
Իր օրենքներով, տերերով, բանդով.
Կարծես այդտեղ էր յեկել, հավաքվել
Մի պարտված բանակ՝ վողջ ապարատով.
Վեհանիստ շենքեր, սև, մռայլադեմ,
Նրանք նման չեն Ջնդու խըճիթին.
Թմահաճ բախտի նժույգը նստել
Պալճա է յեկել Թաջիյե Ջնդին...

Պալճա, ինչ պալատ այդ անհույս ձմռան...
Հին զորանոցները՝ մռայլ, անժպիտ.
Վերից վար չափեց անդղեց նրան
Կառավարիչը և՛ դաժան, և՛ բիրտ.
Նրա նայվածքը խոցող էր ու չար,
Ձեռքին բռնում էր միշտ դալար ճիպոտ,
Հին խմբապետ էր յեղել անպատճառ,—
Այդ էր վկայում կզակը ճարպոտ.
Նրա հայացքից սարսափած, սսկաց,
Կարծես փոքրացավ, կծկվեց Թաջին,
Իր սրտում ցավի դառն կսկիծ զգաց,
Բայց նա պատվարեց գետակը լացի

Թաջին մենակ չէ, գալիս են ահա
Նրա պես ուժատ, նորանոր վորբեր,
Գալիս են անվերջ հիվանդ, սովահար,
Աչքերում սարսափ, շրթներին՝ վողբեր
Գալիս են նրանք դաշտերից խոպան,
Գյուղերից ամա, քաղաքից ավեր...
Մեկի պապերը յեղել են չոբան,
Մեկինն հողագործ, մյուսինը՝ բանվոր.
Յես հազար ասեմ, դու՝ տասը հազար,—

Դուրս թափվում էն մեկ մեկի գլխին.
Հյուծված էն նրանք, սկսում էն հազալ,
Այտերը՝ աշնան տերևներ դեղին։

Մեծն էր այդ բանտի ամենահզոր
Դաստիարակը «անհիշաչար մայր»
Ու ահա մի օր, աշնան լալկան օր՝
(Այդ հուշը Ոսկին միշտ կպահի վառ)
Մի ինչ-որ անմեղ չարության համար
Շիլաչք Ցեզարը «սատանեց» Թաթուլին.
Զողը բարձրացավ, թափով իջավ վար
Ուղիղ Թաթուլի փոքր արմունկին.
Ճչաց Թաթուլը, գալարվեց մարեց,
Իսկ «դաստիարակ» Ցեզարը գոռաց.
— Վերցրեք սրան, շուտ, հիվանդանոց...
Ու ինքը անփույթ սուլելով գնաց...

Տարիներ անցան։ Թաթուլը յեկավ,
Բայց լոկ մի թև կար նրա ուսերին...
Աչքերում վառվող կրակը չկար,
Ծերության ձյունն էր իջել հույզերին.
Էլ չէր թռվում մեր Թաթուլն աշխույժ,
Նա խույս էր տալիս մարդկանց հայացքից,
Թախիծ էր իջել աչքերին խամում,
Սրտին՝ տխրամած ու դառնակսկիծ.
Մի ուրիշ մանկիկ՝ անունը Արամ,
Մասը Հոթորի ծեծի տակն ընկավ.
Արամին վերցրին, ուշաթափ տարան,
Ու նա էլ յերբեք, յերբեք հետ չեկավ...

Վորպես մի հմուտ, «կլասիկ» ծեծող՝
Հռչակ էր հանել Կնուտ Արտաշը.
Ծեծում էր անհագ այդ արյուն ծծող,
Այդ հանրածանոթ պարոն անտաշը.
Մանկատներում չկար մի փոքրուկ,

Վոր այդ կնուտից խույս տված լիներ...
Գալիս եր հանկարծ՝ ինչպես ձմռան բուք՝
Մռայլ ճակատին կնճիռի լեռներ.
Կնուտ Արտաշին ով չեր ճանաչում,
Ո՞վ չեր ճանաչում ժանգոտ դահիճին.
«Բարերարների» ինքնիշխան վորջում
Դեռ ինչե՞ր, ինչե՞ր պիտ տեսներ Ռաջին...

Ռաջին այդ անտեր, այդ մռայլ բանտում
Ապրում եր՝ վորպես թևաբեկ կաքավ.
Ի՞նչ գուրեկան եր ջինջ, վճիտ ոդում
Շվի ածելով հոտի հետ ման գալ...
Արհամարում եր, ատում եր Ռաջուն
Կառավարիչը՝ «ազգային փրկիչ».
Ռաջին հաճախ եր խորունկ հառաչում,
Մորմոքում տխուր ու դառնակսկիծ.
Թախծում եր Ռաջին, անսահման թախծում,
Չեր գտնում ապիդ, ընկեր սրտակից.
Վորպես մի սատար, մոլորված անցորդ՝
Այդ ի՞նչ խորթ, անգութ աշխարհ եր ընկել...

Ռաջին չգիտեր հայերեն խոսել,
Լոկ թոթովում եր մի կամ յերկու բառ.
Իսկ քրդերե՞նը... տրյուն կհոսեր՝
Թե հանկարծ հնչվեր միամտաբար.
«Պետք ե մոռանալ թշնամու լեզուն,
Քաջ կորյուն դառնալ հայ դատի համար,
Մեծ ե մեր ցեղը, ցեղը Հայկազուն,
Մեր ճամբից բացի՝ վոչ մի ճանապարհ».
Այսպես եր ասում վարժապետ Արամ,
Այդ եր քարոզում Նշան պատվելին, —
Չե՞ վոր այդպես եր տվել հրաման
«Ամենակարող» Կեսարը վերին։

Փոքրիկ հովիվը պապանձվեց, լռեց,
Համրացավ՝ ինչպես մի սառած առվակ,

Աղոտ ժամերին տխուր, վշտահեծ,
Մենակ թառելով — պատի, թմբի տակ՝
Կամ մտնելով խուլ, ամայի անկյուն,
Մտքերի ծովն էր ընկղմվում Ռաջին,
Հիշում էր լեռներ, վտակ ու աղբյուր,
Հիշում էր նույնիսկ իրենց չալ այծին,
Հիշում էր մորը, տատին, քույրերին,
Հիշում էր հորը՝ բարեխիղճ հովվին,
Ի՜նչ կարոտով էր հիշում գառներին
Շվիի ձայնը, իրիկվա հովին։

Ռաջին մենակ չէր. նրա պես այնքան,
Այնքան մանուկներ կային այդ բանտում.
Ու ահա մի օր, որպես բարեկամ՝
Մտերմանում են Ռաջին ու Աթոն.
Ինչ-որ մանկական չարության համար
Նրանց բանեցին, բերին մանկատուն.
Մթնում էր արդեն, ցուրտ էր ու խավար...
Բուքը ոռնում էր, իրեն կատաղում.
Այդ ցուրտ գիշերին նրանք յերկուսով
Կրում էին մի սոսկալի պատիժ, —
Նրանց տանջում էր դաղված յերեսով
Օրիորդ Սանդուխտը՝ անապատի իժ։

Սալահատակին ավազ էր փռված,
Ավազի վրա՝ ծնկաչոք ու մերկ՝
Աթոն ու Ռաջին, ճիպոտը բռնած՝
Հսկում էր Հայրոն, այդ սարուկը հեզ.
Նրանք խոր ցավից գալարվում էին,
Բայց չէին լալիս՝ չգիտեմ ինչու,
Թեև պղտորվում, մշուշվում էին
Վճիտ աչքերը դառնացած Ռաջու.
Իսկ Աթոն՝ այդ ժիր, այդ ըմբոստ տղան,
Վոր շատ էր կրել այդպիսի պատիժ,
Խոհուն աչքերը — վառ ու հուրհուրան
Չէր հեռացնում դիմացի պատից։

Այդ դանթեական դժոխքում, սակայն,
Չընկճվեց Թաջու հուսավառ հոգին.
Ջանքերով համառ ու հերոսական
Տիրապետեց նա գիտության զենքին.
Սովորեց կարդալ Կարճ ժամանակում
Ընտելացավ նա հայերեն լեզվին։
Երկար գիշերներ նստելով անքուն՝
Գալիքի համար սրում էր սվին.
Անվերջ կարդում էր մատչելի գրքեր,
«Գիքորը» գիտեր համարյա անգիր,
Համով յերգում էր գեղջկական յերգեր,
Պատմում հեքիաթներ — վառ, հետաքրքիր։

Մի օր էլ Թաջին, յերբ մենակ նստած՝
Որոնում էր իր հուշերը աննինջ,
Նկատեց մի բան, վորից և՛ սոսկաց,
Ցավ աչքին մթնեց ամեն, ամեն ինչ...
Խոնավ նկուղից դուրս բերին մեկին՝
Վոտքերին շղթա, ձեռքին ծանր գունդ...
Ինչպես վոր ծովը հուզվի, մրրկվի՝
Ալեկոծվեց մեր դառնացած քյուրդ.
Շղթայակապը՝ նրա սիրելի,
Մտերիմ ընկեր անվախ Աթոն էր.
Թաջին մղկտաց, բայց բանտարկյալի՝
Աթոյի համար կարծես մեծ տոն էր։

Վերից նայում էր ամառան բոլոր արփին
Անթիվ աչքերով, և՛ այրող, և վառ.
Աթոն մոտեցավ մի հողաթմբի,
Շղթային կապած գունդը դցեց վար,
Բլունդը վերցրեց, սկսեց փորել
Ժանգոտ շղթայի զընգոցի տակ...
Հեռվում նստել էր, ընկերն վոլորել
Մի հին կամավոր, մի «կարմիր» պահակ։
Թաջին ուզում էր մի հնար գտնել

Օգնելու համար թակարդն ընկածին,
Երբ դեռ ցնծությունն ավետող ձայներ՝
Ճաշն ազդարարող զանգերն վնգացին։

Ռաֆֆին շտապեց դեպի մանկատուն,
Հեւհե, արագ մտավ ճաշարան.
Ճաշը կուլ ավեց մի ակնթարթում,
Հացը գրպանեց, թափով դուրս թռավ...
Զննիչ, խորամանկ չորս կողմը նայեց,
Հետո սլացավ դեպ գերված Աթոն.
Աթոն փորում էր, աշխատում անվերջ,
Իսկ պահակը դեռ հսկում էր արթուն.
Կիսաքաղց Ռաֆֆին աննկատ, զգույշ
Հեռվից իր հացը նետեց Աթոյին,
Իսկ ինքը հապճեպ, ճկուն, կուզեկուզ
Ծլկվեց՝ ինչպես այծյամն լեռնային...

Այսպես էր Ռաֆֆին, յերբ մեր արնաքամ,
Ավեր աշխարհում բռնկվեց մի այգ...
Այգ, վոր դեռ մարտի վողվողուն վահան՝
Վեր բարձրացրեց մի նոր դասակարգ,
Այգ, վոր բորբոքվեց աշնան առավոտ,
Նոյեմբերյան ցուրտ, ամպամած մի օր,
Այգ, վոր այնքան ջերմ, այնքան փառավոր
Մեր հողը գրկեց՝ ինչպես քնքուշ մոր...
Այգ, վոր վողողեց մեր լեռները սեգ,
Մեր ձորերը խոր, մեր սրտերը բաց,
Այգ, վորի լույսով յեզերքից յեզերք
Լցվեց յերկիրը ու խինդով ծփաց...

Ո՜, ինչ ցնծությամբ վողջունեց Ռաֆֆին
Այդ այգաբացը վառ, գարնանաբեր.
Մեր պայծառ կյանքի այդ օրն առաջին
Նրա դեմ բացեց դյութական ափեր,
Սակայն — մանկատան կարգերը դաժան

Ավելի մռայլ, ավելի ճնշիչ․
Ո՜, մատրները բռնությամբ դաժան
Բանտել ուզեցին մեր գալիքը ջինջ․
Ցանկեցին բանտը յերկաթալարով,
Բոլոր կողմերում պահակներ դրին,
Վոր մանուկները անտես թևերով
Չկապվեն կարմի՜ր, կարմի՜ր սրտերին...

Որեկան ուղիղ տասներկու անգամ
Պետք է աղոթեր մեր փոքրուկ Ռաջին,
Առավոտ կանուխ յերգով բարձրաձայն
Փառք ու պատիվ տար յերկնի արարչին։
Նախքան թեյն՝ աղոթք, խմեցիր՝ աղոթք,
Նույնպիսի կարգով ճաշին, ընթրիքին,
Քնելուց առաջ՝ ծնկաչոք աղոթք,
Ու այդպես անվերջ կրկին ու կրկին։
Իսկ կիրակի որն տերտերը կգար,
Շուքով կմաներ նոր յեկեղեցին,
Հայ ազգի մասին քարոզ կկարդար
Յերանի՜ կտար «վոսկի անցածին»...

Բայց աշնանային մի խավար գիշեր,
Յերբ ամպը ծածկեց և՛ աստղ, և՛ լուսին,
Յերբ քամին ճիչով սկսեց գուժել
Դռները ծեծող ձմեռվա մասին,
Յերբ խորասուզված կարդում եր Ռաջին,
Ու բանտում լռեց, մարեց ամեն ինչ,
Այդ աթոնները կազմակերպեցին
Մի ընդհատակյա, կոմյերիտ բջիջ․
Այդ խիզախների բջիջն անդադրում
Իր ծոցն եր առնում նորանոր մարդկանց,
Ու այդ քչքչան գարնային առուն
Դառնում եր մի գետ՝ խոր, արագընթաց...

Ռաջին ընդունվեց այդ ըմբոստացած
Պատանիների քաջարի գնդում։

Գլխարկը հանեց, կանգնեց խոնարհած,
Բջիջին տվեց սրբազան յերդում.
Նա յերդվեց լինել միշտ առաջապահ,
Յերբեք խուճապով հետ չնահանջել,
Լավ օրվա համար հարթել ճանապարհ,
Յեվ բիրտ թշնամու սրտին հարվածել.
Ու մարդների, խմբապետների,
Բյուր լեռների այդ վարչում խավար՝
Վառվեց, բոցբոցվեց մահու և կյանքի
Մի հրաբորբոք, անխոնջ պայքար...

Նոր թևեր առած՝ բոցկլտուն Ռաջին
Ղեկավարում է սիրներ մի օղակ,
Այդ մանտատեսիլ խավարում ճզճիմ՝
Հույսի, լույսերի հորձանուտ կոհակ:
Խորունկ գիշեր էր Ծուլա տանտամանիք:
Վերադառնում է Ռաջին քաղաքից.
Վերից նայում է մի լուսնի մահիկ,
Հեռվում՝ տավերը անքուն պահակի:
Նա բանտն է բերում բացաշունչ գրքեր,
Նորատեղծ յերգեր — հեղափոխական,
Եվ վոչ մի կնուտ, պահակ կամ մարդ
Չի կարող մարել վառվող տապադան:

Հաճախ պատերին, դռներին բոլոր
Փակցվում էյին մարտաշունչ կոչեր,
Ձեռագիր թերթեր՝ անհալի, բացառ,
Վոր տալիս էյին խոր, անբուժ խոցեր...
Ու խոցում էյին՝ դահիճ Սանդուխտին.
Նշան պատվելուն՝ կեղծ-հեղահամբույր,
Փետրահան անում է խմբապետին
Յեվ մարդներին — կուշտ ու հատտավար.
Սուր ծաղրում էյին աղաչողներին,
Քամելիոններին՝ յերկերեսանի,
Ու այդ բոլորին պինդ զամում էյին
Խայտառակության դաշքերի սյունին:

Մաստր Ոգդենը՝ խոհական ալևոր,
Անսահման «բարի», «մարդասեր» ու «հեզ»,
Վարպետ հնախույզ այդ ամերիկացին,
Առավոտ կանուխ նստում էր գորշ ձին,
Ծայրից ծայր շրջում բանտան այդ ալեկոծ,
Հրամայում էր վորբերին ցրել,
Պատերից պոկում թռուցիկ ու կոչ,
Մռայլվում՝ ինչպես փոթորկոտ ձմեռ...
Հետո կանչում էր, քննում, բանտարկում,
Ընդմիշտ աքսորում այդ «դրախտ» վորջից.
Բայց ընդհատակում հրդեհ էր վառում
Պատանեկական մի խիզախ բջիջ...

Ու երբ անցան։ Բյուր շինարար ձեռք
Բուժեց մեր յերկրի վերքերը անհուն,
Ամեն կողմ հնչեց ուրախության յերգ,
Խայտաց, կարկաչեց ծիծաղի առուն։
Հին յերգիկները նորից ծլացին,
Դաշտը հերկեցին զութանները լայն խոփ,
Ու սար բարձրացավ հովիվ գյուղացին՝
Սրտում ցնծություն — ովկիանի պես խոր։
Շոգեկառքերը ազատ փնչացին,
Անուշ զնգացին ռելսերը զվարթ,
Ու շչակները ուրախ ճչացին,
Խինդով լցվեցին ձոր, անտառ ու արտ։

Կարիքը քիչ քիչ դիրքերը զիջեց,
Մանկատները մնացին թափուր,
Յերկիրը իրեն զրահով զինեց,
Վարարեց, փրփրաց մեր գինին պուր-պուր։
Ու Ռաջին դարձան մի արևոտ որ
Հրաժեշտ տվավ իր «դրախտ» բանտին,
Հետը տանելով մի քանի հատոր,
Մի աղջկա նկար՝ ամենից անգին...
Նոր հայրենիքը ընդունեց Ռաջուն
Ինչպես հարազատ մայրը զավակին,

Նրա դեմ բացեց անսահման ջանքի,
Բույն աշխատանքի դաշտը հարաճուն...

Վասկեարս աշնան մի պարզ առավոտ
Մեր Ռաջին մտավ համալսարան,
Ճամբան դժվար էր, անհարթ, անծանոթ,
Դեռ շատ հեռու չէր կատարը լեռան.
Իր սրտում հույսի ծաղիկներ պուր պուր,
Ձեռքին՝ լենինյան անհանգչելի ջահ,
Վառեց մաքառման վաղերիչ հուր,
Բռնեց վերելքի ուղին աքնաջան.
Դրոհի յելավ գիտության համար,
Դիրք դիրքի վրա տիրեց, գրավեց,
Մի օր էլ Ռաջին խնդությամբ անմար —
Բարձրագույն ուսման ընթացքն ավարտեց.

Այլևս այն չէ դարավոր հովիվ,
Այս աշխատավոր ժողովուրդը քյուրդ,
Լույսով է լցնում և՛ ձոր, և՛ հովիտ,
Ցեվ միտք, և՛ հողի, և՛ խրճիթը մութ.
Ցելել է կովի, ցրում է ամպեր,
Ամպեր խավարի, կրոնի զազիր,
Նա բախտը վաղուց, վաղուց է կապել
Մեր մեծ Միության դաշտերին անծիր,
Ծովերին կապույտ, մեծ սրտին անսասան,
Գործարաններին վիթխարահսկա,
Ու նա ապրում է իր յերիտասարդ
Վերելքը հուր-հուր ու հերոսական...

Յեռանդ է Ռաջին, անհատնում յեռանդ,
Պատմաբան է նա և լավ թարգմանիչ,
Ունի նորածիլ պատանի տաղանդ,
Աչքեր՝ շողշողուն գալիքի պես ջինջ.
Ու գիշեր ցերեկ համառ, անտրտունջ
Այրվում է Ռաջին, գրում, թարգմանում,

Ստեղծում է նոր, հյութեղ, լիաշունչ
Յերգեր, պոեմներ, գրքեր բազմանուն...
Ուսուցիչ է նաև Բոցավառ ջահեր,
Նոր մարտիկներ է տալիս քյուրդ գյուղին.
Յեվ այսպես՝ Ռաջին դեռ այնքա՜ն ջահել՝
Անցնում է իր փառավոր ուղին։

Իմ այս տողերը գրելու ժամին
Ռաջին նստել է սեղանի առաջ,
Դրսում յերգում է բքաշունչ քամին,
Քամին սանձարձակ ու դառնահառաչ։
Ռաջին կարդում է «Զառուստ»-ի մասին
Հետազոտական մի ստվա՛ր հատոր,
Դրսում պարում է ձմռան ցուրտ քամին,
Ներսում անսահման խաղաղ է անդորր։
Ռաջին կարդում է, ընդգծում, գրում...
«Դիքոր»-ից՝ «Զառուստ», հովիվից՝ գիտնակա՜ն...
Ո՜, մեր լայնարձակ, յերջանիկ յերկրում
Հերոս Ռաջիններ ինչքա՜ն, ինչքա՜ն կան...

Յերևան
1934 թ. դեկտեմբեր

## ԱՅԳԱԲԱՑ

Նոյեմբեր, ով զավակ մեծ Հոկտեմբերի,
Քո անունն եմ ձոնում յերգս այս սրտագին։
Դու մեզ հիասքանչ գարուններ բերիր,
Նոր ընթացք տվիր դու պատմության յերթին։
Վերջ տվիր մեր լալկան, անհույս յերգերին
Ու մեր դեմ բացիր այս չքնաղ ապագան,
Մեր յերկրում վառեցիր լույսի ու շողքի
Յերփներանգ ծաղիկներ այնքան ու այնքան...

Տես, Նորքի խոր ձորից դուրս գալով հոսանք՝
Թռչում է գնացքը ցնծության ճիչով,
Ու վաղը Սևանից մինչև Արարատ
Կծփա լույսերի անսպառ մի ծով։
Ու վաղը ձորերում մեր անդնդախոր,
Լեռներում բարձրաբերձ, դաշտերում անափ
Չես գտնի մի տուն, մի գոմ, մի ախոռ,
Վորտեղ չշողա ելեկտրական լամպ։

Նոյեմբե՜ր, յերջանիկ օրերի այգաբաց,
Նոյեմբե՜ր, պարարտ հող անսպառ բերքի,
Ո՜, սիրտս քո բերած հրերով է արբած,
Նոյեմբե՜ր, հորդ աղբյուր խնդության, յերգի
Նոր արև, տասվառ գեղեցիկ խոսքի,
Նոր հույզեր զարթնող հանճարեղ վարպետ,
Նոր յերակ կենսատու, անհատնում հանքի,
Շողշողուն գալիքի լուսատես բամբեր։

Նոյեմբե՛ր, դու պայքար, անվերջ մաքառում,
Դու ճարտար շինարար, դու մեծ վերծնողիր,
Ո՜, դու բույր, ջինջ աղբյուր, դու անմահ գարուն,
Դու դրոշ՝ մեր մղած այս անհաշտ մարտի։
Նոյեմբե՛ր, ո՜, դու մայր նոր հույզի, երգի,
Դու հնի սրտի տակ վիթխարի ռումբեր,
Յերջանիկ դարձրիր մի ավեր երկիր,
Մեր սրտի սիրելի, պայծառ Նոյեմբեր։

## ԶՈՀՎԱԾ ՀԵՐՈՍԻՆ

*Ս. Ճ-ին*

*Հիմա աշխարհում մեր անծայրածիր*
*Հնչում են խինդի նվագներ, յերգեր,*
*Վաղուց է լռել մրմունջը լացի,*
*Կյանքի գարունն է մեր սիրտը զուգել.*
*Ու համառ մարտում, մեր աշխատանքում,*
*Թախիծի ժամին, թե ցնծության մեջ*
*Մենք միշտ հիշում ենք կամքդ աննկուն,*
*Աչքերդ վճիտ, և՛ վառ, և՛ անշեջ։*

## ՓՈՔՐԻԿ ՅԵՐԳԵՐ

1

Մարդ, առանց քեզ ինչի՞ յեն պետք
Տիեզերքի դաշտերն անդին.
Դու յես տալիս, և՛ կյանք, և՛ յերգ
Այս անսահման մեծ աշխարհքին։

2

Ո՜, իմ մեծ, յերջանիկ, ազատ հայրենիք,
Սիրում եմ սրբազան հողդ համայնական,
Դաշտերդ լայնածիր, լեռներդ վերձիգ,
Արևոտ ներկադ, չքնա՜ղ ապագադ։

3

Յես կյանքը սիրում եմ ամբողջ էությամբ
Ու ապրել եմ ուզում անվերջ, անդադար.
Թող հոգուս յերկինքում չերևա սև ամպ,
Իմ սրտում միշտ յերգի մի կանաչ անտառ։

4

Յես գիտեմ, վոր մի օր անխուսափելին —
Այդ մռայլ, այդ տաղտուկ գորշ ծերությունը՝
Հենված իր դարավոր, մաշված ցուպերին՝
Գա մտնի իմ կյանքի արևոտ տունը։

5

Յես գիտեմ, վոր մի օր մահը ժանտադեմ
Դուռս կծեծի, վորպես անկոչ հյուր.

Բայց ես սիրում եմ մայիսյան վարդեր,
Աղջիկներ գեղուն, գալիքը հուր-հուր։

6

Արևի այրումին վերջ չկա,
Իմ սիրտն էլ արևից եմ պոկել.
Կրակ է նայվածքը աղջկա,
Իմ սրտի այրումին վերջ չկա…

7

Նայում եմ, ահա, Մասիսն ձյունափառ,
Վերսլաց, անամպ ու վեհ կատարին.
Դեռ էնքան պիտի կտրեմ ճանապարհ,
Վար հանեմ արվեստի Եվերեստ սարին։

8

Կյանքի ընթացքի սրընթաց գետում—
Ով լողալ չգիտե, ով չի մաքառում,
Ով վար չի քանդում, և նոր չի կերտում,
Նա չի տեսնելու վայելքի գարուն։

9

Իմ անդարձ մանկություն, ես կարոտակեզ
Հոգով եմ վերհիշում, և՛ մոր, և՛ քեզ.
Մանկություն, դու թեև վշտեր ես ունեցել,
Սակայն անփուշ վարդ՝ աշխարհն էլ չի տեսել։

10

Ո՛, վաղը մեր գյուղը կլինի մաքրաջինջ,
Չեն լինի հինավուրց խրճիթներ մեր հողում.
Նայեցեք այս մանկան աչքերին հմայիչ՝
Ապագան նրանց պես կլինի շողշողուն։

11

Երազում եմ հաճախ սարեր բարձրանալ
Ու անփույթ թափառել հովիտների հետ,
Բայց այնտեղ խեղդում է ձանձրույթը մռայլ
Ու այրող կարոտով ես դառնում եմ ետ։

12

Յես սիրո կախարդիչ զորության մասին
Բազմաթիվ գրքեր եմ կյանքումս կարդացել,
Բայց միայն մի անգամ հոգիս անբասիր
Այրվել և հուզմունքից ու դառն լացել։

13

Հույզերիս բազեններ, յես յերբեք, յերբեք
Ձեզ այնքան կոպտաբար չեմ փետրաթափի,
Վոր հավետ դառնաք-խղճուկ, թևաբեկ...
Հույզերիս բազեններ, վողջույն ձեր թափին։

14

Քնար իմ, մենք շատ ենք, ո՜, շատ ենք յետ ընկել
Տես, կյանքը թռչում է վորպես մի ճեպընթաց.
Ամրացիր, ով մուսա, սիրելիդ իմ ընկեր,
Գրոհի պես գնանք նժույգները նստած։

15

Գալիս եմ դեպի ձեզ, արևոտ Մոնբլաններ,
Իմ ուղին կլինի չափազանց դժվար,
Սակայն յես անվհատ կբարձրանամ վեր,
Մաքառման կրակը մեջս պահելով վառ։

Յերևան
1935 թ. մայիս

# ԼՈՒՅՍԵՐԻ ՀՈՎԻՏ

(ՊՈԵՄ)

## ՅԵՐԳ ԱՌԱՋԻՆ

### ՀԱՆԴԻՊՈՒՄ

*Պատանեկական քմահաճությամբ*
*Իջանք խոր ձորը, ուր գետն է շառաչում.*
*Վերից նայում է յերկինքն անամպ,*
*Ու գարնան կանաչն է հաղթորեն աճում։*
*Յերեք հոգի յենք։ Մեկը ժիր, զվարթ,*
*Առույգ աղջիկ է, աչքերով խնդուն,*
*Մեկը՝ բնապաշտ, նրբազգաց պոետ,*
*Վոր վարդի մահը լացով է գրում,*
*Իսկ մյուսին դյութում, սրտանց գերում է*
*Պարն ալիքների՝ փրփրած ովկիանում,*
*Յերբ նրանք հախուռն, խոլ գրոհում են,*
*Յերկինք մղելով ջրերի սամում։*

*Ուղին ձգվում է վոլորապտույտ,*
*Անցնում է ծաղկած ծառերի տակից,*
*Հուշերիս նավը այդ խճուղու հետ —*
*Տանում է հեռու և՛ սիրտս, և՛ ինձ։*
*Պոետ ընկերս — աչքերում կայծեր,*
*Յերբեմն մեր հին — մեծ պոետների,*
*Յերբեմն Շիլլերի, Հայնեյի պայծառ*
*Յերգերն է յերգում այնպես սրտալի։*
*Պոկելով շաղոտ, բուրյան ծաղիկներ,*
*Բնության ծոցում նորից մանկացած,*
*Իմ ընկերուհին — ժիր ու վոսկեհեր —*
*Մի բարձր ժայռից սլանում է ցած։*

Ձախ կողմում, ինչպես ձեռակերտ սյուներ,
Բնության տաշած քարերն են ցցված.
Սուր-սայր բլուրն է խոյանում դեպ վեր,
Ինչպես ապստամբ ձեռքը — բռունցքված։
Աջում յերգում է հովից տարուբեր՝
Մրգուն ծառերի մի փարթամ անտառ.
Ու ծառերից վեր — այնպես տիրաբար —
Բարձրանում են նոր տներ ու շենքեր...
Իսկ այդ շենքերի պատերի ներքև
Ջրանցքն է պարում արևելյան պար,
Ու ալիքների նազելի յերգով —
Բացել է ազատ, պայծառ ճանապարհ։

Ինչ վոր մի հաճույք — տանջող ու քաղցր
Լցրել է սիրտս ուղին այս խութոտ,
Մեր վոտքերի տակ — քարեր սրածայր,
Որը դառնում է և՛ այրող, և՛ տոթ,
Սակայն յերեքս Ալպերն բարձրացող
Տուրիստների պես — խենթ ու քմահաճ,
Թողած քաղաքը, գնացքը թռչող,
Վոտքով կտրում ենք շավիղը կանաչ,
Զնգում է Զանգուն, թռչում սրընթաց,
Ժիր ալիքները անհոգ պարում են,
Իմ ընկերուհին ցնծում է սրտանց,
Ու ծով հրճվանքից կորցնում է իրեն։

Թեքվելով ճամբան, քայլերով դանդաղ
Քանաքեռի հին ուղին բռնեցինք,
Գետը յերգեց յերկու տրտում տաղ
«Վերք Հայաստանի» վողբի յերգերից
Ու նայեց Մասսի ալեհեր գլխին,
Դարձավ ձորերին մեր անդնդախոր,
Ինչ վոր բան հիշեց անցածից մեր հին,
Ամպեց, մռայլվեց պոետը տխուր։
Իսկ ընկերուհիս իր խրոխտ տոնով
Արտասանում է ցնծագին, կայտառ,

Փրփուր ջրերի խուլ դղրդյունով —
«Մրրկահավի յերգ»-ից մի կտոր։

«Լիրիքական» է այդ ջահել տղան,
Կարդացել է նա բազմաթիվ գրքեր,
Տեսել է բացվող այգը շողշողուն,
Սակայն իր սրտում՝ վերքեր ու վերքեր։
Նրա աչքերում ծիծաղն հազվադյուտ
Մի շող է — ձմռան խավար գիշերում.
Սիրում է դիտել աստղերը հակինթ,
Աստղային դյութիչ ու պայծառ հեռուն։
Անվերջ հիշում է Ժան-Ժակ Ռուսսոյին,
Տերյանը գիտե վողջ բերանացի,
Սիրում է խաղաղ ու յերազային
Կնուտ Համսունի Թախիծը բացել։

Անցնելով բանուկ մի լայն կամրջից՝
Մտանք կոմունի ծաղկառատ այգին.
Դանդաղ գալիս էր այգու վերևից
Ծեր, կորաքամակ, դառամյալ մի կին։
— Բարև, նանի ջան, կարող եք ասել,
Ուր է գտնվում տունն Արամյանի։ —
Պառավը կանգնեց, ինչպես մի հին սել,
Կարծես դիպչելով ինչ վոր մի բանի։
Միքիչ մտածեց, հետո հորանջուն,
Դողդոջուն ձայնով պատասխանեց մեզ, —
— Արամենց տունը... Հրեն, բալա ջան,.
Էն բարդի ծառը, վոր կա՝ տենում ես....

Ու շարունակեց իջնել դեպի ցած,
Իսկ մենք բռնեցինք նշած մեր ուղին...
Արևը արդեն շատ էր բարձրացած
Ու սուր նայում էր Քանաքեռ գյուղին,
Յերբ բակը մտանք, ուր անց է կացել
Մանկությունը այն սևաչ պատանու։

Ահա նկուղը, ուր այնքան լացել
Ու սպասել է նոր առավոտին,
Վորտեղից հաճախ կարոտով անափ
Նայել է Մասիս ձյունոտ կատարին,
Հառել է տենչող աչքեր հրցայտ
Հեռվում նշմարվող իր ճանապարհին։

Ահա խրճիթը, ահա նկուղը
«Ի՜ր ժամանակի մեծագույն հայի».
Մտիր, ընթերցող, առանց յերկյուղի
Ու քո շողշողուն աչքերով նայիր
Այդ վողբերգական պոետի կտրած
Ուղին քարքարոտ ու գլգդագալի,
Նայիր այդ մարդուն՝ թևերը կտրած,
Աչքերում՝ արցունք, սիրտը՝ վշտալի։
Լավ նայիր նրան, այդ հսկայական,
Այդ դժվարալույծ բարդ յերևույթին,
Նա յել է անցել մի հերոսական
Դժվարին ուղի... Սակայն ո՞ւմ ոգուն։

Գուցե զարմանաս, ընթերցող ընկեր,
Վերջին խոսքերիս հարցական տոնից,
Գուցե քեզ թվա, վոր դուրս եմ յեկել
Յես այս առավոտ... մի գինետնից։
Չէ՞ վոր այդ մարդու բրոնզյա անդրին
Կանգնած է այսոր նոր Յերևանում։
— Նա մերն է, — կասես, — մերն է լիովին,
Թե չէ՝ ինչու՞ յենք նրան մեծարում,
Ինչու՞ յենք այս մեր սոցիալիստական
Քաղաքն զարդարում նրա արձանով,
Գուցե կարծում ես, իմ նոր բարեկամ,
Վոր մենք գնում ենք նրա կածանով։

Բայց դա սխալ է, հիմնովին սխալ,
Թյուրիմացությամբ չտարվես, ընկեր,
Այդ առթիվ չարժե վոչ լալ, վոչ սգալ,

Այլ պետք է դրա պատճառը գտնել։
Ո՜, նա, այդ մարդը գաղափարական
Ուղի յե բացել իր դաստիարակի
Արշավի համար և պետական
Խոսքեր է ձոնել նրա գալիքին։
Ու նա անդրանիկ ազդարարն է մեր
Գյուղում, քաղաքում արմատներ գցող
Մի ժանտ հրեշի, վոր մեծանում եր
Որ որի վրա քայլերով ցնցող։

Հակասական է այդ մարդու ուղին,
Նա մերթ ընկնում է անդունդը խավար,
Ուր ծունկ է չոքում «Հերոս» հաղթողին
Դովերդում ցարի սուրը «փրկարար»,
Ուր ներբողներ է ձոնում բռնակալ
Մաղաթյաններին, Պասկևիչներին,
Հերոս է կարծում Յերմոլովին — գայլ,
Ազատության շունչ, փրկիչը վերին։
Ուր այնքան նվաստ, հեստաղեմ ձոնով
Կյանքի յե կոչում հայ միապետին,
Լացող աչքերով, աղերսող ձայնով
Կանչում է, կանչում Հայկին, Տրդատին։

Բարդ է այդ մարդու «Վերքը» — վողբերգու,
Ցեմ՝ բազմերանգ է, և՛ հակասական,
Մերթ նա դրոշ է հայդուկի ձեռքում,
Վորպես մի ձեռնարկ «սուրբ ազատության»,
Մերթ մի ծանրամիտ, կույր հնապաշտի
Հիացմունքին է լոկ արժանանում,
Ու մերթ հնի հետ հավետ անհաշտի
Սիրտ հույզերի փունջն է բաժանում...
Նա մերթ այսպես է ու մերթ էլ այնպես,
Սակայն՝ նա ունի մի հիմնական գիծ,
Վորի համար է իջել ասպարեզ,
Ու շաղանակներ հանել կրակից։

Ո՜, խորհուրդ է այդ մարդու ճամբան,
Նա մերթ լուսավոր ջահ է իր դարում,
Վոր սրտով, հոգով, նյարդերումն անգամ
Աշխարհաբարի պայքարն է վարում։
Վոր ռոմանտիկ, հին գրաբարի դեմ
Դրոշը պարզած՝ յելնում է կռիվ,
Ու ձայնը նրա հնչում է արդեն,
Վորպես գարնային կարկաչը առվի։
Այդպես է ահա, իմ լավ բարեկամ,
Վոր մենք հարգում ենք սևաչ պետերին,
Մենք, վոր թաղել ենք և՛ թագեր, և՛ գահ,
Յեվ «վոսկեկուռքը», և՛ միապետին։

Մենք տիրանում ենք մի մասին միայն
Նրա բազմազան ժառանգությունից,
Այդ էլ մեր դարի բոցաշունչ քուրան
Մաքրում է փոշուց, ժանգից ու թույնից։
Հին սերունդների կերտած կուլտուրան
Մենք ժառանգում ենք անվերջ, անընդհատ,
Բայց ձեռք ենք տալիս, մաքրում նրան,
Վորպես փորձագետ, հմուտ վիրահատ։
Կտրում թափում ենք՝ ինչ վոր անպետք է,
Ինչ վոր փայլուն է, բայց ճոռոմակար,
Ու ժառանգում ենք այդ առատ բերքից՝
Ինչ վոր դեռ կապրի յերկա՜ր, շատ յերկար...

Մինչ այս մտքերիս յետեից ընկած՝
Խոսում եմ քեզ հետ, ընթերցող ընկեր,
Նեղ պատուհանից լսում եմ հանկարծ
Պատանեկական ցնծալի յերգեր։
Ո, այդ յերգերով լցվում է հյուղը
Ինչպես զնդանը՝ արևի լույսով.
Այդ յերգերում կա թովչանքը հողի,
Կա գարուն, վարդեր — բուրավետ, բոսոր։
Ու այդ յերգերի հնչյունների տակ
Դիտում եմ հյուղը — ամայի, անշուք,

Վաղուց է դարձել ավերակ, դատարկ,
Այդ խրճիթը հին ու արևադուրկ...

Խարխուլ մի անկյուն — խոնավ ու անլույս,
Նման վանական ձանձրալի խուցի,
Այստեղ է, ահա, այնպես լիահույս
Ստեղծագործել այդ Քանաքեռցին։
Խուցն այդ մտնելիս՝ իմ դեմ ծառացան
Բիրտ ֆարրաշները ինքնակալ խանի,
Նորից հուշերիս շարքերովն անցան
Արծիվն գիշատիչ ու յերկգլխանի։
Շահնշահների Իրանը քնկոտ
Իր հարեմներով, հարճերով բազում
Մտքիս աշխարհի մշուշումն աղոտ
Յելնում է գահին ու ծանր բազմում։

Մտքերիս շարքերն իրար բաղխելով
Ծառացավ իմ դեմ մի մռայլ ժանդարմ,
Խլեց ինձանից՝ խիստ կոխոտելով
Ձեռքիս վարդերը՝ և՛ կարմիր, և՛ թարմ...
Օրերի փոշու հաստ շերտի տակից
Բեղերով մռայլ ու միջնադարյան
Սահապարտի պես՝ պատմության խորքից
Բեմ է բարձրանում ճորտատիրական
Բիրտ Ռուսաստանն իր կալվածաններով,
Հարկահաններով դահճի պես դաժան,
Ոչ պակաս վատթար, քան իր խաներով
Ու ֆարրաշներով մի հին Պարսկաստան։

Նրանց հետ մեկտեղ, նրանց նման խիստ
Գալիս են ահա բեկերն հայկազուն.
Յեվ, նրանց ճամբին թե ծիծաղ, թե խինդ,
Յեվ ծաղկաստաններ, և՛ արտեր հասուն,
Ինչպես խորշակից՝ դեղնում են, թոշնում։
Գալիս է նաև վաշխառու Սերգոն
Ժանտախտի պես չար, վորպես գամփռ շուն,

Ապա՛, խորամանկ ձեր բկին չոքում,
Գալիս են ահա գնդերով մայլ
Մարդիկ հասարակից ու փարաջավոր,
Գալիս է նաև մի Մելիք Ժիրայր
Սեվ ձիուն նստած՝ միշտ առաջավոր...

Հանկարծ զնգում է ձայնը ծիծաղի,
Արձագանք տալիս այս խուցումն անշուք.
Իմ ընկերուհին ձայնով ծնծղայի
Ծփում է ուժգին ծիծաղի թմբուկ։
Իսկ դռանը, ինչպես տաճարը մտած
Մի հավատացյալ, յերկյուղածությամբ,
Հոնքերի վրա փոթորկաբեր ամպ՝
Իր շուրջն է նայում լուռ, մտասուզված։
Նա համարում է մեծագույն հանցանք
Վրդովել քունը այս խաղաղ խուցի,
Այստեղից է նա դիտել լայնարձակ
Դաշտն Արարատյան — փառքը անցածի...

Ահա կանգնել ենք Քանաքեռդեսի
Հենց գլխավերև, մի փոքրիկ բլրին,
Արտեր մեջ գարնան գետերը հույլի՝
Նայում եմ ներքև անխոս ու լռին։
Ինչպես վիթխարի հսկա բաոբաբ՝
Բլրի լանջերից ձգվել են դեպ ցած
Հաստ խողովակներ։ Մի առապարից,
Շողշողուն շենք է բարձրանում ձորից.
Այդ չքնաղ շենքի հաղթ պատերի տակ
Դառնամարտում են վերևից թափվող
Ջրերը փրփուր և արագ-արագ
Մղվում են առաջ սանձարձակ թափով։

Բլրի լանջերին—գետին զուգահեռ
Դեռ ճռում են մի հինավուրց առլի
Հետքերը առուր, մի զույգ սիրահար,

Իրարու կարոտ յերազուն ուռի,
Ու աղեղնաձև մի բարակ կածան,
Վոր ուղեկիցն է այդ նեղհուն առվի,
Ո՛, այդ կածանով — մենավոր անձայն,
Ո՞վ է ժպտացել գարնան արևին. —
Դա հին գյուղացու, չուլթի գյուղացու
Վառնատեղերի հետքն է մնացել,
Գեղջկական կյանքի և՛ լաց, և՛ ցնծում
Հերթով յեկել են այդ ճամբով անցել։

Յեվ գո՜ւցե, գո՜ւցե ուռիներն ջուխտակ
Այդտեղ տնկել է մի ծեր ջաղացպան,
Ու նրանց անուշ զով ստվերի տակ,
Իր կաթն է ըմպել մի խրոխտ չոբան,
Յեվ գուցե նրանց ստվերում թաղուն —
Հին ադաթներին հլու-հնազանդ՝
Սիրահարները սրերից մեկում
Իրենց գտել են կապանքից ազատ.
Յեվ գուցե հենց այդ ծառերին կապած՝
Փշրել են զանգը խենթ ըմբոստների,
Մինչև ծագել է պայծառ այգաբաց
Մրոտ, ընչազուրկ մութ խրճիթներին։

Յեվ գո՜ւցե, գո՜ւցե այնտեղ, ուր հիմա
Հիդրոկայանի շենքն է բարձրանում —
Յեղել է խարխուլ, խղճուկ, հնամյա
Մի հին ջրաղաց — անհուշ, անանուն,
Յեվ գուցե այնտեղ, ուր ծանրածանր
Տուրբիններն են ննջում մի խոր վեհությամբ,
Գյուղացին բռով գարի յե ցանել,
Վերից նայել է կարկտաբեր ամպ
Ու սպառնացել... Յեվ սրտում սարսափ,
Աչքերի առաջ սև հեռանկար,
Նա տուն է դարձել — տխուր, անսփոփ,
Իր յեզների հետ — իր նման անկար։

Ինչե՜ր, ո՜, ինչե՜ր չեն հուզում մարդու
Հավիտյան ծարավ — հարցասեր հոգին,
Ինչե՜ր չես հիշում, չես մտաբերում,
Երբ կանգնած ես այս փոքրիկ բարձունքին։
Այստեղից, ինչպես հեղեղն հաղթարշավ,
Անցել են անդուլ հորդաները բիրտ,
Միֆական Հայկից մինչև Մանթաշով՝
Չի վառվել, սակայն, այնպիսի մի խինդ
Այս ջրերի պես, այս ջրերի հետ,
Ինչե՜ր չեն հասել մեր այս ձորերից...
Բայց նայիր ահա, ինչ անուշահոտ
Բուրմունք է բղխում ծաղկած ծառերից...

Տարված դյութական այս տեսարանով՝
Չնկատեցի՝ ինչպես արևը,
Վարպես հրկիզված մի գրահանով՝
Անցնելով հանդարտ գլխի վրայով՝
Սուզվեց ամպերի ալիքների տակ.
Չնկատեցի՝ ինչպես պահը
Ընկերուհուս հետ — ինձ թողած մենակ՝
Բլրի լանջերից ձորակը մտան։
Չնկատեցի՝ ինչպես մոտեցավ
Հին ընկերուհիս, անկեղծ Նաիրյան
Լենինգրադից նոր վերադարձած՝
Գիտության բեռը հոնքերի վրա։

Մանուկ օրերի ընկեր էինք ջինջ,
Սրտով մոտ էինք — ես ու Նաիրյան,
Չէինք խնայում վոչինչ և վոչինչ,
Նույնիսկ կյանքը — նա ինձ, ես նրան։
Իսկ մեր հայրերը հնուց կարեկից
Հանքահորերի բանվորներ էին,
Կյանքը տխուր էր ու դառնակսկիծ,
Օդը՝ հեղձուցիչ ու դժոխային։
Զուրկ էինք նույնիսկ մանկական խաղից, —

Պետք էր վաստակել մի քանի գրոշ,
Ո՜հ, այդ օրերը և տխրաթախիծ,
Եվ մռայլ էին, և հոգի պես գորշ։

Մեծանում էինք ես ու Նայիրան
Վիշկաների խիտ անտառների մեջ,
Ամառը՝ այրող շեկ ավազներում
Թափառում էինք ձանձրույթով անվերջ
Ու միրգ վաճառում ծովափին պառկած
Անփույթ ու շվայտ, անհոգ, փափկասուն
Ու ազնվազարմ անաշխատ մարդկանց...
Բայց մի օր, ինչպես ջրային հաստ սյուն,
Քաղաքի բոլոր լայն փողոցներում
Ծառացան մարդկանց շարքերը վարար
Ու վարդի պես՝ կարմիր փողփողուն
Եվ ծածանվեցին դրոշները վառ։

Ու ինչպես ծովը նավաբեկության
Ահավոր ժամին՝ այնպես էլ անքուն
Խոր մռնչում էր ու խուլ դղրդում,
Թնդում էր ահեղ, ապստամբ Բաքուն...
Տուն էինք դառնում ես ու Նայիրան։
Այնտեղ կեսօր էր։ Եվ ահա հանկարծ
Սուլելով ճչաց մի սուր համազարկ...
Մի մարդ ընկնելով՝ աղեխարշ տնքաց...
Եվ մենք շնչասպառ՝ պատերի տակով
Մտնում էինք մեր բակի դուռն,
Երբ տան անկյունից մեկը գնդակով
Խոր խոռոչ բացեց ճակատիս վրա...

Այդ օրը հայրս չվերադարձավ,
Ջահել մորս հետ մնացինք մենակ.
Մեր տունը դարձավ մի մութ քարանձավ՝
Անհաց, անարև, անլույս, անկրակ։
Ու օրեր անցան... Վերքս լավացավ,

Սակայն ճակատիս մնաց մի սպի,
Մի գնդակի հետք, վոր սուր սուլոցով
Արձակեց վրաս մի ճերմակ սպա։
Ու փախվեց կյանքը։ Ցնդավ կոմմունա,
Հայրը Նաիրի կոմիսար դարձավ,
Նորից ծածանվեց խնդության անմահ —
Կարմիր դրոշը մեր լուսապայծառ...

Բայց կարճ ապրեցինք յերջանիկ օրեր, —
Գլխատվեց Բաքվի խիզախ կոմմունան,
Այդ ինչ սոսկալի, ինչ սև տերրոր եր,
Վոր մարդ եր հնձում գերանդու նման։
Հեռու հեռավոր խուլ անապատում
Թշնամին թաղեց կոմմունի վոգին,
Ու մեր վտանգահար, ավեր աշխարհում
Արնադունչ ամպը բարձրացավ վերքի։
Մեր գեղատեսիլ, չքնաղ Կովկասում
Իրար դեմ յելան ազգերն հարևան,
Ու գետերի պես արյուն եր հոսում
Ընդվզող Բաքվից մինչև Յերևան...

Այդ օրից սկսած՝ յես ու Նաիրան
Կորցրինք միմյանց կյանքում անեզերք,
Սակայն ճակատիս, ինչպես խառնարան՝
Մնաց գնդակի պատմական մի հետք։
Իմ ճամբան անցավ լայն ստեպներից,
Վոլգան չափեցի մի քանի անգամ,
Խոր վերք ստացա սպիտակներից,
Բայց յես մնացի միշտ արիական։
Ու շատ մարտերի մասնակից յեղա,
Ստացա փառքի մի շքանշան, —
Դեռ փոքրիկ եյի, վառվռուն տղա,
Բայց կռվում եյի անվախ, անսասան։

Սրտիս հնոցում վառվում եր անմար
Սրբազան հուրը վոգևորության,

Ո՜, յես գիտեյի, թե ինչի՞ համար
Մենք մարտ ենք մղում այդպես հաղթական.
Գիտեյի և այն, վոր մարտումն այդ մեծ
Նույնիսկ խփում է հայրը իր վորդուն,
Ու հոգիս ձուլված միլիոնների մեջ՝
Ըմպում էր մարտի վողևորություն...
Ո՜, այս աշխարհում կա՞ մի ուրիշ բան,
Վոր լինի այնքան փառավոր, հզոր,
Վոր լինի այնքան վառվռուն, բոսոր,
Քան հուրը, հուրը վողևորության։

Վողևորությո՛ւն, դու հերոսության
Ամենաազդու — զորավոր զինի,
Ով վոր քեզ ըմպի, հար ու հավիտյան
Ջահել ու փարթամ նոճի կլինի։
Վողևորությո՛ւն, գրոհի յեռած
Հոծ մասսաների անառիկ դրոշ,
Վողևորություն, քո հյութը ըմպած
Խեղճ մահկանացուն՝ դառնում է հերոս։
Վողևորություն, դու հանճարների
Սրտերում վառվող բոցաշունչ խարույկ,
Վողևորություն, ըմպած քո գինին՝
Հոգիս ցնծուն է ու հավետ առույգ...

Ծծելով մաքուր ոդը լեռնային՝
Զրույց ենք անում յես ու Նաիրյան,
Ինչպես Ոթելլոն Դեզդեմոնային՝
Կյանքիս վիպակը պատմում եմ նրան։
Նա ել իր հերթին — փոխադարձաբար,
Անուշ խոսքերով — կարճ ու համառոտ,
Ինչպես գարունքվա կարկաչուն աղբյուր,
Ինչպես նորածագ կապույտ առավոտ,
Մերթ կարմրելով, մերթ վողևորված՝
Կարդում է իր կյանքը — մի ռոման,
Իսկ յես ուշադիր, և լուռ, և գերված,
Աշակերտի պես լսում եմ նրան։

Իր այդ հասակում — դեռ յերեխամարդ՝
Ինչեր չի տեսել այս մեր Նաիրյան,
Ո՜, տես, սևաթույր նրա մազերում
Փայլում են արդեն թելերը արծաթ։
Վաստով կարել ե արյունի մի ծով,
Նայել ե մահվան լափող աչքերին,
Անցել Դանթեյի դժոխքի միջով,
Կախված ե տեսել իր ընկերներին։
Բայց անընկճելի հույսը վառ պահած՝
Նա դուրս ե յեկել մի ուրիշ աշխարհ,
Վորի լեռները այնպես սիգապանծ,
Ջրերը այնպես՝ և վեհ են, և խոր...

Վորի դաշտերը լայն, անծայրածիր
Յեվ անտառները — անսահման ու մեծ,
Որերով գնա, թռիր ու անցիր,
Բայց ու՞ր ես... Նորից նույն դաշտերի մեջ։
Նույն տափաստանում, ուր հորիզոնդ
Անսահման, անհուն, վեհ ու լայնարձակ,
Ուր կուրծքդ այնպես շնչում ե ազատ,
Սրտումդ ծաղկում գարնան արևծագ։
Ուր վոր ցնծագին ու արևակամ
Զիլ գնդում են — գիշեր ու ցերեկ
Ռելսերը կյանքի — սոցիալիստական՝
Յերգելով մի վեհ, հավերժական յերգ։

Նա դուրս ե յեկել մի ուրիշ աշխարհ,
Ուր, տես, ականջ դիր, ընթերցող ընկեր,
Ջուրը լցվել ե լույսերով վարար,
Ոգում ծաղկել են շուշան — լամպիկներ։
Ի՞նչ հիասքանչ տեսարան ե սա. —
Լույսերի հորձանք, գույների յերանգ,
Սա վոչ հեքիաթ ե և վոչ ել յերազ,
Այլ մի գյուղական չքնաղ արևծագ։
Սա այգաբաց ե, — բայց արևը նոր

Մանիճը մարավ... Ո, վոչ, սիրելիս,
Դու մեր մոլեգնած, հորդահոս ու խոր
Գետերն են վառվում, վորպես արշալույս։

Ո՞ւր եք, Եյ, ո՞ւր եք, Վարդենց ու Լենա,
Բլրի գագաթը յելեք — բարձրացեք,
Տեսեք, բորբոքվում, վառվում է ահա,
Ելեքտրական ձեռնակերտ մի ծով...
Ու ահա նորից խմբով կանգնել ենք
Քանաքեռգեսի հենց գլխավերև,
Լույսերն են ծփում ալիք առ ալիք —
Ու շողշողում է մի անշեջ արև...
Ձորը, ուր առաջ ուշ յերեկոյան
Մարդը կասկածով, ահով կմտներ,
Այժմ գրկել է մի հիդրոկայան
Յեվ ճերմակ ու ջինջ աներ ու անճր...

Լարված դիտում ենք ու չենք կշտանում,
Բայց ուշ է արդեն, պետք է հեռանալ,
Թեև պոետը շատ է վշտանում
Ու չի ցանկանում էլ առաջ գնալ։
Ծանոթանում են փոխադարձաբար
Լենան, Նազիրյան ու Վարդենցը մեր,
Յեվ բոլոր խնդությամբ ընկած ճանապարհ,
Զրույց — կատակով բարձրանում ենք վեր։
Տունը հեռու չէ։ Մոտիկ բլրակից
Աչքերն հառել է խորախոր ձորին,
Նա է առաջինն իր բարձունքներից
Վողջունում բացվող այգի բոցերին։

Փչում է շոյող մեղմանուշ քամին
Ու սվսվում են բարդիները վեհ,
Յերբ մենք մտնում ենք մի հինգհարկանի
Լուսավարար շենք ու բարձրանում վեր։
Նախ այցելում ենք մի կոկիկ սենյակ,
Ուր վերջալույսն է իր վոսկին թափել,

Ուր կարկաչում են՝ զերթ գարնան վտակ,
Ծիծաղ, խնդություն ու ցնծուն ծափեր։
Այստեղ խաղում է մի կայտառ սերունդ,
Կոմմունի հույսը, նրա ապագան,
Այնքան մանուկներ, աչիկներ սիրուն,
Ո՜, ինչ արեշող, ինչ արիակամ։

Երնեկ, ո, երնեկ մեր նոր սերնդին,
Մեր մանուկներին այս լայնաճակատ,
Ո՜, չի ծանրացել նրանց ուսերին
Անցյալը և ցուրտ, և անճառագայթ.
Նրանք ծաղկել են մեր մեծ յերկնքի,
Մեր ջինջ կապույտի կամարների տակ,
Նրանց անել է մի արևաչ կին,
Մի գուրգուրող մայր — անունն աշխատանք։
Դրա համար են նրանց աչքերը
Այնպես վառվուն և ուշադրավ,
Դրա համար են այդ մանուկները
Վեհ, ինչպես ճախրող մի մրրկահավ...

Խաղը փոխելով ընթերցանության՝
Հանգստանում է սերունդը անբիծ,
Յերբ հյուրընկալի առաջնորդությամբ
Մտնում ենք մի նոր, լայնարձակ դահլիճ։
Լայնարձակ սրահ, մաքուր սեղաններ,
Ձյունից ել ճերմակ սփռոցները ջինջ,
Ու սեղաններին կան ծաղկամաններ
Յեվ բուրումնավետ, և գեղաժպիտ։
Խմբով նստելով մի սեղանի շուրջ՝
Իրար պատմում ենք առորյա դեպքեր,—
Մինչ բորբոքվում է մի աշխույժ զրույց,
Դահլիճ են մտնում նորանոր դեմքեր։

Գալիս են ահա մեկը՝ գյուտարար
Ալեհեր բանվոր ու մարտի վարպետ,
Մեկը՝ պարտիզան ու ճարտարապետ,

Մեկը՝ հին բժիշկ, մեկը՝ խոհարար,
Միաժամանակ բանջարանոցի
Հմուտ ղեկավար... գալիս են, շարվում
Սեղանների շուրջ։ Ահա կանացի
Դեմքեր նորակերտ։ Աչքեր են վառվում
Մոգական բոցով։ Եվ իրար հանդեպ
Հարգալից ու լուրջ — ընթրում են հանդիստ,
Մեղմիկ շշուկով... «Մշակներ» հանդի,
Հանքի ու լույսի՝ այնքան բարեկիրթ։

Ծանոթանում ենք լոկ անմիջական
Մեր սեղանակից մարդկանց հետ մի խումբ,
Ինձ գրավում է մի թուխ աղջկա
Հասակը պարթև, հայացքն ալեծուփ։
Գանաը, նույնիսկ այդ սակավախոս,
Այդ լռիկ աղան, — դարձել է գարնան
Ճչքչան աղբյուր. ո՜, փոթորկահույզ
Աղջիկը գերել, գերել է նրան։
Խոսում է հաճախ մեծ առօրյայից,
Սիրո մասին է յերբեմն ակնարկում,
Մերթ աչքի տակով մանիկ անում ինձ
Ու վարդի նման շիկնում, կարմրում։

Այստեղ է, ահա, վոր ծանոթացանք
Շատ հետաքրքիր մի նորեկի հետ.
Նա նստել եր՝ գերթ բրոնզյա արձան՝
Աչքերը խոհուն, գլուխն ալեհեր։
Նա հենց առաջին իր մի հայացքով
Ուշադրությունս ու միտքս գերեց.
Նրա դիմացը, նույն սեղանի քով,
Նստել եր մի կին՝ դեր ու բարձրաբերձ։
Մերթ ամպում եր նա, մերթ թեթև ժպտում,
Իսկ կինը անվերջ պատմում եր մի բան.
Նա յերկարատև ճաշի ընթացքում
Արտասանեց լոկ մի կամ յերկու բառ։

Սերգոն (այսպես էր անունը նրա)
Սպասել չավեց, նաղ չարեց յերկար,
Մի քանի խոսքով — հույզերով վառար —
Մեզ պատմեց նա իր անցյալն ու ներկան։
Յերկաթուղային բանվոր է յեղել,
Դեպոյի բանվոր, — այսպես էլ ասաց.
Յերբ մեր աշխարհը նոր էր հեղեղել
Մեծ Հոկտեմբերի հուրը փառապանծ,
Ու յերբ Շիրակում առաջին անգամ
Զրահապատը յերկաթամկան՝
Վորպես վիթխարի մի մրրկահավ՝
Բացում էր կյանքի մի նոր ճանապարհ...

Սերգոն մայիսյան այդ վառ օրերում
Կարմիր դրոշն է բարձր ծածանել.
Պատանեկության կրակն իր սրտում՝
Յելել է ընդդեմ կարգերին ծանր,
Ընդդեմ շառաչող դաժան մտրակի,
Ընդդեմ «ծովից ծով» ցնդաբանության։
Սակայն... պարտություն։ Ու ահա կրկին
Գահ է բարձրացել բռնության արքան։
Բայց վո՞վ կարող է հեղափոխության
Հեղեղի առաջ կայուն պատ շարել.
Նոյեմբերն յեկավ, պայքարով յեկավ,
Նորից ցնծացին մեր դաշտն ու սարեր։

Դուրս յեկավ Սերգոն սիրտ կրծող բանտից...
Դիմացը՝ բացվող պայծառ այգարաց...
Ու այդ օրվանից նրա ջինջ, անբիծ
Հոգու աչքերում վառ խինդը ծփաց։
Նա նոր յեռանդով լծվեց վիրավոր
Շոգեքարշերի բուժման մեծ գործին։
Ու մեր յերկրի հետ սուրաց դեպի վեր՝
Միշտ հավատարիմ լենինյան գծին։
. . . . . . . . . . . . . . . . . .
Տարիներ անցան... ի՞նչ օրեր անցան...

Մազերին իջավ արծաթյա փոշին,
Հները մնացին, նորեր բարձրացան,
Բայց նա միշտ մնաց դիրքում հերոսի...

Ընթրիքից հետո մտնում ենք մի լայն
Ու արևակող ծիծաղուն սրահ.
Դիմացի պատից, ինչպես մի Մոնբլան՝
Հայացքն իմաստուն, աչքերն հուրհրան
Նավավարի պես հառել է հեռուն
Արծիվը լեռնային — հանճարը — Լենին,
Եվ կարծես նրա հոնքերին խոհուն —
Երկրագունդը ծանրացած լինի։
Իսկ վարագույրին նկարված է մի
Ձյունապատ լեռ ու անտառիկ ժայռ,
Որի կատարին նույնիսկ այծյամի
Թեթև ոտքերը հազիվ բարձրանան։

Անսանձ յեռանդն է դահլիճը լցրել,
Տեսնում եմ՝ նրանք սպասում են մի
Ինչ վոր նոր բանի։ Թնդում են ծափեր,
Ու հանդարտ մեկը յելնում է բեմին,
Հայտարարում է որվա համերգի
Ծրագիրը ճոխ, ու նորից ծափեր,
Ծափեր ու ծափեր, լսվում է զանգի
Ղողանջը ազդու, դուրս է գալիս բեմ
Մի սևաչ աղջիկ, հասակը բարդի,
Բնության նման հասարակ ու պարզ.
Շրթունքը — նման կարմրավառ վարդի,
Աչքերը վճիտ — մի անուշ յերազ։

Ծփացող ծափերն փոխվում են հանկարծ
Լարված լռության... Ու յերգում է նա,
Մերթ՝ ինչպես ծովը — հուզված ալեկոծ,
Մերթ՝ ինչպես կանաչ անտառը գարնան,
Մերթ՝ վորպես ջրերն կապուտակ լճի,

Մերթ՝ ինչպես սառուն սառցի շերտի տակ,
Ու նայում է նա գերված դահլիճին
Աչքերում — մի զույգ ամռան արեգակ։
Ո՜, նրա յերգը լեռը բարձրացող,
Դետերին նոր հուն, կյանքին նոր յերանգ,
Նոր բուրմունք տվող, մրրիկը սանձող
Մարտիկի յերգն է, խիզախի խոյանք։

Ու յերգում է նա մի հայ հանճարեղ
Կոմպոզիտորի մեծ ոպերայից
Մի հաղթական էջ։ Արծիվն է ճախրող —
Այդպես վայր նայում իր բարձունքներից։
Յերգը այդ ջինջ է, ինչպես կապուտաչ
Լիճը լեռնային, ինչպես յերգողի
Աչքերը պայծառ, ինչպես ծաղկի աճ,
Ինչպես բուրմունքը անձրևոտ հողի։
Ահա կանգ առավ։ Մի պահ լռություն.
Ու հետո... Հետո նորից անդադար
Ծփուն ծափերի կենսաուրախ թնդյուն,
Շարժվող ձեռքերի մի ստվար անտառ։

Յերգչուհուց հետո ջութակը ձեռքին՝
Առաջ է գալիս լեռնացած կրծքով
Մի յերիտասարդ. կողքիս մի ծեր կին
Նայում է նրան անհուն հրճվանքով։
— Մայրն է, — ասում է մոտիս ընկերը,
Յեղել է հեռու, հեռու Սիբիրում,
Այժմ էլ պահում է իր շղթաները
Մի անկիղելի, մեծ պահարանում։
Իր այս մինուճար յերաժիշտ տղան
Ծնվել է հենց այդ դժխեմ աքսորում,
Հորը հանել են տանջող կախաղան,
Ցուրտ սիբիրական մի մութ գիշերում...

Ո՜, մեր կոմմունի հիմնադիրն է նա,
Այդ պառավ կինը, այդ հերոսուհին,

Օրեր, տարիներ կըգան կանցնեն,
Բայց նա միշտ անմահ, անմահ կմնա։
Տես, ծերացել է, արդեն դողդոջուն,
Արդեն վատուժ են ձեռքերը նրա,
Եվ գուցե շուտով պառկի ցուրտ հողում,
Ու մի ծանր քար բարձրանա վրան,
Բայց մենք կարոտով նրան կհիշենք
Ու սերունդներին կպատմենք նրա
Հերոսությունը... Դեհ, այժմ լսեք՝
Ո՜նց է նվագում մեր ընկեր Արան։

Եվ մինչ ուշադրով ու հետաքրքիր
Լսում էյի յես կողքիս ընկերոջ,
Վարի լայնանիստ ու խոլոտ կրծքին
Շող էր արձակում «գյուտարար հերոս»
Նշանակը վառ... Բեմ են դուրս գալիս
Հասարակ մարդիկ, բոլորը, սակայն,
Անցել են ուղին մի մեծ պայքարի
Ու մարտ են մղել, մարտ հերոսական։
— Նրանք բոլորն էլ մեր կոմմունայի
Տղերքն են, — ասաց դարձյալ ծանոթս.
Այ, տեսնու՞մ ես դու այդ թուրք Մամոյին,
Բարհատ ենք այժմ թե նա, և թե յես...

Մամոն — այդ քարհատ, աժդահա մարդը
Սիրով գրկել է մի նոր վիլոնչել,
Կարծես գնում է փոթորկոտ մարտի,
Կարծես ուզում է բերդեր նվաճել։
Եվ ահա տվավ մարտական նշան
Արան — ղեկավարն այդ գողտրիկ խմբի,
Գուցե յերգում են տրտմադեմ աշնան
Տերևաթափը, կամ մեռնող արփին...
Բայց լսիր. այս ինչ ձայներ են վարար,
Ի՞նչ գետ է այդպես պոռթկել ափերից,
Այդ ինչ նավեր են այդպես հողմավար
Դուրս յեկել իրենց ատույա ճամբից...

Հորդում է հնչում մեծ Բեթհովենի
Սիմֆոնիան — յերրորդ կամ հերոսական,
Ո՜, այդ համերգում յելած գրոհի —
Արշավում է վեր հաղթ մասսա հսկան։
Նա գրոհում է Բաստիլի վրա,
Ռմբակոծելով ամրոց ու պալատ...
Վոչ վոք չի կարող կաշկանդել նրան,
Նա և՛ հպարտ է, և՛ վեհ, և՛ անպարտ։
Ու այդ յերգի մեջ յես լսում եմ դեռ
Ռոբեսպյերների ձայները ցասկոտ,
Տեսնում եմ վառվող դղյակներ, բերդեր
Ու անվերջ թափվող գնդակի կարկուտ։

Մի կարճ անդադարից, հանգստից հետո
Լսվում է բարձր կանացի մի ձայն.
Խոսում է աղջիկն — հակիրճ ու հստակ,
Յեվ ձայնը նրա տալիս է հերձանք։
Ինչպես պերճախոս, բոցաշունչ պոետ՝
Պատմում է աղջիկն, թե ինչպես հերոսուն
Մասսաները հոծ՝ հուզված ալեծուփ
Հիմքից քանդելով ամրոցները հին՝
Յելել են վերջին, վերջին գրոհի
Կարգերին ընդդեմ և արնոտ, և ցուփ,
Ինչպես հնչում է նրանց հաղթական
Սիմֆոնիան և՛ վեհ և հերոսական...

Պատմում է՝ ինչպես մեր այս անեզերք
Աշխարհում յելնում բարձրանում է մի
Վեհ ու հոյակապ յերջանկալի շենք,
Ու միլիոններ են մեծ մաքառումի
Ուղին հարթելով գրոհում դեպ վեր։
Տեսնում են նրանք, վոնց ամենուրեք,
Նույնիսկ Սիբիրում — ցուրտ ու հեռավոր
Շողշողում է մի մշտավառ արեգ։
Յեվ տունդրաներում, նույնիսկ հյուսիսի —
Յերբեմն ամայի, անմարդաբնակ

Հարթություններում — այժմ ուս ուսի
Դրանում է մի ամրակուռ բանակ։

Լսում են՝ հեռու տափաստաններում,
Հանքերում ածխի ու բազմահազար,
Գործարաններում՝ վոնց են համերգում
Բլումինգներ, մուրճեր, կոմբայններ համառ
Ու այս բլրակից — հեռու հարավում,
Ուր մի ժամանակ և՛ տկլոր, և՛ վորբ
Մի ժողովուրդ էր սովից տառապում, —
Նայում են նրանք իրենց լուսավոր
Աչքերով՝ այնպես կայծկլտուն ու բորբ —
Դեպի գալիքը — ավելի հուր-հուր,
Ավելի պայծառ, քան մեր այս ներկան,
Քան վարդեր կարմիր, քան գինին պուրպուր...

Սիրելի մուսա, յեղիր համարձակ,
Նավապետի պես դուրս արի բաց ծով,
Թող քեզ հմայի վեհ ու լայնարձակ
Ովկիանոսն անհուն իր մռնչյունով։
Թող նավից բաղխվեն ալիքները սար,
Ու փրփուր թափեն քո գանգուրներից,
Սակայն դու բարձր պահիր քո բոսոր
Դրոշը, ինչպես հերոս կոմյերիտ.
Ու գնա առաջ — յերկրե-յերկիր,
Դեպի նոր ափեր — դեռ վոտք չդրած,
Թող քո թռիչքը ովկիանը յերգի
Ովկիանը վսեմ ու լայնատարած...

Ներիր, ընթերցող, վոր ընդհատեցի
Զրույցս քեզ հետ, ու մուսայիս դեմ
Վաղուց լուռ կորած իմ սիրտը բացի,
Վոր նրան մի քիչ, մի քիչ խրատեմ։
Ահա մենք նորից քեզ հետ միասին
Կանգնած ենք շքեղ մի պատշգամբում,
Կապույտ յերկնքից մի լիալուսին՝

Շռայլ աղջկա պես՝ արձակ է թափում,
Արձակ է թափում այդ ծիծաղատառ
Աղջիկը վերից և ձորը — անգամ
Այդ մռայլադեմ ծերուկը անթարթ
Նայում է նրան, վորպես բարեկամ։

Ո՜, այս գիշերը — այսքան սադալի,
Այսքան լուսավոր, այսքան գունազեղ,
Վայել է միայն մեր մեծ աշխարհին,
Ջրերին ծաղկուն, սարերին շքեղ...
Քեզ, գարնան գիշեր, այս պատշգամբից
Ուղարկում եմ մի աննչալի համբույր,
Քո ճերմակ գինուց — լուսնյակի լույսից —
Լցնում եմ և սիրտ, և վոսկի սափոր։
Քո շրթունքներին, ո՜, գարնան գիշեր,
Հպում եմ սրտիս շուրթերն անբիծ
Ու վայելում եմ և հաճույք, և սեր
Զընդգատեսիլ այս պատշգամբից...

Ինչքա՜ն եմ ուզում, վոր ժամանակի
Ընթացքը մի քիչ դանդաղի այսոր,
Ու այս գիշերվա յերթը ցնծագին,
Վայրկյանը անգամ դառնա դարավոր։
Ուղղակի շնչում, ապրում եմ յես այս
Մարդկանց ինքնաբուղխ խնդությամբ անմեռ,
Չեմ ուզում քնել... Բայց արագահոս
Ջրերի նման — թռչում են ժամեր։
Յեվ արշալույսն է մոտենում արդեն,
Բոցավառվում են դռներն գիշերվա,
Պատուհաններից թափում են վարդեր —
Արև սիրուհին — հենց բարձիս վրա։

Ո՜, այդ գիշերը այդքան ցնծալից,
Այս առավոտը — վառ, լուսավարար,
Այս շքեղ շենքը, վոր կանաչ բլրից
Ծիծղուն աչքերը սևեռել է վար,

Այս մանուկները — փրփրուն ջրվեժ՝
Ուժով, հմայքով, կախարդանքով լի,
Այս հերոսները և՛ ուշիմ, և՛ վես,
Որ բարձրացել են լեռան կատարին,
Ո՜, այս բոլորը հոգիս կհիշե,
Որպես վեր ճախրող արտուտների յերգ,
Յեվ քեզ, Նաղիրա, իմ առաջին սեր,
Յես չեմ մոռանա յերբեք ու յերբեք...

## ՅԵՐԳ ՅԵՐԿՐՈՐԴ

### ՖԱՈՒՍՏՆ ԱՐԶՆԻՈՒՄ

Խմբով գնում ենք դեպի Արզնի.
Մեզ հետ է նաև մի ծեր ուսուցիչ.
Գերող վաղորդյան հաճելի քամին
Փչում է մոտիկ լեռան լանջերից։
Հարթելով հունը խորդ ու բորդ ու ծուռ,
Մաշելով անվերջ ժայռերն ամպահաս,
Խաղում է Զանգուն։ Ջրերը փրփուր,
Մտիկ տուր, յերգում, յերգում են անհաս
Ցնծում են նրանք. ու նրանց յերգին
Ականջ են դնում ժայռերը տիտան,
Ո՜, այս ձորերում և՛ մարդ, և՛ յերկիր
Ապրում են հույզը շինարարության։

Անցնում ենք խորունկ, մութ ու անհատակ
Մի ձորի յեզրով։ Լուռ ենք բոլորս.
Որը և ջինջ է, և շոյող, և տաք,
Ինչպես արթնացած հին-հին հուշերս։
Ու ամեն մեկս ինքն իրեն ներսում
Խոսում է կարծեք իր մտքերի հետ
Ցավ իր հուշերից հեքիաթ է հյուսում,
Հեքիաթ վոսկեղեն ու արևավետ։
Հեքիաթ՝ նոր մարդու, նոր հսկաների,
Նոր Համերասի, Կոլումբի մասին,
Վորոնց նավերի յերթը քաջարի
Մի օր կհասնեն հեռավոր Մարսին։

Լինան, վոր բնավ տանել չեր կարող
Ու ախոյանն եր խաղաղ լռույթին,
Իր սովորական խայթող հումորով
Վեճի մեջ քաշեց ամպած պոետին։
Խոսքը մեր արդի գրականության
Սահմանից անցավ հեռու, շատ հեռու,
Մի Սայաթ-Նովա, Նաղաշ Հովնաթան,
Մի Նարեկացի, Քուչակ հուրհրան
Դարձան մտքերի, հույզերի բաղխման,
Կռվող կողմերի նշանակետեր...
Մենք վիճում եյինք, թե նրանց նման
Ո՞վ ե այնքան վառ, վառ յերգեր կերտել։

Ծեր ուսուցիչը, այն մեր Քուչակին
Մեծ եր համարում քան մի Հոմերոս,
Քան մի Ֆիրդուսի, ու նույնիսկ Պուշկին, —
Այդ վճիտ, այդ ջինջ, այդ հանճարը ռուս
Սայաթ-Նովային յերկրպագում եր,
Պաշտում եր, ինչպես քուրմը մեծ Զևսին,
Պատանու նման աշխուժ յերգում եր
Վարդի գովերգու բլբուլ Հաֆըզին։
Հայ պոետներից նա ամենաշատ
Սիրով գովում եր հայր Ալիշանին,
Տերյանի գրքերն թողել եր կիսատ,
Վորպես անարև ու մշուշային։

Պոետը նրան խիստ հանդիմանեց,
Վորպես ազգային ու սահմանափակ,
Վոր մոռանում ե հանճարները մեծ
Ու տաղանդներին լոկ տալիս ե փառք։
Վոր խունկ ե ծխում մանր սրբերին,
Տաճարը թողած՝ մտնում ե մատուռ,
Վոր մոռանում ե համաշխարհային
Թախիծը յերգող մի տրուբադուր։
Ցեղ իր ազգային սնափառության

Ձոնգուրն է գովում նա աշուղական,
Ու չի հոտոտում վարդերը միշտ թարմ,
Հավետ բուրավետ ու հավերժական։

— Զզվել եմ, — ասաց, — ձեր ռոմաններից,
Կերակուրներից այդ միատեսակ.
Մինչ իմ կարդացած բազում գրքերից
Լոկ մի քանիսում յես արվեստ տեսա։
Իսկ մյուսները տեղի անտեղի
Կին կամ աղջիկ են բերում ներս խոթում,
Ու գտնելով մի պատահած տղի,
Աղջիկը նրա վզին փաթաթում։
Հետո լաց ու կոծ, դավաճանություն
Ու վարժություններ դերասանական,
Վերջը նրանցից մեկը խմում թույն,
Մյուսը՝ գտնում է մի նոր սիրեկան...

Այսպես է յեղել բոլոր դարերում
Կանոնը վեպի։ Յեվ այժմ գերի
Այդ կանոններին՝ դուք չեք դադարում
Նույնը ներշնչել ձեր նոր յերգերին,
Ձեր նոր յերկերին — նոր մարդու մասին...
Ծանոթ եմ մոտից մեր պոետներին,
Նրանց խոհերին, նրանց յերազին,
Անկեղծությանս գուցե չներեն...
Նրանք նստել են ձեռքերը ծալած,
Մազերը սանրած հանճարների պես,
Նրանց թվում է կյանքը մի անլաց,
Անվերջ խնդության դիմակահանդես։

Թե վարանում ես, փնտռում ես պահանջում,
Կարդա նորագույն մեր վողջ լիրիկան,
Արաքսի նման խոր ու շառաչյուն,
Արարատի պես և՛ վեհ, և՛ հսկա
Լոկ մի պոետ կա, վոր հունն իր ուղու
Հարթել է ինչպես լեռնային մի գետ,

Յեվ դաշտ է իջել բեռներով բեղուն,
Ջրերով լայնհուն և՛ խորունկ, և՛ խենթ։
Իսկ մյուսները մաքսանենգությամբ
Ձկան փոխարեն վորսում են բառեր,
Գրում են բալլադ, գրում են սոնետ,
Գրում են գազել ու նման բաներ...

Բայց յես հոսանքի հորձանքի դեմ եմ
Վարում իմ նավը։ Ի՜նչ ուրախություն,
Ինչ ցնծություն է զգում սիրտը իմ,
Յերբ հանդիպում եմ ժայռի ու խութի։
Ուռչում է կուրծքս, ինչպես հողմերից
Բարձրացած կոհակ։ Յես այդ րոպեյին
Մի կորսիկացի Նապոլեոն եմ մեծ,
Վոր ահ եր ազդում վողջ Յեվրոպային։
Ինձ դուր է գալիս, յերբ իմ նավակին
Բախվում է մի բան, յերբ վոր ջրերում
Փրփուր կա ու յեռ, յերբ հողմն, հողմն
Հարթում է ուղին ազատ, ինքնուրույն։

Ինչպես բոցավառ ճառ արտասանող
Նարոդնիկական ջահել հռետո՛ր,
Սանձելով մտքի նժույգը թռչող՝
Պոետը դարձավ ծովի պես անդորր։
Ձեռքով դեմ տարավ փունջը մազերի,
Վոր սավերել եր աչքերը անտակ.
Բացվեց ճակատը. ճերմակ մարմարի
Փնքո՛ւշ, նրբակերտ մի չքնաղ քանդակ։
Մինչ մենք վորոնում, ջանքեր ենք թափում
Ջախջախիչ փաստեր գտնելու համար,
Լենան պոետի սրտին է խփում
Ավելի դիպուկ, ավելի համառ։

— Վարդենց, ո՛, Վարդենց, հերիք է քայլես
Մաշված, տրորված ճանապարհներով,
Այդ քո խոսքերը հնում են դուր գալիս

Իրենց վերամբարձ «սլացումներով»։
Ինչո՞ւ չես նորից այս մեր օրերում
«Հարությունն» տալիս հին մեռելներին,
Ո՞ւմ ես նինջ բերում, ո՞ւմ ես օրորում
Ցավ ո՞վ է լսում այդ քո օրորին։
Ինչո՞ւ չես ներկում այդ խոսքերդ հին
Քնքուշ շղարշով նորաձևությամբ,
Ո՞ւմ ես մագնիսում քո հեքիաթային,
Ունայնապատիր անտարբերությամբ։

Դու պոեմների կանաչ անտառում
Տեսնում ես միայն մի հզոր կաղնի
Ցավ Ստալինյան բոցաշունչ դարում
Փչում ես աշնան վաղքային քամի։
Իբր թե ցավում ես մեր պոեզիայի,
Մեր արվեստների «կործանման» համար,
Այդ մասին նույնիսկ մի յերազային
Պոեմ ես կերտել խոսքերով մարմար...
Ցավ դու հորդառատ կոկորդիլոսյան
Արցունք ես թափում «մեր բախտի համար»,
Դառնում ես, գոռում ղիլ ու բարձրաձայն՝
«Արվեստն խորտակվեց, ամա՜ն, վա՜յ, ամա՜ն»։

Ո՛, այդ մտքերդ հին են, բարեկամ,
Թիթեղյա խոսքեր՝ բայց վոսկեջրած,
Նրանք լոկ անանկ, չարկամ, ապիկար
Բարբաջանքներ են՝ նոր դիմակ հագած։
Դա վաղուց պարտված, ընդմիշտ ջախջախված
Մի «տեսություն» է, մի մեռած դիակ
Ու այժմ նրա թևերից կախված՝
Բարձրացնում ես, աղմուկ աղաղակ,
Թե իզուր ենք մենք աշխատանք թափում,
Իզուր ենք կերտում մենք մեր կուլտուրան,
Թե՝ «մեր անցողիկ, խառնակ ետապում
Ժամանակ չկա այդ բանի համար»...

Անսպասելի այդ հարձակումից
Պոետ Վարդենը սաստիկ շփոթվեց,
Բայց ուժ հավաքեց բոլոր կողմերից
Ու շփոթմունքը քիչ-քիչ փարատեց·
Փարատեց, սակայն, ինձ թվում էր թե
Նա խուսափում է բաց պայքար դուրս գալ,
Այս խնդրում գոնե, Լենայի հանդեպ
Իրեն զգում էր և՛ թույլ, և՛ տկար։
Եվ նա փոխանակ ուղղակի հարցին,
Հարձակումներին պատասխանելու,
Հեծավ մտքերի, հուշերի և ձին
Գնաց պատույտի հին աշխարհներում։

Նա խոստովանույղ դիմեց իր սիրած,
Հավետ պաշտելի պանդուխտ պոետին,
Կարծես վառվում էր, հրդեհվում սրտանց,
Կարծես կանգնել էր լեռան գագաթին։
— Բայրո՜ն, ո՜, Բայրոն, կախարդիչ պոետ,
Սիրում եմ յես քո հպարտ Մանֆրեդին,
Արևը կմարի, կկորչի անհետ,
Բայց դեռ կվառվի սիրտը Հարոլդի։
Վոչ մի հանճարեղ նկարիչ այնպես
Դեռ չի նկարել դեմքը բնության։
Ինչպես պատկերել ու քանդակել ես
Շնչուն տողերով՝ գարնան պես փարթամ...

Զարձակեցի յես զարմանքի ձայներ
Եվ վոչ հիացքի ճիչեր սրտագին.
Հաճախ եմ լսել այդպիսի ձայներ,
Ձայներ՝ նվիրված մեծ ռոմանտիկին։
Եվ ամեն անգամ, յերբ նա Բայրոնից
Կարդում էր մի բան — մի յերգ, մի պոեմ,
Արբում էր, կարծես նրանց վառ բույրից
Ու նստարանը դառնում էր մի բեմ։
Եվ բեմ էր յելնում Վարդենը ջահել

Արտասանում էր ձոներգն իրա...
Իսկ այժմ... Այժմ ուսուցիչը ծեր
Զարմանք հարցումով — դիմում է նրան.

— Ինչո՞ւ Բայրոնին այդպես կարոտով
Հիշեցիր, տղա՛, չէ՞ վոր նրանից
Ավելի հսկա ու մեծ տաղանդով
Շեքսպիրն է մեծ նայում դարերից։
Չէ՞ վոր Բայրոնը մի մեռնող դասի —
Ազնվականի փառքն է գովերգել,
Այ, ինչ եմ ասել բլբուլ Ֆերդուսին,
Հենց նրան պետք է ընդօրինակել։
Սակայն ուսուցչի խոսքերը հանկարծ
Համրացան օդում ինչպես շանթահար,
Գետը ցասկոտ ու խիստ սրանեղած,
Բացեց սուր վեճի անծայր ճանապարհ։

Հարգում եմ ես քեզ, անծանոթ ընկեր,
Սակայն կարծիքիդ ես համաձայն չեմ,
Շեքսպիրը գրել է հանճարեղ յերկեր,
Բայց միշտ կապվել է կյանքին այս ճղճիմ։
Նրա տիպերը մարդիկ են մեր պես,
Կապված են հողին ու չեն բարձրանում։
Խանդոտ Ոթելլոն, Դեզդեմոնան հետ՝
Սիրում են մեր պես, մեր պես վշտանում։
Ու Յագոների մի անթիվ վոհմակ
Վխտում է շուրջը և նրա, և քո.
Միայն սիրում եմ Համլետի անհագ
Միտքը խուզարկու և հավերժ դժգոհ։

Այլ է Բայրոնը։ Վերցնենք թեկուզ
Մանֆրեդը նրա։ Դա մի անսահման,
Հավիտյան անքուն ու փոթորկահույզ
Հոգու տրտունջ է, վոր հողմի նման
Խորտակում է իր ճամբին պատահած
Ամեն մի արգելք։ Ալպյան լեռների

Արծիվն այդ հզոր, որ թևատարած
Ճախրում է ազատ, ըմբոստ ու արի,
Նա մեզ նման չէ — սողացող ու խեղճ,
Նա արևի պես և՛ մեծ է, և՛ վառ,
Նրա բողոքը՝ մի ահեղ հեղեղ,
Որ խորտակում է ամեն մի պատվար։

Ծեր ուսուցիչը, որ համբերությամբ
Տանում էր նրա ամրակոծության
Համազարկերի ճիչն արագաթափ, —
Սկսեց հանդարտ ու խրատական.
— Սակայն դա վշտի, հուսահատության
Վայրեջքն է, տղաս, դա Մանֆրեդ կամքի
Լոկ անհատական մի հերոսության
Պոեմն է, տղաս։ Մասսայի մասին
Չկա ոչ մի խոսք։ Անիմաստ են այդ
Մենավոր մարդու քայլերը հսկա,
Դա մի ուղի է դեպի մի անհայտ,
Անորոշ, անհույս, տխուր ապագա։

— Մասսա եք ասում, մասսա ու մասսա,
Չգիտեք, սակայն, որ նրա նման
Չկա ավելի արնախում գազան,
Որ նա կողպում է և՛ սիրտ, և՛ բերան։
Չգիտեք, որ նա ծանր ժայռի պես
Կախվում է մարդու մտքի թևերից,
Եվ դահճի նման խիստ ու ժանտատես,
Մեզ կախում է մեր դարի սյուներից։
Դուք աշխատում եք ժխտել անհատի
Ամենակարող ուժն ստեղծագործ,
Կտրում եք, կտրում թևերը մարդու
Որպես մի դաժան, մի ժանտ մսագործ։

Ո՜ Ջորդանոներ, Նյուտոններ խիզախ,
Նստած աղանամն իրենց ուղեղի,
Մեզնից շատ առաջ գտել են լուսնին,

Աստղերին հասնել — անցնելու ուղին։
Նրանք փշրել են այս հողագնդին
Կապող շղթայի օղերը ժանգոտ
Ու բարձրացել են լեռան գագաթին
Արևի նման ու արևի մոտ։
Ամբոխը ուժով ուզել է նրանց
Այդ բարձրությունից անդունդը քաշել,
Բայց տեսեք, տեսեք աստղերն անանց
Ինչ վառ են փայլում գարնան այս գիշեր...

Իսկ մենք, հողեղեն արարածներս,
Վոր մի փոր հացի համար ենք տնքում,
Վոր վոչխարների հլու հոտի պես —
Միայն ուտում ենք ու հանգիստ քնում
Յեվ կարծում ենք, թե ստեղծել ենք մի
Յերջանիկ ու շեն յերկրային դրախտ,
Մեզ վարակել է մի հաշիշային,
Ամեն ինչ լափող ուրախության ախտ։
Այլ է Բայրոնը։ Թիզախ ծովահեն,
Իր դարի ընդդեմ մարմնացած բողոք,
Վոր հարություն է տալիս անցյալին
Իր պոետական հմայուն փողով։

Անցյալի վայրկյանը ապագա դարեր
Յեվ նույնիսկ ամբողջ գալիքը արժե,
Գալիքը կգա, անցյալն հետ բերել
Դեռ չի հաջողվել և վոչ մի ուժի —
Ո՜, նայիր ձեռքիս այս ժամացույցին,
Տե՛ս ինչ արագ է սլաքը թռչում,
Այդ մեր կյանքն է, վոր ձեռքը ծոցին
Վայրկյան առ վայրկյան գնում է կորչում։
Թե քաջ ես, հզոր, վերադարձրու,
Հետ տուր ինձ անցած վայրկյանն այդ չնչին,
Ո՜, դու անզոր ես, դու մժղուկ, դու լու,
Վոր տեր ես կարծում քեզ ամեն ինչին։

Մի որ ուղղակի քարին եմ խփել
Ու փշրել ձեռքիս ժամացույցը չար
Ցավ սկսել եմ ինքս ինձ խաբել,
Վարպետի մատնում է՛ մահ, և աշխարհ։
Չէ՞ որ ամենից ակնհայտ ու հեշտ
Մեզ ցույց է տալիս սև փոսի ուղին
Սլաք սրիկան, որ այդպես անհետ
Փախչում է հապճեպ ու գաղտագողի։
Փշրել եմ սակայն մի այլ ժամացույց
Ավելի պարզ է ուղին ցույց տալիս,
Նայիր մազերիս, տես, ինչպիսի ցուրտ
Ձմեռ է իջնում գլխիս, քունքերիս...

Իր վերջին խոսքը հաղթական տոնով
Շեշտեց պսետը ու տաավ դադար,
Ինչպես լողացող տապաստանավ՝
Հեռվից գալիս է մի ամպե անտառ
Իսկ ընկերուհիս, որ թվում էր ինձ,
Թե չի լսում այս արյունոտ կռվի
Սրերի ձայնը ու լուկ անթախիծ
Ունկնդրում էր կարկաչը առվի,
Կամ ճանապարհին աչքերը նրա
Դիտում են կանաչ արտերը անծիր,
Հանկարծ պսետի դիրքերի վրա
Կապեց անվրեպ մարտի գնդացիր։

— Թեև ակներև, բայց պետք է ասեմ,
Վար մեր բարձրագույն ուսումնարանից,
Գիտությունների այդ արսենալից
Դու դուրս ես յեկել բոկոտն, անզեն։
Դու մնացել ես նույն հեգելխաղը,
Ֆրիդրիխ Նիցշեյի ջերմ յերկրպագուն,
Ու չես վողջունել բարի գալուստը
Աստղալի կյանքի — այս մեր աշխարհքում։
Դու միշտ պնդել ես, թե կոսմիկացի

Նապոլեոնից էլ վեհ անուն չկա,
Թե՝ մենք ունենք լոկ մի Նարեկացի,
Վորին չի հասնի և վոչ մի հսկա։

Իբրև դիտում ես կանգնած վիճակում,
Չես տեսնում նրանց ընթացքը հասուն,
Դու վողջ աշխարհից մի խուց ես ջոկում,
Փակվում ես մեջն ու յերգեր հյուսում։
Յեվ հնադարյան ճգնավորի պես
Անեծք ես կարդում մարդկանց շառաչուն,
Սրընթաց թափին։ Դու փափագում ես
Ապրել լոկ՝ ինչպես մենավոր թռչուն։
Զգիտես, սակայն, վոր մեր այս դարում,
Ուր — քո ասածով բացվել են արդեն
Ուղիներն — դեպի աստղային հեռուն,
Մարդիկ մենակ են լոկ մութ դաղաղում։

Ներբողում ես դու ուժը ալիքի
Ու մոռանում ես ավկիանի մասին, —
Դրա համար են յերգերդ դատարկին,
Անգույն, անկրակ, արցունքոտ ու սին։
Հին արժեքներին դու ծունկ ես չոքում
Ինչպես հին քուրմը — բագինի առաջ,
Սակայն չես տեսնում — ինչպես են ծաղկում
Նոր պարտեզները մեր մշականաչ։
Բայց, տես, այս դարի վազքը սրընթաց,
Կարող ես մենակ շուռ տալ դեպի հետ...
Այնպես էլ կյանքը հին, անվերադարձ
Էլ չի դառնա յետ, էլ չի դառնա յետ։

Հաղթանակ տարած Կյուվեյի նման,
Վոր պարտված կարծեց մեծ Սենթիլերին,
Քայլում եր հպարտ — սրտաջինջ Լենան
Հայացքը հառած հեռու լեռներին։
Իսկ ուսուցիչը, ինչպես Հռոմի
Մի ազնվազարմ ծերակուտական,

Վոր հանկարծ լսած շեփորը ռազմի —
Բյուր սարուկների ապստամբություն,
Գլուխը կորցրած ու սարսափահար,
Հարձակում կրած մի մարդու նման,
Սկսեց նորից մեզ ու հայրաբար
Ծույլ խոսքերով խրատել նրան։

— Արհամարհում եմ բազմությունների
Ում ամենաքաջը։ Զգիտես, սակայն,
Թե ինչ է արել բազում դարերի
Խիզախ հերոսը — մեր մասսա-հսկան։
Այստեղ — այս ձորում, ուր մի ժամանակ
Կային լոկ հյուղեր — մութ ու ձեռանափոր,
Այստեղ — այս դաշտում, ուր լոկ մի առվակ
Լալիս էր տրտում ու սրտակտուր,
Այստեղ, այս լեռան ծաղկավետ լանջին,
Ուր մի ժամանակ — անողոք ու խիստ —
Շաչում էր տիրոջ ջլապինդ ղամչին —
Այժմ ծփում է մի ազատ, մեծ սիրտ։

Պետը համառ խոսք էր վորոնում,
Վոր ուսուցչին տա հակահարված,
Մի քանի րոպե, կարծեք վարանում,
Կարծեք սրտումը ծնվում է կասկած.
Նա չի հավատում իր թույլ ուժերին,—
Նրան տանջում է մի անբուժելի,
Անդամալուծող հին հիվանդություն,
Վորի անունն է հոռետեսություն։
Վորոճում է նա պայթուցիկ խոսքեր,
Խոսքեր թունավոր ու խռովարար...
Մինչդեռ, մեր Լեռան ծաղիկները գրկել —
Կենսատու հյութ է սրսկում նրան։

— Վարդենց, սիրելիս, այս մեր յերջանիկ
Կյանքը կերտել է հենց հերոսը այդ,
Այս մեր կիրճերը, ժայռերն անառիկ

Չեր կարող տիրել և վոչ մի անհատ։
Ո՜, մասսաների թովիչքի դիմաց
Քո հերոսները խեղճ են ու անճար,
Բայց նրանց տաս՝ կաղնու պես կանգնած՝
Այդ ղեկավարն է մեր բազմահանճար։
Տանում է նրանց նա մեծ գրոհի
Հանուն աշխարհի վերափոխության,
Ու նրանցով է ինքը հաղթարի,
Ցեղ անպարտելի, և հսկա տիտան։

Լուռ է պոետը... Իր մտքի հանքում
Կարծես լսվում է ձայնը քլունգի...
Նա վերհիշում է անցյալի մեգում
Մշուշված դեմքեր, դեպքեր ոլոտադին։
Մտնում ենք ձորը։ Վերևը՝ քարափ,
Վարից կախվել են — ժանիքների պես
Ահավոր ժայռեր։ Հեռվում մի քաղաք
Աչքով է անում ու կանչում է մեզ։
Ու մոխրի բարակ շղարշով պատած՝
Հուշ-խարույկների շեղջը խառնելով՝
Մերթ ամպոտելով, մերթ պարզ, սրտաբաց
Պատմում է պոետն հուշեր խուռներամ...

— Հիշո՞ւմ ես, Լենա, հին պրոֆեսոր,
Այդ կարճլիկ ու հաստ քնած «Ամպլոպլին»,
Խոսում էր սակավ, սակայն պաթոսով
Մերթ-մերթ յելնում էր բարձր ամբիոնին։
Հիշում եմ։ Մի օր լսարանը մեր
Փրփրած գետի պես՝ յելած ափերից՝
Քրքրում էր մի հանգուցված խնդիր։
Նա ծանրածանր, հորանջուն, քնկոտ,
Կլոր միրուքը շոյելով խաղաղ —
Տնական ու վես տեղից բարձրացավ.—
Տղերք, ինչո՞ւ յեք, ինչպես աքաղաղ
Մեկ-մեկու տալիս ուսը — կտուցի ցավ։

Հարցը պարզ է, պարզ, գարնան արևոտ
Ցերեկների նման։ Ըստ իմ կարծիքի
Այսպես է լուծվում հանգույցը «կնճռոտ»։
Սպասում եյինք «թեզավորը» խոսքի։
— Տղերք, — ասաց նա, — կասեմ մի կարծիք.
Թե համաձայն չեք՝ մի ուրիշը կա...
Հիշում եմ, ինչպես պայթեց խուլ աղմուկ
Ու գահ բարձրացավ ծիծաղի ալքան։
Բրբջում եյինք և գոռ, և սուր,
Ծիծաղեց նույնիսկ Ամալյան անխոս,
Ու լսարանը դարձավ անտավոր
Փախուկների խակական քաոս։

Իսկ Համզյան, այդ չէ, այդ կաղնեհատակ
Դյուրավառ ազան, այնպիսի բարձր
Մի ծիծաղ ուներ, վոր ինչպես հորձանք՝
Լցրեց միջանցքը ու արշավեց վեր...
Հիշում եմ նաև, ինչպես մի անգամ
Իր չկարդացած գրքերի մասին
Մեր մի ընկերը խոսեց յերկու ժամ,
Իսկ դասախոսը զեկուցումը սին՝
Դատավ բավարար։ (Ցավ պետք է ասել,
Վոր դասախոսը մեր այդ անվանի
«Քննադատ» եր մի, և պետք է հիշել,
Վոր և վոչ մի գիրք նա գրած չուներ)։

Ունեյինք նաև մի քանի գրքի
Սահմանից չանցած մի դոցենտացու,
Խոսում եր անվերջ, կրկին ու կրկին
Նույն հարցերի շուրջ.. Միթե չեր զգում,
Սիրելի Լենա, այդ խեղճ տիրացուն,
Վոր մենք նոր դարի, հեղափոխության,
Գնացքն ենք նստել, վոր դիլ են դնդում
Թռչող գնացքի ռելսերը խնդուն։
(Արտասանում եր հայերեն բառեր,

Բայց հայրենի մի նշույլ չկար,
Նա մեր մտքերին դարձել էր մի բեռ,
Իսկ մեր մեջքերին, ծանր, ճզմիչ քար...)

Հուշերիս ամպոտ ու մութ յերկնքում
Կայծակի նման լուսավորելով
Խորունկ խորշերը մթթորկուն հոգուս —
Իմ դեմ է յելնում իր վեհ հասակով
Ու իր ճակատով — ովկիանի պես լայն՝
Մեր գիտակցական մառախալիղմի
Դատախազը սեգ։ Նայում եմ նրան,
Սիրելի Լենա, կարծես հենց հիմի
Խոսում է հետս, ու յես զգում եմ,
Տեսնում եմ՝ նրան ճակատի դաշտում
Ու արտահայտիչ անհուն աչքերում
Ինչպես է սուլում վշտի խենթ քամին...

Անսահման սիրով լսում էյի յես
Այդ մարդուն միայն։ Նա իմ մեջ վառեց
Գիտության հուրը, վորին թե լցնես
Ովկիանոս մի ջուր՝ չեր կարող մարել։
Սակայն յես նրա տեսակետին էլ
Համաձայն չեյի։ Նա ներբողում էր
Միշտ նույն հերոսին. (դե, ինչպես տանել,
Յերբ քարկոծվում են քո հին աստվածներ)։
Բայց սիրում էյի — ժպիտով ժլատ
Ու խիստ քննադատ — այդ պայծառ մարդուն,
Նա մի արև էր — մութ ու միգապատ
Խեղճ մարդուկների այդ մթնոլորտում։

Ո՜, այդ օրերը ինձ տվել են թույն,
Սիրտս կարել են մի բութ ասեղով,
Ինչև յես հոգուս մակընթացության
Ահավոր ժամին — դուրս գալիս բաց ծով։
Փայփայում էյի և՛ աղջիկ, և՛ վարդ,
Ու գրում էյի սիրո պոեմներ,

Վարդանում էլի մենավոր մի վանք,
Մի խաղաղ անկյուն — անձայն, անընկեր։
Բայց այլ էր, այլ էր, սիրելի Լենա,
Այդ ժամանակի բացարձակ վոգին,
Ու բարձրանում էր հարկն հարկի վրա —
Քո այս մարմարյա, այս լուսեղ շենքը։

Ու յերգում էին, բոլորը յերգում.
Նավաստին՝ ծովում, բանվորը հալած
Յերկաթի առաջ ու խորունկ հանքում,
Կոլխոզնիկը՝ լայն ու համատարած
Ծփուն արտերում, գինվորը — կարմիր՝
Մեր անծայրածիր սահմանի վրա՝
Ու պոետները — պոետները մեր
Յերգում էին լոկ վերելքը նրա։
Իսկ յես վայրենի վարդենիների
Մահն էլի լալիս, ինչպես Բաղդադի
Մեծանուն պոետ — վշտոտ Մահարին՝
Զենքը դրի վար ու փախա մարտից։

— Վարդենց, ո՜, Վարդենց, դրա համար էլ
Այդ շենքի նման ու այդ շենքի հետ
Պոետներ են նոր յելել — բարձրացել,
Իսկ դու մնացել, մնացել ես հետ։
Դու յեզասայլի թափով ես վազում
Մեր սուր — սլացող գնացքի յետքից,
Դու հին հայկական հեքիաթ ես ասում
Յեվ յերգախառն, և դառնակսկիծ։
Զես տեսնում, սակայն, վոր շատ են փոխվել
Մարդիկն ու աշխարհ, սարեր ու ձորեր,
Վոր մաքառումով, բարձրանում են վեր
Յեվ յերիտասարդ, և՛ մանուկ, և՛ ծեր։

Դու այն Մանչացի Դոն-Կիխոտի պես՝
Ձեռքումդ նիզակ ու ասպետական
Սաղավարտ գլխիդ՝ յելել ես հանդես,

Ո՜, խղճուկ Վարդգես, չգիտես, սակայն,
Վոր հերոսական մեր արագ վազքի
Թռչող գնացքից դու վայր ես ընկել,
Դարեր են անցել... Զարթնել ես կրկին,
Յերգում ես վաղուց մոռացված յերգեր։
Դու խիստ զայրույթով դատապարտում ես
Մեր ժողովները... Տանջող ձանձրույթով
Նստել ես լսել... Անիծել ես մեզ
Ու միշտ խռով ես յեղել դու սրտով։

Գանգատվում ես, թե շատ եյինք խոսում,
Բայց յերբևիցե գարնանամուտին
Տեսե՞լ ես, ինչպես սառցային մի սյուն,
Գահավիժում է, գլորվում գետին։
Ու սկսվում է անդուստ մի ձնհալք։
Յերգում են հազար — հազար առուներ,
Գետը վազում է կոհակ առ կոհակ,
Ու կարկաչում են անթիվ աղբյուրներ։
Լսվում է ճախրող թռչունների յերգ,
Գառների մայուն, ձիերի խրխինջ,
Գարունն է գալիս, զարթոնք է, զարթոնք,
Գալիքը վառ է, և դյութիչ, և ջինջ...

Կարո՞ղ ես, կարո՞ղ զարթնող բնության
Առաջը առնել, — ո՜, վո՛չ, չես կարող,
Նա գարնան համար բոցուն ցնծությամբ
Ուղի յե հարթում ճիգով, պայքարով։
Այդպես էլ, Վարդգես, նոր, ո՜, նոր կյանքի
Զարթոնքի ժամին դու չես կարենա
Առաջը առնել՝ խոսքի, հրճվանքի
Վարար հոսանքի։ Ինքնաբուղխ է նա՝
Վորպես լեռներից պոռթկող հորդ աղբյուր,
Վորպես սիմֆոնիա մեծ Բեթհովենի,
Իսկ դու սիրում ես մի թեթև բամբիռ
Ու նոճի ծառեր — քեզ ամպհովանի։

Յեվ դու լսել ես այդ մեծ սիմֆոնիան,
Վորպես դերվիշը արևելցի,
Սիրուհուց խոցված պատանու նման —
Վորոնել ես լոկ շեշտերը լացի,
Չես գտել, ավա՜ղ... ու տառապել ես...
Իսկ այդ սիմֆոնիան բերդեր գլավոր
Մասսաների պես և՛ հպարտ, և՛ վես,
Հնչել է անվերջ մարտի դրոհով։
Ու դրոհել են մասսաները հեծ
Բարձունքից բարձունք, գագաթից — գագաթ,
Իսկ դու... դու վորպես ճահճային մի ոձ՝
Լացով ես դիտել այդ յերգը զվարթ։

Սերգոն, վոր մինչ այդ ծանրախոհ ու լուռ
Լսում եր վեճը մեր հետաքրքիր,
Իր խորագնին աչքերը հուր-հուր,
Հանկարծ սևեռեց պոետի դեմքին։
Ու նրա այրող հայացքի առաջ,
Վորդենյն ակամա գլուխը կախեց.
Բայց նա գետի պես՝ հորդած, վարարած՝
Յեվ ափ, և պատվար խորտակեց, քանդեց։
Անզիջում, ամուր՝ զերթ պողպատ անթեք՝
Կրքոտ, բայց զսպված Սերգոն եր խոսում։
Նրա խոսքերը՝ զերթ թունավոր նետ,
Խոր մխրճվում եյին պոետի սրտում։

— Մեծ համբերությամբ, հուզված ասաց նա, —
Լսեցի յես ձեր վեճը «իմաստուն».
Թույլ տվեք այժմ լինել անխնա՝
Ինչպես հատուկ է կոմունիստ մարդուն։
Չե՞ վոր հանճարեղ Իլյիչն անմահ
Ու մեր պողպատե առաջնորդը մեծ՝
Մարտում յեղել են դաժան, անխնա,
Այդպես ել կռել ու կոփել են մեզ։
Չե՞ վոր փառապանծ մեր կուսակցության

Հողուց մի մասնիկ կա նաև իմ մեջ
Ու չէ՞ որ նա յե ավել հողուս թափ,
Մտքերիս՝ թռիչք փառահեղ ու մեծ։

Դու, ընկեր Վարդենց, խոսում ես հուզված,
Զակված խոսքերով ու դառնակսկիծ.
Սակայն մտքերդ հին են, գզգզված
Ու փոխ առնված այս կամ այն գրքից.
Կյանքն է ահա շունչն ամեն ինչի,
Որ պակասում է այդ քո մտքերին,
Դրա համար են խղճալի, չնչին,
Ցեվ յերազներդ, և մտքերդ հին։
Դու «վարպետորեն» ու «տաղանդավոր»
Փայլուն ասելը ես շարում կողք-կողքի,
Բայց ստացվում է լալկան, ողավոր
Մի մահվան քայլերգ՝ անհույս, անհոգի։

Այսպես օրինակ՝ Շոպենհաուերյան
Անհույս, անկրակ հոռետեսությամբ
Դու մեր այս չքնաղ կյանքը հուր-հուրան,
Մեր վերելքը մեծ ու արագաթափ
Համարում ես լոկ մահվան մի թափոր,
Իսկ մեզ՝ հնազանդ վոչխարների հոտ...
Դու ամեն ինչին նայում ես թափուր,
Աներև սրտով ու աչքերով խորթ։
Բայց մի՞թե այստեղ կա ճշմարտություն
Գոնե մի հյուլե, մի չնչին մասնիկ...
Դրանից ել բութ, անճիշտ, անտաստամ
Մեղադրանք կա՞ նոր մարդու մասին։

Մենք, որ յերեք մեծ ու աշխարհացունց
Հեղափոխության առաջամարտիկ
Զինվոր ենք յեղել, մենք, որ մահացու
Հարված ենք ավել թշնամուն վամպիր,
Մենք, որ փոխում ենք հունը գետերի,
Աստղերի անհաս աշխարհն նվաճում,

Վոր շունչ ենք տալիս անապատներին,
Ուր գարուն հասկն է խնդությամբ աճում.
Մենք, վոր անդադար վերափոխում ենք
Յե՛վ մարդ, և՛ աշխարհ, և՛ հողի և՛ սիրտ,
Հլու հնազանդ վոչխարներ ենք մենք,
Ուրի՞շն էր արդյոք, թե այդ դո՞ւ ասիր։

Անարխիստի պես մոտենալով վողջ
Համաշխարհային գրականության՝
Ընկար մտքերի լաբիրինթի մեջ,
Ու հակասության փակուղին մտար։
Խարույկի վրա բարձրացրիր դու
Արվեստի Մոնբլան մեծ Շեքսպիրին,
Միայն Բայրոնին, այդ անհույս մարդուն,
Հասցրիր հեռու, հեռու աստղերին։
Ի՞նչն է պատճառը քո այդ անհեթեթ,
Քո այդ «ինքնատիպ» մտքերին, ընկե՛ր,
Իզուր չես թափում արցունքի հեղեղ,
Մեզ ինչի՞ չեն պետք այդպիսի յերգեր։

Չէ՞ վոր մարդկության հանճար մեծագույն
Համայնապարփակ Մարքսը վեհ ու մեծ
Անհուն սիրով է սիրել հմայուն
Շեքսպիրին, ջինջ ու արևամերձ։
Չէ՞ վոր դեռ վոչ մի մեծ արվեստագետ
Հզոր հանճարեղ ճարտարապետ մարդ
Չի կերտել մի նոր իմաստուն «Համլետ» —
Աստղալի յերկինք, և վճիտ, և բարդ։
Չէ՞ վոր դեռ վոչ վոք այնպես բազմերանգ
Չի արտացոլել կյանքն իր դարի,
Ինչպես արել է խիզախ վողբերգակ —
Շեքսպիրը վեհ, մեծ ու վիթխարի։

«Նա պատկանում է բոլոր դարերին»
Ասել է մեկը Վիլյամի մասին,
Թեև ընդհանուր ու տարերային

Թատեր են դրանք — բոլոր միասին,
Վարավնեան մեր տիեզերքի մեջ,
Ամեն ինչ հոսում, փոխվում է անվերջ,
Բայց պետք է ասել, որ այդ ընդհանուր
Թատերքում էլ կա ճշմարտության հուր,
Մարդկային հոգու մեծ ճարտարապետ,
Որ կառուցել է շենքեր վիթխարի —
«Մակբեթ», «Լիր արքա», «Օթելլո», «Համլետ»
Չի պատկանում լոկ և լոկ իր դարին...

Չե՞ս տեսնում, միթե, մեր նոր արվեստի
Բարձրացող շենքը վիթխարահսկա,
Նա կարիք չունի ոչ քո գովեստին,
Ոչ քո քնարին, հույզերին մրսկան։
Նա մեր անսահման մեծ հայրենիքի
Հող ու ջրից է կյանք առնում, աճում.
Դու այդ շենքի մեջ կլսես յերգի,
Նվագի ձայներ՝ և՛ բազմահնչյուն,
Ցնծ բազմալեզու, և՛ վեհ, և՛ խնդուն։
Այդ շենքի համար, լսում ես, ընկեր,
Որպես քար, ցեմենտ, ապյուս ու բետոն՝
Մենք գործածում ենք հույզեր և յերգեր։

Դա շենք չի, այլ մի հոյակապ համերգ,
Որ հորինել է ոչ թե մի Վագներ,
Ոչ թե Բեթհովեն — — դարերով անմեռ,
Այլ աշխատավոր ժողովուրդը մեր։
Սակայն ոչ միայն ժողովուրդը մեր,
Այլ և շատ ու շատ այլ ժողովուրդներ,
Յուրաքանչյուրը իրա ազգային
Ձեն է հաղորդել այդ վեհ հսկային։
Սակայն այդ ձեը հագեցած է վեհ
Սոցիալիստական բովանդակությամբ,
Ու այդ յերգով է սուրում դեպի վեր
Մեր յերկիրը մեծ ու արագաթափ։

Ու մասնակցում են այդ մեծ համերգին
Թե քո ակնարկած պոետը հուր-հուր,
Թե այլ պոետներ մեր նորոգ կյանքի,
Վոչ վարպետ ուստա, կամ մի օրվա հյուր,
Այլ ամեն մեկը իրա գործիքով,
Իրա յերգերով — կենսախինդ ու նոր,
Յեվ հորինվում է բոլորի ձիրքով,
Բոլորի ձեռքով այդ յերգը հանուր։
Գուցե իմ խոսքը այսքան չերկարեր,
Թե վոր չզգայի, վոր մի պինդ ճակատ
Ուզում է այսօր մեր դեմ պայքարել
Զենքերով և՛ հին, և՛ բութ, և՛ ժանգոտ։

Սերգեյի խոսքը հնչում եր վստահ՝
Ինչպես հնի դեմ դրոհող բանակ.
Ինչքան ճգնեցի, մի բառ չգտա,
Վոր հիացմունքիս փակ լեզուն բանար։
Այդ մարդու խոսքում կար ստալինյան
Անդրդվելի կամք ու արիություն.
Հենց այդ եր, այդ եր, վոր իր ջերմությամբ,
Յեվ համոզում եր, և խորը դյութում։
Հենց այդ եր, վոր իր ճշմարտապատում,
Փաստառատ վեճով, կենսուրախությամբ
Պոետի դեմքին ամպեր եր բարդում,
Գորշ, արճիճ ամպեր հուսաբեկության։

Բայց նրա խոսքը դարձավ ջախջախիչ,
Ավելի հատու, անողոք, դաժան,
Աչքերը՝ շանթառ, շարժումները՝ խիստ,
Հոնքերը ծանրացան, ինչպես մռայլ ժայռ
Յերբ նա վերլուծեց պոետի հոգին,
Անլույս մտքերը, գալիքի մասին,
Յերբ նա անխնա մատնելով հրին՝
Թանդեց պոետի տաճարները հին։
Յերբ նա ծառացավ Վարդենցին ընդդեմ,

Վարպետ իսկական խիզախ լենինիստ,
Որ գիտե հինը արմատից քանդել,
Թշնամու դեմ միշտ անսասան և խիստ…

Դու,— ասաց Սերգոն,— ներկայից դժգոհ,
Գալիքից անհույս, անհեռանկար,
Մինչհոկտեմբերյան անցյալի դժգույն
Ու նույնիսկ նրա էջերը մայլ,
Զարդարում ես վառ, վառկեցույն շարով,
Մետաքսյա քող ես գցում յերեսին,
Յեվ թվում է, թե սոր ու շոր՝
Յեկեղեցի յես տանում նոր հարսին…
Դու յերազում ես, փիլիսոփայում,
Զանգերդ ես կարդում այդ նորահարսին,
Ջերմ գուրգուրում ես, սիրով փայփայում
Յեվ անուրջներով և մտքերով սին։

Ճիգ չես խնայում փրկելու համար
«Վասիլի մակույկը» այդ խորասուզվող,
Յեվ ատելությամբ, դայլուլթով համառ,
Աչքերիդ մեջ թույն ու սրտիդ մեջ վախ —
Դու մեր գալիքը ժխտում ես իսպառ,
Ներկան թաղում ես, զերթ օտար մեռել,
Ու վորոնում ես մի նոր ճանապարհ,
Բայց ձուր… դեպի վեհ, բարձրաբերձ լեռներ,
Դեպի աստղալի աշխարհը անհայտ,
Դեպի նոր ափեր, նոր Մարսեր դյութիչ,
Ո՛, վոչ, քո ուղին և՛ հեշտ է, և՛ հարթ,
Քո վորոնածը՝ արցունքոտ թարթիչ։

Քո ճանապարհը վոչ Կոլումբների,
Վոչ Նյուտոնների ուղին է, ընկե՛ր,
Դու տխուր ձայնով ու կարոտալի,
Լոկ յերգում ես հին ու տաղտուկ յերգեր։
Հեծած պապական յերջանիկ էշին՝
Դու մեր հայկական հին առապարով՝

Բարձրացնելով դարավոր փոշին,
Յերգելով վաղուց մեռած բարբառով՝
Յետ ես դառնում, յետ, վորպես նահանջող
Վիրավոր, անզեն, վշտահար ասպետ...
Յեվ քեզ թվում ե, վոր դառն ղողանջով
Վողջ բնությունը վողբում ե քեզ հետ։

Անցյալ մի րոպեն թանգ ե քեզ համար,
Քան թե մարդկության ամբողջ ապագան,
Իսկապես ասած՝ չեմ գտնում մի բառ,
Վոր լավ վորոշեր քո այդ ապիկար,
Քո այդ այլանդակ միտքը անափառ...
Իհարկե, անցյալն մենք ամբողջովին
Չենք ժխտում այնպես բիրտ, վանդալաբար,
Ինչպես մոռեցար մեր ապագային...
Անցյալն ել ունի ուսանելի բան,
Մենք ժառանգում ենք այդ ուսանելին
Ու կոփում, կռում մեր ջինջ ապագան
Ներկայիս ընդուն, պողպատե սալին։

Ու չե՞ վոր նույնիսկ միջնադարի լուռ,
Խավար գիշերում կան լույսի փնջեր—
Սերվանտես, Դանտե, Գալիլեյ հուր-հուր,
Վոր այնպես խանդով, գեղուն, սիրաջերմ,
Յերազել են վեհ գալիքը պայծառ,
Տենչացել են նոր այգաբացը վառ...
Մենք յերբեք, յերբեք վոչ վոքի չենք տա
Մարդկային մտքի և վոչ մի տիտան։
Մեր հայացքը միշտ ուղղված ե առաջ,
Իսկ քո աչքերը միշտ յետ են նայում.
Այդ քո յերգերով — ահ, դառնահառաչ՝
Այդ ո՞ւմ ես, ո՞ւմ ես, ո՞ւմ ես հմայում։

Սերգեյի խոսքերը կայծակների պես
Ոգում գծեցին հարցական նշան,
Իսկապես ասած՝ պոետը՛ ամպեց,

Հոնքերին իջան յերկու ծանր մայու։
Լենան ուրախ եր, վոր իր կողքին կա
Այդպիսի խելոք, խիզախ զինակից։
Բայց ինձ թվում եր, վոր դժգոհ ե նա
Նրա մանկության ամեն մի զարկից։
Լուռ ենք։ Փչում ե դուրեկան մի հով,
Մասրենիներն են համբուրվում ձորում...
Ու ահա Սերգոն անհուն խնամքով
Լենային բռնած ուղին ե «ծռում»։

— Յես քեզնից գոհ չեմ, սիրելի Լենա,
Դու շատ քնքուշ ես դեպի թշնամին,
Դու հիմնականում մերն ես անպայման,
Բայց մերթ դառնում ես աննյութ, անմարմին։
Շեղվում ես ուղուց մեծ առաջնորդի
Քաղքենիության ճահիճը սուզվում,
Յերես ես տալիս դյուրաբեկ սրտին,
Թշնամու ցավով շատ շուտ ես հուզվում...
Սիրելի Լենա, սիրելի Լենա,
Հաղթե՜լ ես ուզում ճակատամարտում, —
Թշնամու հանդեպ յեղիր անխնա
Յեվ սրտին շատ քիչ, շատ քիչ յերես տուր։

Հուզված եր Սերգոն, անսահման հուզված,
Անխնա եյին զարկերը նրա,
Տեսնում եյի յես՝ ինչպես բորբոքված
Գրավում ե նա դիրք դիրքի վրա։
Յեվ գուցե վեճը շատ հեռու գնար,
Դառնար իսկական սրամարտություն,
Թե վոր Արզնին հանկարծ չերևար
Շենքերով շողուն և ջինջ, և խնդուն։
Յեռեն թողնելով ամբարտակը հաղթ,
Վոր դեմ ե կանգնած Զանգվի ջրերին,
Խանդավառությամբ մեր մշտազվարթ
Խմբով մտնում ենք չքնաղ Արզնի։

Երկար շրջում ենք։ Կեսօր է արդեն,
Գարնան արևը մաղում է վոսկի...
Ո՜, այնքան վարդեր, վարդեր ու վարդեր,
Բազմերանգ, գունեղ, թիվ չկա իսկի։
Ճաշելուց հետո քիչ հանգստանում,
Հետո գնում ենք իմ մի ընկերոջ.
Նա ուրախությամբ մեզ տանում է տուն,
Ծառուղով կանաչ ու նորաբողբոջ։
Նկարիչ է նա ու նկարչական
Մուզեյի վարիչ՝ մի զգայուն մարդ.
Հայացքը նրա նման է մանկան,
Թեև մազերում կան թելեր արծաթ։

Նստում ենք նրա գողտրիկ պարտեզում,
Զանգվի ձախ ափին—խնձորենու տակ,
Տեսարանը մեզ դյութում է, հուզում՝
Վորպես ծփացող լիճը կապուտակ։
Տարիներ առաջ, ցուրտ ձմրան մի օր,
Երբ նոր էր դրվում հիմքն ամբարտակի,
Եղել եմ այստեղ՝ վորպես մի ճամբորդ,
Մի թափառական մենավոր վոգի...
Ի՜նչ փոփոխություն, ինչպիսի՜ թռիչք,
Կարծես դարեր են սահել ու անցել.
Ո՜, ինչ աշխատանք, ինչ յեռանդ, ինչ ճիգ,
Այս ի՜նչ շողշողուն ճամփա յենք բացել...

Սերդան ինձանից խնդրում է մի գիրք։
Տալիս եմ նրան իմ «Սեր» պոեմն.
Հետաքրքիր է, շատ հետաքրքիր,
Նրա կարծիքը, ճաշակն իմանալ։
Վերցնում է գիրքը, անունը կարդում,
Մի քանի րոպե թերթում մտախոհ.
Ինչ-վոր տողերին նայում է ժպտում,
Հետո ծածկում է... Ինձ թվում է՝ դոհ։
Ու բաժանվում է, հեռանում մեզնից,

Առանձնանում է, պառկում ծառի տակ,
Կարդում է «Սերժ»-ը... Նայում է վերից
Երկինքը՝ կապույտ աչքի պես հստակ։

Մինչ յես հուշերիս գիրկն եյի ընկել,
Դանդաղումս խշշում եր մտքերի մի հողմ,
Պետան ու Լենան, վորպես մոտ ընկեր,
Կամրջից անցան Զանգույից այն կողմ։
Ու նկարիչը նայելով նրանց,
Մի հոգոց քաշեց սրտի խորքերից,
Տխուր աչքերով պարզ ու սրտաբաց
Մտերիմի պես այսպես դիմեց ինձ.
— Լսիր, Արմենակ, պատմելու յեմ քեզ
Վաղուց պատահած մի դեպքի մասին,
Մի աղջկա մասին — ջինջ ու վառկեցես՝
Ուզում ես լսել — Շատ սիրով՛ ասի։

Սրարշավ գետը թռչում է առաջ,
Վորպես սանձարձակ փրփրարաշ նժույգ,
Ու ալիքները թե ու թափ առած՝
Ուրախ պարում են մերթ մենակ, մերթ զույգ։
Հանդիստ նստելով կանաչի գոգին,
Ոտները կախած զովաշունչ ջրում՝
Ու խորասուզված ովկիանն իր մտքի՝
Մի պահ լռում է ու խոր անրջում։
Հետո պատմում է մի տխուր զրույց
Եվ պատկերավոր, և պարզ, և գունեղ,
Ո՛, նա պատմելիս այնպես սրտառուչ,
Այնպես տխրալի մի հայացք ուներ...

# ՅԵՐԳ ՅԵՐՐՈՐԴ

## ԽԱՎԱՐ ԶՆԴԱՆԻՑ ԴԵՊԻ ՀՈՒՐ ԱՐԵՎ

*«Մայրս հացթուխ էր, հայրս ջաղացպան
Սուրեն Սերգեյիչ Տեր-Թովմասենց մոտ,
Իսկ մեծ յեղբայրս — մի պարթև չոբան,
Աչքերը — մաղնիս, դեմքը թխամորթ։
Քաջ էր յեղբայրս։ Ո՜, քանի, քանի,
Գայլի բերան էր դաշույնով ճեղքել,
Կուրծքը — անծիր դաշտ, հասակը — կաղնի,
Ու բայաթիներ գիտեր նվագել։
Շա՜տ էին սիրում հովիվներն բոլոր —
Կարիճ յեղբորս՝ ջինջ ու սիգապանծ.
Ու չափում էինք ձոր, անտառ ու լեռ՝
Յեղբայրս — հովիվ, իսկ յես գառնարած։*

*Ունեինք նաև մինուճար մի քույր,
Մի հուր-հրեղեն, մի նորաբողբոջ
Կենսալի աղջիկ, մազերը գանգուր,
Ինքը թովլուն, մի շողշողուն բոց։
Զարմանում էին, վոր մեր աղքատիկ
Հարկի տակ այդպես աղջիկ է ծնվել։
Ու մեծանում էր իմ քույրը բոբիկ,
Պատառած շորերով, ամառ ու ձմեռ։
Յեվ, ինչպես կանաչ յեղևնին աճում,
Հասակ է առնում նույնիսկ ձյունի տակ,
Այնպես էլ քույրս բացվում, բողբոջում,
Հասունանում էր մաշված չթի տակ։*

Գարնանամուտից մինչ ձմեռնամուտ
Տուն եյինք գալիս մենք շատ հազվադեպ,
Բայց եյինք քաշում — պարզ ու միամիտ,
Կյանքից անտեղյակ, անուսում, անդեմ։
Ձմեռն մեզ համար Պետրոպավլովյան
Բերդ եր ուղղակի։ Դեհ, ազատ ոգում,
Լեռների լանջին, հորիզոնում լայն
Ապրած-մեծացած անկաշկանդ մարդուն,
Վորը խմում ե աղբյուրներից հորդ
Յեվ վայելում ե ծաղկունքը գունեղ,
Մի՞թե դուր կգա գոմի աղբահոտ,
Մթնոլորտը մութ ու յերդիկը նեղ։

Զանգույի ափին — հին Յերևանի
Հնագույն վայրում — խուլ Ձորագյուղում,
Այնտեղ, ուր հիմա մի արևունի
Հիդրոկայան ե հպարտ, շողշողում,
Այնտեղ, ուր այնպես պարթև հասակով
Շենքեր են այժմ վազող ջրերին
Վողջունում սիրով, ուր լալկան ուռով
Եվ չի յեղերգում մենավոր ուռին,
Այնտեղ, ուր չքնաղ մի պանորամա
Շուքով բացվում ե հանկարծ առաջիդ,
Այնտեղ ունեյինք մենք մի հնամյա,
Ցեխը պատերից ժառանգած խրճիթ։

Հազիվ մի քանի վտանաչափ հեռու —
Գտնվում եր հենց ջրաղացը այն,
Ուր որ ու գիշեր, անվերջ, անդադրում
Պտտվում եյին քարերն տխրաձայն։
Ուր հայրս մանկուց մինչ խոր ծերություն,
Մինչև մազերը դարձան լույս ճերմակ
Ձյուն ալյուրի գույն, աղբեց անխոնջում՝
Աչքերում թախիծ ու դարմանք, դարմանք.
Ուր դույզ քարերից՝ վոսկու փոշու պես,

Ալյուր էր թափվում ծով առատությամբ,
Ու այդ փոշիով — գեր ու հաստավիզ
Ապրում էր աղան անհուն ցնծությամբ։

Իսկ ջրաղացի դեմ հանդիման,
Գլուխը հենած մի սեպ քարափի,
Ֆեոդալական ամրոցի նման
Սուրենի տունն է մխրճվել ճամբին։
Յեվ խուլ հյուղերի խեղճ գորշության մեջ,
Բազմել էր շենքը այդ վեհաշուք,
Ինչպես հորթերի խղճուկ նախրի մեջ
Ցուլն է բառաչում հպարտ, լիաթոք։
Կանգնել էր տունը, վորպես նոր Բաստիլ,
Ու նայում էր վար գահից բարձրադիր
Իր վոտքերի տակ խրճիթներ — ճորտեր,
Ինքը՝ ֆեոդալ, և՛ արքա, և՛ տեր։

Այժմ էլ հիշելիս մանկությունը իմ,
Չգիտեմ ինչու՝ ամենից պայծառ
Ու անջնջելի, դերթ գարնային
Յերկինքը կամրջող ծիածանը վառ,
Յելնում է դեմս իմ քույրը գանգուր,
Աղքատի բաղչում կոկոնած մի վարդ,
Ու սիրտս է կրծում ժանտ, ամենակուլ,
Յերբեք չնջնջող խոր վշտի մի վերք։
Յերբ հանդիպեցի ձեր այս Վարդենցին,
Նորից դարթնեցին հոգեմաշ հուշեր
Ու ավելի խոր անցյալս սահեցի,
Անցյալս՝ մի մութ, մի մռայլ գիշեր։

Մայրս հիվանդ էր, — ասաց վերջապես
Հին բարեկամս, — լուր էր ուղարկել,
Վոր սարը թողնեմ ու գամ նրան տես,
«Քեզ կարոտել եմ, ուզում եմ գրկել
Մի վերջին անգամ» — ասել էր մայրս։
Յեվ մի առավոտ, յերբ վոր լեռներում

Դեռ նոր էր բուրում մի չքնաղ մայիս,
Գառներս հանձնեցի իմ ընկերներին
Ու մի տանջալի անհամբերությամբ —
Վազքով բռնեցի քաղաքի ճամբան։ —
Ես քայլում էյի պիրկ, արագաթափ,
Մոռացման տալով ամեն, ամեն բան։

Ու քաղաք հասա՝ յերբ դեռ արևի
Շիկացած գունդը նոր էր մայր մտնում
Սարերի յետև։ Դուռը բաց արի
Դողդոջուն ձեռքով ու մտա մեր տուն։
Արագ մոտեցա անքացող մորս,
Այրող կարոտով գրկեցի նրան.
Վառվում է, կարծես, դեռ մինչև օրս
Նրա համբույրը այտերիս վրա։
Ո, թաղել էր նա գլուխս իր գրկում
Ու համբուրում էր անվերջ ու անհագ,
Պատուհանի տակ գետն էր աղմկում,
Ծիծաղում էյին ջրերը անհոգ։

Ներկայությունս բուժիչ դեղ դարձավ
Հիվանդ, դժգունակ մայրիկիս համար,
Նեղլիկ թիկունքն ու արծաթածամ
Գլուխը նրա — էլ այնպես համառ,
Այնպես ցավալի ու հար անհանգիստ
Չեյին թավալում անկողնում, բարձին,
Երբեմն նստում էր նա՝ լուսամփոփ —
Նայում էր գարնան բոլոր լուսաբացին —
Ու տեսնում էյի, վոր կամաց-կամաց,
Թխանում էյին այտերը դեղին,
Եվ բազուկները անարյուն, սմքած,
Ուժ էյին առնում, ամրանում կրկին։

Եվ մի առավոտ, յերբ մայրս նորից
Գնաց իր գործին՝ թույլ կիսակաղղուր,

Դիրքը թեփ տակ, աչքերի մեջ բոց,
Մեծ մարդու նման և լուրջ, և ազդու,
Մեր տունը մտավ քո ընկերը այս,
Մեր տիրոջ տղան, մեր տղան փոքրիկ...
Հիշում եմ հիմա, այնպես, այնպես պարզ,
Կարծես յերեկ էր, յերեկ, հենց յերեկ։
Քրոջս տեսնելով — նա ուրախացավ,
Նայեցին իրար խորամանկ ժպտով,
Յեվ այդ ժամանակ մտքովս անցավ,
Որ նրանք մոտ են հոգով ու սրտով։

Ճիշտ այնպես, ինչպես բանտից ազատված
Դատապարտյալը — արևոտ մի օր —
Նայելով բանտին — իր հրավառված
Պայծառ աչքերով... զգում է սարսուռ
Յեվ ուրախություն միաժամանակ,
Բայց կարոտով է հիշում բանտային
Իր ընկերներին, վորոնք գլխահակ —
Լսում են միայն յերգը շղթայի,
Վորոնց հետ մինչև հատակն ըմպել,
Ծծել է թույնի բաժակը տանջող
Ու կարոտով է գրկել, փայփայել
Անցքից ներս ընկնող շողերը դողդոջ։

Այնպես էլ այժմ — այս մեր արևուն
Կյանքի վեհանիստ կատարներից, յերբ
Նայում եմ դեպի անցյալի հեռուն,
Ուր անհրապույր, տանջալի ու վորբ
Անցել է կյանքս պատանեկական,
Կարոտով եմ յես հիշում շատերին,
Վորոնք ընկել են ու հիմի չկան...
Ու բարձրանալով լեռան գագաթին՝
Հզոր աչքերով նայում եմ հեռուն —
Անցյալի մութին դաժանատեսիլ...
Մի պահ խռովում, հուզվում են անհուն
Հոգիս խնդալից, սիրտս անբասիր։

Պատմածս միայն մի տխուր վեպի
Առաջաբանն էր, և ուրիշ ոչինչ.
Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ անձրևների ամպի
Ստվերը ծածկեց քո աչքերը ջինջ:
Գուցե անշնորհք վիպասանի պես,
Չարաշահելով համբերությունդ,
Իմ այս հնացած ու մանրակրկիտ
Լալկան զրույցով ձանձրացրի քեզ.
Գուցե՞... Բայց լսիր, մինչև վերջ լսիր,
Անվախ աչքերով նայիր անցյալին,
Եվ չես տեսնելու այդ ժանտատեսիլ
Որերը միգոտ, և՛ մռայլ, և՛ հին...

— «Զրույցից հետո — քույրս մեն մենակ
Մնաց խրճիթում, իսկ մենք յերկուսով
Իջանք գետափը: Որը — պարզ, հստակ
Ոդը շոյող էր, և՛ բուրյոտ, և՛ զով:
Նստեցինք հանդիստ մի սաղարթախիտ
Ու ծաղկեփթիթ ալուրենու տակ,
Չգիտեմ ինչու — անսահման մի խինդ
Սրտիս խորշերում տալիս էր հորձանք:
Ու թեև յերկչոտ, շփոթ էյի յես,
Բայց փոքր աղայիս այդքան մտերիմ —
Այդքան սիրալի կատակները հեզ
Թև տվին իմ խակ, իմ պարզ մտքերին:

Յեվ ամեն մի խոսք ասելուց առաջ
Մի քանի անգամ — մտքիս մեջ, թաքուն,
Յես կրկնում էյի, հետո սիրտ առած՝
Հարց էյի տալիս, խոսում կատակում:
Բայց արտասանած խոսքերս յերբեք —
Ճիշտ նույնը չէյին, ինչ վոր մտածում,
Ցանկանում էյի... Իմ դյուրաբորբոք
Հուշերի լիճը հանկարծ քարկոծում,
Ալեկոծում էր անծանոթ մի ձեռք.

Ու մռմռալով բազմաթիվ անգամ
Մտքում կրկնած բառերն ու մտքեր —
Խոսքս դառնում էր շփոթ ու անկապ։

Նա ուշի-ուշով և համբերությամբ
Պատմություններս լսելուց հետո,
Դեմնից վերցրեց — փութկոտ ու շտապ —
Մի հաստափոր գիրք, մի սովոր հատոր։
Մինչ խորհում էի, թե քանի տարի
Կարող է մեկը այդ գիրքը կարդալ,
Թե ինչե՛ր, ինչեր էլ չեն կատարի
Այս տղաները մեր վսեմափայլ,—
Նա գիրքը հանդարտ թերթում էր անձայն,
Կարծես ինչ-որ բան փնտրելու լիներ,
Ու հանկարծ կանգնեց, ինչպես մի արձան՝
Ճակատի վրա խոհերի լեռներ։

Պաթոսով կարդաց ու նստեց կողքիս՝
Իր ձեռքի գիրքը դնելով գետնին,
Ո՜, նա ապրում էր մի փոթորկահույզ
Վաղեմության գագաթնակետին։
Նա բացված գրքի մի էջին գծված
Նկարի վրա ուշքս բերեց,
Խոսում էր սահուն ու ալեկոծված,
Սակայն ինձ անհայտ, անհայտ բառերից։
Նրա ասածից համարյա ոչինչ,
Ոչինչ չմնաց հուշիս դղյակում,
Բայց այդ նկարի պատկերն անջինջ
Ցերկար ապրում է, կանչում, ակնարկում...

Մի շղթայակապ հոգնած հանքափոր
Իր բահին կռթնած՝ լուռ մտածում էր,
Հուրը վառվում էր աչքերումը խոր,
Թեև մազերին իջել էր ձմեռ։
Տարիներ հետո, երբ կարդում էի

Պուշկինի ձոնը — դեկաբրիստներին,
Հենց նույն հատորում, միևնույն եջին
Աչքերս դիպան այդ հին նկարին...
Չեյի հասկանում, չեյի ըմբռնում,
Թե ինչու՛ պապս գիրքն այդ կարդալիս, —
Ինչպես թռչունը իր քանդված բնում՝
Յեվ գալարվում եր, և անզոր լալիս...

Արևը վերից այրում եր արդեն,
Յերբ զրուցելով մոտեցանք մեր տուն,
Ձեռքներիս կային մայիսյան վարդեր,
Վարդեր ծիծաղուն, և՛ ճոխ, և՛ փարթամ։
Յես հպարտ եյի, վոր պապի հետ
Այդքան մոտիկ եմ, այդքան հավասար,
Մոռացել եյի և սարերն, և հոտ,
Յեվ ծաղկազարդը, և ջրերը սառ
Զարմանքով եյին բոլորը նայում
Ինձ ու պապիս — այդպես մտերիմ, —
Դեհ, ո՞վ եր տեսել այդ մեր աշխարհում՝
Գայլը գուրգուրեր հեզիկ գառներին։

Մինչ դուռը մնում եր հազիվ յերկու քայլ,
Յերբ ներսից լսվեց մի սոսկալի ճիչ.
Աղան այլայլվեց այդ անակնկալ
Ոգնություն խնդրող ահավոր կանչից։
Գառն ել ե մայում, յերբ արնածարավ
Գայլի ժանիքն ե նրան հոշոտում,
Ծնող մոր կանչը խայթող ոձերով
Լցնում ե սիրտը, հոգին կրծոտում։
Ծիտն ել ե ճչում, յերբ քաղցած ուրուն
Թափով ընկնում ե նրա յետևից,
Իսկ շանթահարը... Սակայն իմ որում
Դեռ չեյի լսել այդպիսի մի ճիչ...

Քիչ շփոթվեցի, սակայն ընտազդմամբ
Նետվեցի դեպի մուտքը դիմացի,

Ամբողջ մարմնով ու արագաթափ
Ձայնվեցի դռան և ուժով բացի։
Բացի, ի՞նչ տեսա... Լավ է, վոր լսեմ,
Թող չառնե թաղված հուշս այդ հարություն,
Ցեվ ինչու, ինչու վշտովս վրդովեմ
Խաղաղությունը գալիք սերնդի...
Հուշս այդ անարկու, վորպես Արտավազդ,
Վոր տառապում է Մասսի վիհերում,
Թող մնա անմահ, բայց պինդ շղթայված,
Վոր էլ չերևա այս մեր աշխարհում։

Իսկ յեթե շատ ես խնդրում, թախանձում,
Ուզում ես լսել այդ դեպքի մասին,
Ցես կվրդովեմ քո սիրտը ցնծուն,
Ու կտխրես դու ինձ հետ միասին...
Ցեվ այդպես։ — Բացի դուռը — պինդ փակված
Ու քամու նման արշավեցի ներս;
Տեսնելով քրոջս — այլանդակ պառկած —
Ասեղների պես ցցվեցին մազերս...
Իսկ յերբ նայեցի քիչ հեռու կանգնած
Արնոտ աչքերով ամդահա մարդուն,
Իմ հոգում զարթնեց մութ՝ անհագնած
Ցեվ կատաղություն, և՛ սոսկում; և՛ թույն։

Իսկ տղամարդն այդ բարդեհասակ,
Բռնելով կոթը իր մաուզերի,
Վրաս նետելով մի հեգնոտ հայացք,
Դուրս յեկավ դռնից՝ նման մի սարի.
Ո՜, այդ ջենթլմեն, լայնալանջ տղան —
Հագած ձյունաթույր, ճերմակ ձեռնոցներ,
Դուրս պրծավ ինչպես մի մարդասպան՝
Աչքերում կատաղած ամառվա ոձեր։
Քույրս տնքում եր ու խոր մորմոքում
Աչքերն առած իր ափերի մեջ,
Մի վողջ աշխարհ եր այրվում իմ հոգում, —
Ցես վո՞նց մարեյի այդ հրդեհը մեծ...

Այդ ապշեցուցիչ դեպքն անպատում,
Մի վայրկյան կարծես, ինձ շանթահարեց,
Կանգնել էի յես չոր անապատում
Այրող ավազի հուզված ծովի մեջ։
Սիրտս նման էր անծիր ոլորտից
Թափով դուրս թռած մի մոլորակի,
Իսկ դանդաղ, դանդաղ՝ այդ խիստ ցնցումից
Նման իր գծից շեղած գնացքի։
Մեծ դժվարությամբ ու խռովահույզ
Հավաքեցի խենթ մտքերս ցրիվ,
Ո, այդ րոպեյին իմ սիրտը անհույս —
Կտցահարում էր մի սոված արծիվ։

Քույրս չէր խոսում, բայց հեկեկում էր
Այնպես տխրագին ու դառնակսկիծ...
Այդ հեկեկանքն ուժգին պոռթկում էր
Ու դուրս էր թափվում ավերակ կրծքից։
Հարցերիս բնավ չէր պատասխանում,
Տեսնել չէր ուզում փոքրիկ տղային,
Մտքերս հուզելով — իրար էր խառնում,
Քար լռությունը այդ դժոխային։
Ու սիրտս, սիրտս գուցե պոռթկար,
Թե մայրս հանկարծ տունը չմտներ,
Ներս մտավ մայրս — ուժահատ, ակար,
Ձեռքին — յերկու հաց, աչքերը մթնել...

Օր օրի վրա քույրս նիհարում,
Դառնում էր անխոս, անկրակ ու ցուրտ,
Էլ չէր կարկաչում յեռանդի առուն,
Էլ չէր ծիծաղում մի կենսախինդ սիրտ։
Այդ դեպքից հետո — քույրս հուրհրան
Հաճախ էր հիվանդ ընկնում անկողին,
Դժգունում էին այտերը նրա,
Ինչպես ուշ աշնան տերևը դեղին։
Ու նստում էր նա գետի յեզերքին,

Մեն-մենակ, վարպես մի սառը անցորդ
Երկար նայում էր պարող ջրերին
Եվ մտացրիվ, և մելամաղձոտ։

Իսկ գիշերները անվերջ զառանցում,
Քնից վեր թռչում — սոսկալի ճիչով,
Ո՜, այդ ճիչը իմ գանգը ցնցում,
Հոգիս լցնում էր հալած արճիճով։
Մայրս դարձել էր մտազբաղ, անքուն,
Ու խույս էր տալիս մարդկանց հայացքից,
Հաճախ էր մենակ, հիվանդից թաքուն
Արտասվում տխուր ու դառնակսկիծ։
Իսկ հայրս շատ ուշ, շատ ուշ իմացավ
Մեր դժբախտության — մեր վշտի մասին.
Չուզեցինք ծանր այդ մեր վիշտը-սար
Բաժանել նրա թույլ ու ծերուկ ուսին։

Ո՜, դեղձուկ քույրս յերկար տառապեց,
Փոսն ընկան նրա աչքերը լճակ,
Փոշու մեջ կորան զանգուրները բոց,
Ու սրտում մարեց մի արևածագ։
Նա կամաց-կամաց դարձավ անզգա,
Հիշողությունը խաղաղ թուլացավ,
Աչքերում մնաց և՛ սեր, և՛ կրակ,
Կրծքում բուն դրեց ժանտ բարակացավ
Եվ մի ուշ գիշեր — ջարդեց ապակին —
Նեղ պատուհանից ճիչով դուրս պրծավ,
Այն օրից այս կողմ էլ քույրս անգին
Մեր հին խրճիթը չվերադարձավ...

Եղբորս պատմեցի մանրամասնությամբ
Ողբերգությունը մեր ընտանիքի,
Նրա ճակատին կուտակվեց մի ամպ
Շանթածին ամպը դալկի փոթորկի...
Անզուսպ զայրույթով ու խիստ վճռական
Ասաց, լավ, էդպես, թող էդպես լինի...

Իր տակը փռած քուլարը հագավ,
Մի քանի վայրկյան լուռ նայեց լուսնին
Հեռու պատվիրեց՝ հոտը հավաքել—
Ու իր մոտ բերել մեծ այծը—Ներբին,
Ոգում շարժելով ցուպը գլխակեն՝
Բարձրաձայն կանչեց գամփռ շներին։

Ո՜, նա այդ օրը շատ եր անսովոր.
Չեր կարող զսպել իր սիրտը լափող
Վիշտը հորձանուտ, վիշտը ահավոր,
Վիշտը հոգեցունց՝ անդուսպ հրաբուխ։
Յես յերբեք նրան դեռ չեյի տեսել
Այդպես սոսկալի, այդպես զայրացած...
Նա, վոր բարի յեր ու խաղաղասեր,
Այդ օր դարձել եր ուղղակի անսանձ։
Կատաղի կրքով ու խռովահույզ
Իր ատամները սեղմում եր իրար,
Ու մռնչում եր խենթ, խելակորույս,
Վորպես վիրավոր վագրն արնապարար։

Ո՜, նա մտախոհ՝ լուսնի տակ կանգնած—
Ձորում գցել եր մի յերկար ստվեր,
Ինչ վոր ահավոր միտք եր թաքնված
Նրա փոթորկված հույզերի յետև։
Այժմ եմ հասկանում, վոր նրա սրտում
Մաքառում եյին յերկու զգացմունք,
Ու իրենց ճամբից ամեն ինչ սրբում,
Գրոհում եյին բարձունքից բարձունք.—
Մեկն իր հոգու սերն եր անխորտակ,
Մյուսը—քրոջ վրեժը ցասկոտ,
Ու կանգնել եր նա աղոտ լուսնի տակ,
Յե՛վ մտացրիվ, և՛ մելամաղձոտ։

Այժմ եմ հասկանում, վոր նա ուզում եր
Ագայի հոտը անդունդը լցնել,
Ու մեր անարգված Մարուսի ու մոր

Անսահման, անհուն վրեժը լուծել։
Ուզում եր... Սակայն այդպիսի մի քայլ
Հովիվն իր ցեղում յե՞րբ ե կատարել,—
Յեղբայրս գուցե նամուսի համար
Բյուրավոր աղա մեկից կատարեր,
Բայց սիրած հարին չարամիտ ձեռք տալ,
Անմայր թողնելով գառները սարում,—
Մի՞թե դրանից ավելի վատթար
Քայլ կատարել ե հովիվն իր ցեղում...
. . . . . . . . . . . . . . . . . .

Ու հար նորից սարը բարձրացավ,
Փախեց արտի կոհակների մեջ,
Յեվ ինձ թվաց, թե խավար չքացավ,
Անհետ փարատվեց յեղբորս վիշտը մեծ...
Բայց այդ գիշերը նա անհայտացավ,
Ու էլ չերևաց օրեր, տարիներ...
Յեվ յերբ մեր յերկրում մրրիկ բարձրացավ,
Ու դողդողացին աղաներ, տերեր,
Յեվ յերբ կարմրածուփ դրոշը պարզած՝
Մեր յերկիրն մտավ Բանակը Կարմիր,—
Յեղբայրս յեկավ — նոր վերածնված
Վարպետ մի կարմիր, հերոս կոմանդիր...

Տեսնելով հեռվից ուրախ գալիս են
Գոհարն ու Լենան — մոր ու թեանցուկ,
Ինձ թվում եր, թե հանդարտ լալիս են
Նրա աչքերը — լուռ ու անարցունք։
Նա իր պատմությունն ընդհատեց հանկարծ,
Տեղից վեր կացավ — կանգնեց մտախոհ,
Նրա աչքերը ե՛ բոցավառված,
Յեվ տխուր եյին, ե՛ ծովի պես խոր։
Լսվում եր արդեն Լենայի անմինջ
Զանգահնչյուն ծիծաղը զվարթ,
Յերբ յերկու խոսքով — տխուր ու հակիրճ՝
Վերջացրեց նա զրույցը-կիսատ։

— Քույրս տառապեց յերկար տարիներ,
Աչքերի հուրը մոխրացավ, հանգավ,
Եվ անդուր յեղավ իր բեռը տանել, —
Դեմքը ծերության կնճիռներ հագավ։
Ու մի առավոտ, աշնան առավոտ —
Նա անշնչացավ խեղդող հյուծախտից,
Իսկ այդ յերեկո — յեղբայրս փառավոր
Յերևան մտավ հին Բանտաքեից։
Ծածանվում եյին դրոշներ կարմիր,
Խորհրդային եր յերկիրը դարձել,
Ու նոյեմբերյան փոթորիկ քամին
Տղրուկ տերերին հիմքից եր հնձել։

. . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . Աշխարհը փոխվեց,
Խնդության ձայնից յերկիրը թնդաց,
Ու բոլորի հետ սիրտս էլ վողողեց
Մի հրակարմիր գարնան լուսաբաց։

Հուր-հեր արեը թեքվել է վաղուց
Ու յերեկոն է փռվում ձորակում,
Հանրային այգին, տներն ու փողոց
Լողում են լույսի ծփուն հորձանքում։
Վորպես խաղողի հմայուն վողկույզ,
Ոդում կախվել են լամպերը շուշան.
Վանց գալեմ ցնծուն թևերը հոգույս,
Վանց չտամ խինդի վառ ազդանշան։
Լենայի աչքերն բոլոր խնդությունով
Ժիր բոցկլտում են ու հրավառվում,

Իսկ նկարիչը քաղցրալիր տոնով
Թեյ խմելու չի մեզ հրավիրում...

... Ծառուղիներով յերփներանգ ու զով,
Նկարչի տունն ենք խմբով բարձրանում,
Ահա մի աղջիկ, վոր դյութիչ նազով
Իր սիրած տղի հոգին է հանում.
Ու ահա խմբեր — կանաչին նստած
Խմում են կյանքի գինեետ թասից,
Պարում են, յերգում, ցնծում են սրտանց,
Անհոգ ծծելով վայելքը դարի։
Նրանք չեկել են հանքահորերից,
Մեր նորակառույց գործարաններից,
Նրանք չեկել են բերրի դաշտերից
Անծիր արտերից սոցիալիստական։

Ուշ յերեկո չէ, յերբ հասնում ենք տուն,
Թեյում ենք դրսում — գորգերի վրա,
Ու թեյից հետո — ճիշտ ժամը ութին
Մենք ցած ենք իջնում դեպի ոպերա։
Մեծ աղմուկ հանած քրդական մի խումբ —
Յեկել է այստեղ, խաղում է «Զարուստ».
Ասում են՝ խաղը և՛ կիրթ է, և՛ նուրբ,
Բեմադրությունն՝ անսահման հարուստ։
Ասում են... Սակայն գնում ենք տեսնենք
Իսկական խաղը և թատրոնը մեծ,
Ու ահա խմբով, վորպես նորեկներ
Մենք սրահումն ենք՝ մարդկանց ծովի մեջ։

Ծանոթանում ենք մի յերիտասարդ,
Հաճելի դեմքով պատմաբանի հետ.
Նրա խոսքերը չոր են ու անզարդ,
Սակայն հաստատ են, ինչպես գրանիտ։
Նա պատմաբան է Բժնի քաղաքի
Հանքաբանական նոր ինստիտուտում,

Այժմ ուզում է՝ յերբ այգը ծագի,
Մեզ հետ միասին վերադառնալ տուն։
Մինչ մենք խոսում ենք ուղերթի մասին,
Կազմում ենք պլանն հետազոտության,
Հնչում է զանգը, բոլորս միասին
Շտապում ենք ներս և նստում անձայն։

Լույսերը հանկարծ մարում են, հանգչում՝
Ու վարագույրը բացվում է հանդարտ,
Շշուկ չի լսվում հսկա դահլիճում,
Լուռ է դահլիճը այս մշտազվարթ։
Պատկերն առաջին գունե ինձ վրա
Թողնում է ուժգին տպավորություն,
Տեսել եյի յես «Ֆաուստ» ոպերան
Պատանեկության ժամանակներում։
Բայց նա այս անգամ ուրիշ եր կարծեք,
Տրվում է նրան նոր մեկնաբանում,
Նրան զինել է մի հանճարի ձեռք
Հանճար, վոր ահա բեմ է բարձրանում։

Ժամերն անչափ արագ են թռչում,
Իսկ պատկերները — ավելի արագ,
Ո՜, ինչ հմայուն, ինչ պարզ են հնչում —
Այդ Մարգարիտի յերգերը հստակ։
Կիսվում է արդեն գիշերը գարնան
Յերբ ավարտվում է պատկերը վերջին.
Կողքիս կանգնել է մտախոհ Լենան՝
Աչքերը հառած հուզված դահլիճին։
Ծափի հորձանքը չի լռում յերկար,
Ու դղրդում է շենքը վիթխարի,
Յերբ դուրս ենք գալիս մենք դանդաղաքայլ,
Հոգում վառ պահած կրակը դարի։

Նկարչին սիրով ուղարկում ենք տուն,
Հյուրանոց գնում պատմաբանի հետ,
Մեր ճանապարհին անվերջ ցնծություն,

Ձորում յերգում է քաղցրալուր մի գետ...

. . . . . . . . . . . . . . . . . . .

Խորունկ գիշեր և Պառկած անկողնում,
Մտքերիս հետ եմ զրուցում անձայն,
Պատուհանիս տակ առվակն է յերգում
Յերգում են նաև ջրերը արծաթ։
Ու այդ համերգի հնչյունների տակ
Մայր Մորփեոսն է աչքերս փակում,
Իմ հոգու վրա իջնում է հստակ
Մաքրաջինջ, հանդիստ, յերջանկալի քուն...

## ՅԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

### ԼՈՒՅՍԵՐԻ ՀՈՎՏԻ ՄԱՐԳԱՐԻՏԸ

*Արևելքը դեռ չէր շառագունել,*
*Յերբ մենք Արղնուց դուրս յեկանք խմբով.*
*Պոետ Վարղենցը կարծես անքուն էր,*
*Կարծես չէր քայլում մեր բռնած ճամբով։*
*Յեվ թվում էր ինձ, վոր մի այրող միտք*
*Տանջում է նրան, նա ապրում է մի*
*Ինչ վոր արտակարգ, հոգեկան վիճակ,*
*Վորից զգում է և՛ ցավ, և՛ հրճվանք։*
*Հեռվում վառվում է պարզ հորիզոնին*
*Վոսկեղեն բոցի մի չքնաղ խարույկ.*
*Պոետի անհուն ու խորաղնին*
*Աչքերում, սակայն, գիշեր ու մրրիկ...*

*Ի՞նչ է մտածում,— յես այդ չգիտեմ,*
*Բայց ընկերությունն մեր յերկարատև*
*Ինձ ասում է թե, յերբ նա ամպել է,*
*Նրա ճակատի ամպերի յետև*
*Կա մտքի հեղեղ, կա հույզի սամում,*
*Կա դժգոհության սանձահար տրտունջ,*
*Ու այդ ժամին է նա արտասանում*
*Իր զեղումների տողերը «դյութիչ»։*
*Ու չեմ սխալվել։ Ահա ամպերի*
*Շուրթը լիզելով՝ շողաց մի կայծակ,*
*Ու մեր պոետի անքուն աչքերում*
*Վառվեց աշունքվա մի արևածագ։*

Նա սպասում էր թեթև սուրճի,
Մի չնչին կայծի, որ հրդեհ վառեր,
Ու դուրս ժայթքեր վիրավոր սրտից
Հրաբխային շիկացած քարեր։
Բայց չգտնելով գեթ թույլ պատրվակ՝
Նախահարձակման դիմեց նա նորից
Ու թափից վրա մարտական կրակ,
Հարցի ռումբերով քարկոծելով ինձ.—
— Ցերեկ յես տեսա, որ դմայլանքով
Դիտում էյիր դու «Ֆաուստ» օպերան,
Ո՞վ էր մագնիսել ապրումները քո —
Մեֆիստոֆե՞լը, թե Մարգարիտան։

Ջահել Վերթերից մինչև ալեհեր
Ֆաուստն իմաստուն՝ ով է նվագում
Գյոթեյի պայծառ քնարի վրա,
Ո՞վ է ծիծաղով մեղմիկ հեկեկում
«Մեռած հոգիներ» անմահ պոեմում
Կամ «Ռեվիզորում» — ասա, ո, ասա,
Ինչու՞ յես լսել։ Գուցե հիշեցիր
Մեր Թումանյանի փոքրիկ Գիքորին՝
Ո՞վ է ստեղծել այդպիսի անմար,
Արևոտ պատկեր. վիշտը, սիրելիս,
Վիշտը կենսատու, վիշտը՝ քնքուշ մայր,
Որ հանճարներին սնունդ է տալիս։

Կարդացել ես դու Դոստոևսկուն։
Վիկտոր Հյուգոյին գիտես մոտիկից,
Նրանց քնարին ով է նվագում
Այդպես հոգեմաշ ու դառնակսկիծ։
Ո՞վ է ստեղծել Օմար-Խայամի
Կամ մեր Տերյանի այնքան հրաշքանչ,
Այնքան նրբակերտ ու յեթերային
Խոսքերն նվագուն ու քաղցրակարկաչ։
Դու դեռ լռում ես, պատասխան չունես

Դու մի յերջանիկ, անհող թռչուն ես,
Չգիտես, վոր այդ խոսկան լարերին
Վիշտն է նվագում այդքան անլուրին։

Կարդացել ես դու Լև Տոլստոյի
Զբնող վիպակը՝ «Կրեյցերյան սոնատ»
Տեսել ես պարթև մավր Օթելլոյին —
Մերթ — մռայլ մի ամպ, մերթ — ալե զվարթ,
Ու քանի անգամ բեմում տեսել ես,
Յեվ արտասանել — Դեզդեմոնայի
Մեռնելու ժամին... Սակայն քեզ ու քեզ
Յե՞րբ ես հարցրել, թե այդ յերկերին —
Ովկիանոսից — խոր, արևից պայծառ՝
Այդ ո՞վ է տվել այդքան թափ, յեռանդ...
Կարծեմ հիշեցիր, կարծեմ հասկացար,
Թե ինչ է սիրո անընկճելի խանդ։

Տե՞սել ես արդյոք մեծն Անջելոյի
«Մովսեսը» հսկա, այդ ժայռից կերտված
Ծերունի հովվին, կամ Ռաֆայելի
Ժպտուն «Մադոննան» — աստվածահայաց.
Տեսել ես, սակայն հարցրե՞լ ես մի օր,
Թե ի՞նչ ուժով են լույս աշխարհ յեկել
Այդ գերմարդկային, այդ արտասովոր
Մուրճ ու վրձինով ստեղծված յերգերն։
Այդ ֆանտազիան է — մեծ ճարտարապետ
Դարերը իրար կապող, կամրջող,
Ու մենք — սերունդներս, վորպես մի ճամբորդ
Գալիս անցնում ենք այդ նույն կամրջով։

Բայց դուք, դուք իսպառ վերացրել եք
Աղբյուրը վշտի, խանդի, անուրջի,
Վոսկե մշուշը անհետ ցրել եք
Յերազող մարդու աչքի առաջից։
Կորել եք նաև գետի վշշոցը,
Բանտել եք նրան բետոնե պատով...

Նա չի սրբել իմ սրբերը
Մեր գյուղացիական յերգ ու հեքիաթով։
— Ո, իմ դայակս, գետն իմ Հրազդան,
Դու բանտ մտնելիս միթե չտեսար,
Վոր անքուն թողիր քո ափից վորդուն,
Յեվ վորբանում են ձոր, անտառ ու սար...

Հարձակում գործող այս պոետ տղան,
Վորպես անբանակ, բայց քաջ զորավար,
Վոր խոսքի կարկուտ ու հուր եր տեղում,
Հայաստանից մի կարճ զինադադար։
Գուցե նա զգաց, գուցե մտածեց
Իր վողբերգական վիճակի մասին,
Գուցե համոզվեց, վոր զուր են, ունայն
Նրա կռիվը ու խոսքերը սին,
Բայց կարճ տևեցին զինադադարի
Վայրկյաններն լարված, մութ ու ամպակլոր,
Ահա պահը այնքան տխրալի՝
Իր անխինդ բախտը լալիս է կրկին։

— Ո՜, սիրտս խրվում են թունավոր նետեր,
Յերբ կանչում է ձեր այս յերկաթուղին,
Անխնա պոկել ու գեն եք նետել
Վողկույզները մեր հյութեղ խաղողի,
Ու նրա համար ճամբա յեք բացել,
Վոր մեր ձորերից սրընթաց անցնի,
Քանի՜ ծաղիկ է այստեղ վորբացել
Ու քանի՜, քանի վայրի վարդենի...
Բայց դուք անցել եք այնպես հաղթական,
Ինչպես Աթիլլան կամ մի Լենկթեմուր,
Ու հիմա վորպես մեծ աշխարհակալ՝
Ձեր նժույգներն են թռչում ամենուր։

Պատմագիրները հիացմունքով են
Հիշում հունական դարն Պերիկլեսի, —
Մարմարից եր նա իր դարը կերտել,

Իսկ դուք՝ շողերից ելեքտրո լույսի
Ձեր կերտած շենքը փայլուն է՝ վորպես
Խալիֆաների վոսկեզօծ պալատ,
Սակայն ինչե՞ր կան այդ պատերից ներս,
Գուցե Պուշկինի նման մի տաղանդ...
Ո, վոչ, իմ ընկեր, փորել եք անդունդ
Դուք մեծ տաղանդի յերկու վոտքի տակ,—
Մեկով կախված է անդնդում անհուն,
Մյուսով՝ կանգնել է վիհին անհատակ։

Դուք ստեղծել եք հար ու նման ձեզ
Մի խնդուն աշխարհ։ Եվ գուցե ապշեր
Քսենոֆոնը կամ մի Սոֆոկլես,
Թե մեր յերկիրը ընկներ մի գիշեր։
Ժան Վալժանի պես հերոսներ ծնող
Իրողությունը թաղել եք վաղուց,
Սեր, յերազ, թախիծ ու հուշեր գունեղ
Ավլում եք, մաքրում մարդկային հողուց։
Եվ ի՞նչ եք թողնում, վոչինչ և վոչինչ,
Մեր ամենասուրբ զգացմունքներից,
Սիրտը դարձել է միապաղաղ, ջինջ
Մի գարնան յերկինք — առանց ամպերի։

Բայց ինչի՞ յե պետք, ո՛, ինչի՞ յե պետք
Գարունը — առանց բքաշունչ ձմրան,
Չլսել յերբեք աշնան քամու յերգ,
Չտեսնել ձյունոտ կատարը լեռան...
Չտեսնել հասուն արտերը ամրան,
Միշտ գարուն, գարուն, անընդհատ գարուն։
Չլսել ցորնի վոսկի հասկերում
Արտույտների յերգն — այնպես հուրհուրան,
Չտեսնել աշնան վոսկի տերևներ
Մանկությունների պես քամուն խաղալիք...
Ձանձրալի յե, չէ՞, սիրելի ընկեր,
Այս ի՞նչ գալիք եր, գալիք, վա՜յ, գալիք»...

Պանտի վերջին խոսքերն անհույս
Շատ զարմացրին մեր պատմաբանին,
Գեղեցիկ խոսքեր, խոսքեր նրբահյուս՝
Բայց գրված խարխուլ տապանաքարին.
Ո՜, այդ ոսկեզօծ խոսքերի առուն
Ցնդում էր տխուր ու դառնակսկիծ,
Ու այդ յերգի հետ և՛ խոր, և՛ անհուն
Վիշտն էր դուրս թափվում ավերակ կրծքից։
Շատ է զարմանում պատմաբանը մեր,
Որ մեր որերում կան նման մարդիկ,
Ու սկ·սում է խիստ հանդիմանել
Անհույս պոետին — բառերով անտիկ։

— Դու, յերկիր տարդ, մի ողբիդնալ
Ու տարորինակ նոր յերևույթ ես,
Բայց «պետք չէ ապշել, պետք է հասկանալ»,
Այսպես է ասել մի պայծառատես...
Այժմ աշխատանքը այդ քո հույզերի,
Այդ քո մտքերի հասարակական
Արմատը գտնել։ Քո անհույս սերի,
Տերևաթափի յերգերը լալկան
Անշուշտ լոկ քոնը, քոնը չեն միայն,
Բոլոր դարերում մեծ շրջադարձի
Փառավոր ժամին — մի Շատոբրիան
Յերգել է գովքը վհատ թախիծի։

Այդպես ես և դու։ Կոչ ես անում մեզ —
Շարժումը սանձել, ջնջել փոփոխման
Որենքն անխախտ։ Կանգ առ, — ասում ես, —
Կանգ առ, ով յերկիր, կանգ առ ինձ նման։
Ու մանկան նման — մատդ դրել ես
Կարմիր կրակում — զգում ես կսկիծ,
Յեվ հայհոյում ես, և՛ բարձր լալիս,
Առանց քաշելու մատդ կրակից։
Նիհիլիստի պես ժխտում ես՝ ինչ կա,

Ինչ ստեղծել են սերունդներ անթիվ
Ու բաց ես անում մի նոր «Ամերիկա»
Թփրտում ես գերթ մի թռչուն անթև։

Ինչքան էլ խոսես դու բարձունքների
Հմայքի մասին, ինչքան էլ գոռաս
Դու ազատության ղնդուն զանգերի
Ղողանջի մասին, — չկա արձագանք։
Պրուդոնի պես, վոր ֆրանսիական
Հեղափոխության հարթած ճամբեքով
Ուզում էր դառնալ դեպ համքարական
Կյանքը ծանրաշարժ, — դու յել նույն հետքով
Դառնալ ես ուզում դեպ թշվառության,
Խանդի ու վշտի անցյալը «վոսկեդար»,
Բայց տես, ինչ հզոր, ինչ արագաթափ
Արշավում է մեր բանակն անդադար...

Ճիշտ նույն րոպեյին ձորը դղրդաց
Արձագանքներից. գնացքն էր անցնում
Արծվային թափով, նրա սրընթաց
Վազքում կար նորի, հաղթության ցնծում։
Տեսնում էյի յես — այդ գնացքի պես,
Ինչպես արևը իր անծիր ճամբին,
Սլանում է իմ յերկիրը դեպի
Գալիքի պայծառ, մշտավառ արփին։
Տեսնում էյի յես... Բայց ահա նրանք, —
Մեզ մոտենում է մի խումբ գյուղացի
Ու բորբոքելով զրույց ու կատակ
Իջնում ենք դեպի քաղաքը — Բժնի։

Նրանցից մեկը դեռ շատ է ջահել,
Նրա աչքերը սև են, ինչպես սաթ,
Մեկը — քչախոս մի ծեր ալեհեր,
Մյուսը՝ հաղթանդամ մի յերիտասարդ։
Նրանք սիրում են ուրիշին լսել,
Հարցեր են տալիս բազմակողմանի,

Գիտության ծարավ ու վերելքի սեր,
Հրդեհի պես է բռնել ամենքին։
Արդեն ահագին ճամփա յենք անցած,
Որը դառնում է համարյա կես որ,
Յերբ պատմաբանը հարցնում է նրանց,
Թե ինչ մարդիկ են, վորտեղից և վուր։

— Վերադառնում ենք մեղվաբուծների
Համագումարից, — ասաց պատանին, —
Վարպետ զեկուցեց համաշխարհային
Մեղվաբույծ Սաթոն, Սաթո Մարտունին։
— Ո՜, այդ աղջիկը խոսքի մագնիս էր,
Կախարդել էր մեզ անուշ զրույցով,
Նրա պատմածը և՛ խոր, և՛ պարզ էր,
Ինչպես մաքրաջինջ, կապուտակ մի ծով։
— Իսկապես խելոք, խելոք էր խոսում
Այդ լավ աղջիկը, — ասաց ծերունին, —
Կարծես լեռներից վտակ էր հոսում,
Կարծես փչում էր բուրավետ քամի։

Իսկ բարձրահասակ այդ հսկա աղան,
Վորը մինչև այդ լուռ մի մի անգամ
Կայծ էր արձակում, հանկարծ հրեղեն,
Ըմբոստ մտքերով ասպարեզ յեկավ —
Սխալ է, սխալ հույն փիլիսոփան,
Վոր ասել է, թե միևնույն գետում
Չես կարող մտնել դու յերկու անգամ.
Յեթե նա ապրեր այս մեր որերում,
Տեսներ բարձրացող քաղաքները խնդուն,
Աշխարհափոխման թափին հսկայական,
Նա պետք է ասեր, միևնույն գետում —
Չես կարող մտնել նույնիսկ մի անգամ։

Բայց նրա խոսքը կտրեցավ կիսից՝
Պոետը ցասկոտ, ինչպես դյուրավառ
Վառոդը — կայծից, նորից հրկիզեց՝

Ինչ վոր թողել եր շեն ու անավեր։
Նրա խոսքերում կար անկեղծություն
Տխրալի մի շեշտ, ու վոչ մի շինծու
Շարժ ու ձևերի դերասանություն
Չկար անսովոր նրա զրույցում։
Նա դուրս եր թափում մաղձն իր հոգու,
Ամեն ինչ փշրող այն հարվածի պես,
Վոր ըմպած գինին դուրս ե ժայթքում,
Ու դառնում հանգիստ, ե՛ խաղաղ, ե՛ հեզ։

— Ատում եմ, — ասաց, — ամբողջ եյությամբ
Այդ քաղաքները — մեծ ու անվանի,
Ուր մարդը — դրամ, միտքը — փայլի թամբ,
Բարձիր ամեն ինչ՝ և նա կտանի։
Ուր թաթերն սեղմած բարձր սեղանին՝
Թվերով լեցուն գլուխը հենած
Հաստ մատյաններին — կարծես սողում են
Հաշվետարները աներազ, սմքած։
Ուր բազմանում ե կուրծքը խորն ընկած
Հասակով թզուկ ու կորաքամակ,
Անփայլ աչքերում կրակը հանգած՝
Ու գունատ մարդկանց մի սովոր բանակ։

Ուր լույսն արևի դեղատոմսով ե,
Ուր սարսափով ես համբուրում նույնիսկ
Շուրթերը կարմիր, ուր սիրո սով ե,
Ուր չկա, չկա ասպետական խոսք.
Յեվ ուր այս կամ այն սոսկալի ախտից
Չվարակվելու, չայրվելու համար
Ձեռնոցով են լոկ բռնում այնտեղից,
Ուր ձեռք ես տվել դու պատահաբար։
Ուր արշալույսը տեսնում են սակավ,
Մխիթարվում են ցուրտ վերջալույսով,
Ուր վոր լսել ե յերգն հերոսական
Յեվ ուր տիրում ե ծաղիկների սով։

Ուր կյանքից կեսը և այն էլ, այն էլ
Քո ջահելության յեռուն որերում
Պետք է տառապես, թե չէ՝ մի անել
Խորխորատ կընկնես — գայլի բներում։
Պիտ աշակերտես գեթ տասը տարի,
Մի քանի տարի պիտի ուսանես,
Ու որեր են պետք ճիշտ քառորդ դարի,
Վոր դու մանդատ անուն վաստակես
Ու ապրես վորպես մի քաղաքացի,
Միջակից էլ ցած, մի աննշան մարդ,
Յերբեմն նույնիսկ ասվերը քաղցի
Գայլի աչքերով կնայի վրադ։

Յեվ մինթե հազար, բյուր հազար անգամ
Մեզնից յերջանիկ ու բախտավոր չէ
Ալպյան հովիվը... Մենք հավետ անքուն
Վորոճում ենք մեր մտքերը չնչին
Առորյա հացի, առորյա հոգսի
Ու վշտի մասին, իսկ հովիվը այդ,
Վոր վայելում է բնության թասից
Լակ փրփրացող ու ձյունաթույր կաթ,
Ապրելով մի դար չի տեսնում նույնիսկ
Թեթև գլխացավ, մինթե նրանից
Բախտավորը կա, ասեք, ոհ, ասեք,
Յեվ ինձ ազատեք այս տանջող ցավից...

Այս խնդրում, այո, յես սրտով, հոգով
Ռուսսոյական եմ — գյուղացին՝ նստած
Իր տրակտորին՝ գեղջկական յերգով
Վարի արտերը իր լայնատարած,
Ու մանուկները բնության ծոցում
Ազատ մեծանան, ազատ ուսանեն,
Հովիվը սարում կարդա զեկուցում
Յերգերի մասին մի հին դուսանի,
Գյուղում չերևա վոչ մի հարկահան,

Խրճիթում շողա ելեքտրական լամպ,
Ու կալերի դեմ, ինչպես մի վահան՝
Դաշտում բարձրանան հասկերը հպարտ։

Ընկեր պատմաբան, դու ինձ հետադեմ
Մարդ ես համարում ու անգիր արած
Մի քանի ֆրազ նետում ես դես դեն.
Բայց ինչ խեղճ ես դու, ով, մարդ արարած,
Դու մեր օրերի ծպտյալ Մալչալին,
Չոր յերկաթ ես դու, քեզնից վոչ մի խափ
Շինել չի լինի, յես դուր եմ ասլին
Խփում իմ մուրճը, դու մի ինքնախար,
Հաշիշով հարբած ֆանատիկոս ես,
Վոր իր կրոնի թույնը ծծում է,
Վորպես քաղցր հյութ, ու հոգին տալիս՝
Մահվան ժամին էլ անհոգ ցնծում է։

Հանդերձյալ կյանքի խարուսիկ հույսով,
Ճառդ նման էր վաղորոք գրված
Մի բանաձևի.— բարձր պաթոսով
Խոսում է մեկը բերդեր գրաված,
Ազատության ջահ բանակի մասին,
Խոսում է վորպես մի նոր Կիկերոն,
Մի նոր վորդեգիր անմահ Պառնասի,
Ու ահա մեկը ձայնով կերկերուն
Այդ հուր հրեղեն խոսքերի առթիվ
Կարդում է մի ցուրտ, անշունչ բանաձև,
Թեև նա անթիվ, անհամար, անթիվ
Ժողովներում է նույնը կարդացել։

— Վարդենց, բարեկամ, այդ ինչ քաղաքի,
Այդ ի՞նչ վորջերի մասին ես խոսում,
Ի՞նչ պատկերներ են հուզում քո հոգին,
Արթո՞ւն ես արդյոք, թե՞ սին յերազում։
Դու վերանում ես իրական կյանքից,
Կախվում ես անոդ տարածության մեջ,

Յեվ քեզ թվում ե, թե մեծ Բալզակի
Պատկերած քաղաքն ապրում ե անվերջ։
Դու կարդացել ես «Ժերմինալը» կամ
Դոստոևսկու վեպերն հանճարեղ
Յեվ քեզ թվում ե, թե այսոր ել կան
Նույն պատկերները՝ ավելի ահեղ։

Մեծ հիացմունքով լսում եյի ես
Լենայի խոսքը — խորիմաստ, հակիրճ,
Վոր պատի դեմ բացում եր, կարծես,
Անանցանելի խորախոր մի կիրճ։
Մինչև պատը կբանար դուռը
Փաստերով հարուստ իր զինանոցի
Մեջքին կկապեր ասպետի թուրը,
Ասպարեզ կիջներ՝ հեծած նժույգ ձին,
Մեր նոր հյուրերը բոլոր կողմերից
Կրակ տեղացին նրա գրքերին,
Ու կամաց-կամաց ճակատի խորշերից
Տխրության ամպը իջավ հոնքերին...

— Լսելով խոսքերդ գյուղերի մասին, —
Ասաց ծերունին, հիշեցի անհետ
Մեռած գնացած յերգասաց Հասոն
Ու մի տխուր դեպք — կապված նրա հետ։
Հարսանիք եր այդ, բայց ինչ հարսանիք, —
Ամուսնանում եր հարուստ հողատեր
Մելիք Բեկլարը։ Հավաքվել եյինք
Բոլոր գյուղերից թե տեր, թե ճորտեր։
Յոթ որ, յոթ գիշեր դհոլն եր թնդում,
Գինին հոսում եր գետի պես վարար,
Յեվ պարում եյին, ուտում ու խնդում
Գզրից մինչ տերտեր, հարսից մինչ կեսրար։

Վերջին գիշերն եր։ Ո՜, վերջին գիշեր,
Յեվ շատ են ուտում, և ըմպում անհագ,
Դատարկվում եյին գինու տակառներ,

Տականներ հոկա, տականներ անտակ։
Հավաքվել էյին սեղանի շուրջը
Մեծամեծները ամբողջ նահանգի,
Ու լռել էյին։ Չէր լսվում մի շունչ.—
Սպասում էյին, վոր Հասոն յերգի
Հարս ու փեսայի բախտավորության
Կենացը — մի յերգ, մի զվարթուն յերգ,
Բայց ահա Հասոն բարձրացավ տեղից —
Աչքերում վշտի ծովը անեզերք։

Ցերգում էր Հասոն այնպես վողբաձայն,
Կարծես մեռնում էր նրա մինուճար
Զավակը ազիզ, ու լուսաբացին
Հավիտյան պիտի զցեր ճանապարհ։
Ցերգում էր Հասոն — քրդական «լոլո»
Ու իր յերգի հետ լալիս էր կամաց...
Ախորժակ ուներ անապատ լալու
Այդ բատրակ տղան, այդ գիժ գառնարածն,
Ցեվ նույնիսկ, նույնիսկ այդ հարսանիքի,
Այդ խնդության մեջ լալիս էր Հասոն.
Լսեցին նրան հյուրերն թանկագին
Ցեվ լոկ յերկու խոսք՝ խեղճ տղա,— ասին։

Նորից զնգացին գինու բաժակներ,
Ու նորից թնդաց դհոլը զվարթ,
Նորից խնդություն, նորից հանաքներ —
Արևամուտից մինչև լուսաբաց։
Ով յերիտասարդ, դու ինձ լավ լսիր,
Հարսանիքները պետք չունեն լացի,
Թե արտասվելու ունես անհագ սեր,
Վորոնիր ուղին գերեզմանոցի։
Արցունքն ու գինին — անհաշտ թշնամի
Ախոյաններ են։ Մի՞թե չես տեսնում
Մեր խնդությունը, մեր կարմիր գինին,
Մի՞թե դու ողբով, ողբով ես սնվում։

— Չէ, ընկեր Պարթև, սխալվեցիր դու,
Մեր Հարստանիքը Մելիք Բեկլարի
Հարստանիքը չէ, մեր խնդությունը
Հենց հասոնների սրտի լարերի
Ու հոգու հետ է խոսում մտերիմ։
Զուր չեն Մելիքին լացով վողջունել
Հավիկը ակլոր։ Մի՞թե խինդով են
Ձմեռն ընդունում անբուն թռչուններ։
Գուցե իզուր չեն ազում անծանոթ
Մեր ուղեկիցը։ Գուցե Մելիքի
Գինատառ, փարթամ սեղանների մոտ
Նրա պապերն էլ նստել են քեֆի։

Ջահել գյուղացու խոսքերը կարծես
Խորունկ խռովեցին կուրծքը պատանի,
Ու նորից զայրույթ, ու նորից անեծք,
Նորից փոթորիկ ալեկոծ սրտի։
Ո՜, կոմունիզմը,— բացականչեց նա,—
Բայց մի՞թե, մի՞թե նրան հակառակ
Մի բան ասացի, չէ՞ որ կոմմունան
Յերազս է յեղել ամբողջ ժամանակ։
Ու հիմա հեղնանք ու ծաղր իմ դեմ
Մի մարդու կողմից, վորի հայրերը
Տրեխ են հագել ու մտել թոնիր
Յեվ մահ են բռնել պապից մինչ թոռներ։

Բայց հանկարծ կարծես, խաղաղվեց, հանգավ,
Ինչպես մոխրացող խարույկը հրկեզ,
Նորից մեղմության շապիկը հագավ
Պատանը խոհուն ու գանգրագես։
Ու նորից մտավ իր հունը նախկին,
Ինչպես վարարած գարնային վտակ,
Նորից թափցրեց իր հուզված հոգին
Ճերմակ ամպերի քուլաների տակ։
Ընդունեց քնքուշ գեղեցկուհու դիրք,

Սկսեց հանդարտ փիլիսոփայել,
Կարծես կարդում էր մի վոգեշունչ գիրք,
Կարծես ձգտում էր հուշն իր փայփայել։

— Վաղուց թերթել եմ ես Թովմաս Մորի
Գիրքը՝ «Ուտոպիան»։ Ոհ, նրա կղզու
Պատկերը յերբեք, յերբեք չի մարի
Պատանեկության վոսկի յերազում։
Այդ մարգարեյին ինչքան եմ սիրել,
Ինչքան գուրգուրել իմ հիշողության
Ճերմակ դղյակում, սակայն սիրել եմ
Նրա պատկերած գալիքը խնդուն
Լոկ վորպես յերազ, հաճելի յերազ,
Անսահման ծովում մի անհաս կղզի,
Իսկ ծովի ափին նստած լինեմ ես,
Անվերջ անրջեմ այդ կղզու մասին։

Բայց դուք յերազը փշրում եք, ինչպես
Մարմարյա արձան... Այն ինչ վոր յերեկ
Յերազ էր, անուրջ, — այսոր ահա, տես,
Դարձել է արդեն մի վոսկեշող շենք։
Տարիներ առաջ թվում էր յերազ...
Սևան-Զանգուի այս ֆանտազիան,
Բայց հիմա արդեն թափվում է վրա
Լույսերի հազար, հազար շատրվան։
Ոհ, ել ի՞նչ յերազ, ի՞նչ յերգ, ի՞նչ անուրջ,
Ել ի՞նչ նկարներ — Այվազովսկու,
Դուք վերածել եք բոլորը անշունչ,
Սակայն փայլփլուն ու դեղին վոսկու։

Այժմ տեսնում եմ իրականացած
Յերազն այդ լուսե։ Բայց հանուն ինչի
Արծիվը սարից գլորել եք ցած,
Թողեք, ոհ, թողեք, վոր ազատ թռչի,
Արծիվը ոդում թե՛ վեհ է, թե՛ վես,

Մի բերեք ներքև, թե չէ՝ կդառնա
Հասարակ թռչուն, վոր ունի թևեր,
Վոր ունի անկում, վոր ունի մահ, մահ։
Ուտոպիան պետք է ուտոպիա մնա,
Յերազը՝ յերազ։ Յերբ հագնում է նա
Իրականության շապիկը մրոտ,
Դառնում է գիշեր — մութ, անտառավոր։

Անչափ սիրում եմ թևավոր «ինչու»ն,
Սակայն ձեր լեզվում ինչուներ չկան,
Դրա համար են խոսքերս հնչում
Յե՛վ տարօրոտ, և՛ խենթ, և՛ չարկամ։
Դրա համար են անըմբռնելի
Իմ զգացմունքը ճշմարտապատում,
Դրա համար եք տեղի անտեղի
Արծիվ-մտքերս բռնում, բանտարկում։
Դրա համար էլ դուք չեք նվաճում
Այդ ինչուների աշխարհը դյութիչ...
Այ, Լենան տխրեց, ասացեք՝ ինչու,
Չէ վոր ձեզ համար պարզ է ամեն ինչ։

Իսկապես ասած՝ տխրել էր Լենան,
Նույնիսկ բարկության նշույլներ կային,
Գուցե հուզում էր, չարչարում նրան
Կրծքում բաբախող սիրտը մարդկային։
Գուցե խղճում էր անհույս պոետին,
Անթև կռունկին այդ յերամազուրկ,
Ինչպես բժիշկն է խղճում հիվանդին,
Զգալով, վոր դեղն իզուր է, իզուր...
Ծանր ուղտերի քարավանի պես,
Այսպիսի խոհեր մտքովս անցան,
Բայց մտիկ արա ու մտքովդ տես՝
Ինչեր է խոսում մարդն այս տխրաձայն։

«Ինձ դուր են գալիս բարդ ու ֆանտաստիկ
Նախագծերը։ Այսպես օրինակ —

Նախագծվում է (դուք այդ լավ գիտեք)
Ցերեկներից կախել մի նոր արեգակ։
Ապրում եմ, ապրում ես այդ յերազով,
Այդ մասին նույնիսկ գրել եմ մի վեպ,
Բայց շուրջս, շուրջս յերազների սով,
Վարդերից աղքատ, անուրջներից վորբ։
Տվեք, օ, տվեք, նոր, նոր Ժյուլվերներ,
Վոր անկարելի բաներ պատմեն մեզ
Ո՜, ձանձրալի յեն, աներազ, անսեր,
Մեր պոետները, և՛ փոքր, և՛ մեծ։

Ո՜, «իրը ինքնին» ահա ժայռը այն,
Վորին բախվելով փշուր են յեղել
Հանճարեղ մտքեր։ Մի կախարդ կայան,
Վորից այն կողմը դեռ վոչ մի ճամբորդ,
Վոչ մի Ամունդսեն չի թևակոխել։
Ո՜, քանի՜ քանի փիլիսոփաներ
Այդ ժայռի դիմաց, վորպես մի Համլետ
Արտասանել են՝ «լինել թե չլինել։
Այս է խնդիրը», ու չեն հանդգնել
Կայանից դենը անել վոչ մի քայլ,
Ինչպես Համլետը մահվան դեմ կանգնել,
Իր մտքերի դեմ մղում եր պայքար։

Բայց չեր հանդգնում այդ մութ աշխարհի
Սահմանը անցնել, վորտեղից, ավաղ
Դեռ վոչ մի ճամբորդ չի վերադարձել,
Ճամբորդներ հանդուգն, ճամբորդներ խիզախ։
Իրն էլ անծանոթ, անհայտ աշխարհ է,
Սիրելի ընկեր, ինչ վոր տեսնում ենք՝
Լոկ յերևույթն է, իսկ իրի ներքին
Եյությունը՝ մի կնճիռ է, գաղտնիք...
Ցավ մի՞թե այս լերկ ժայռերը լեզու
Ու հոգի չունեն։ Այս ծաղիկները
Ու այս ժայռերը մի՞թե չեն խոսում.

Ո՜, բնությունը միթե կներե
Այդպիսի հանցանք, վոճրագործություն...

Աշխարհն գոյություն ունի լոկ և լոկ,
Վորպես յերևույթ։ Ձեզ չկա փրկիլ, չե,
Յեվ վոչ մի Նյուտոն, մի Դարվին, մի Լոկկ,
Աշխարհը միայն, միայն անուրջ ե
Դրա համար էլ ինչ քաղցր ե, Լենա,
Յերազ դարձածի մասին անուրջել,
Մտքում ստեղծել պատկերները վառ,
Սրտում սիրածի շողշողուն աչեր։
Ինչ լավ ե նստել կրակից շիկնած
Վառարանի մոտ ձմրան ցուրտ գիշեր,
Կիսանինջ, փափուկ բարձերին հենած՝
Գարնան վարդերը նորից վերհիշել։

Մի տարանդավոր դերասանի պես՝
Արտասանելով ճառն իր հանդավոր,
Վառվում եր կարծես մեր տունը հեղ
Աչքերով թախծոտ ու արտասվոր։
Կարծես կարդում եր նա Տուրգենևի
Վարդերի գովքը — մի արձակ պոեմ,
Նրա աչքերում աշնան արևի
Թույլ ճառագայթներ, կրակներ կային։
Ու Լենան, Լենան, վոր նրան յերբեք
Չեր տալիս դաժան, մահացու հարված,
Այս անգամ արդեն անողոք ու սեգ
Դիմեց Վարդենցին — խիստ վիրավորված։

— Ո՛, Վարդենց, Վարդենց, այդ ո՞ւր ես հասել,
Ինչպիսի՜ անկում, ինչ դահավիժում,
Դու, վոր վսեմին լոկ ունեյիր սեր,
Խեղդվում ես այժմ պղտոր ջրերում
Ու ձեռք ես պարզում ամեն մի բանին,
Նույնիսկ թփերին թույլ ու անկայուն,
Յեվ ապասում ես նույն տապանին,

Որպես փրկության հուսալի անկյուն։
Եվ մեր այս դարում, որպես նոր Բուդդա՝
Քարոզում ես դու քար անշարժություն,
Օբլոմովյան ծուլություն է դա,
Դա լոկ մի կյանք է՝ կես քուն, կես արթուն...

Իսկ մենք այլ նյութից ձուլված մարդիկ ենք,
Մեր արյունը ովկիանի անդուստ
Հողմ է սուրել, մենք բարձրացել ենք
Կոհակի թևին — խենթ ու ալեծուփ
Ու մեծացել ենք մարտական ահեղ
Ու պայքարների փոթորիկի մեջ...
Տեսել ենք լեռնից սուրացող հեղեղ,
Որ խորտակում է ամեն, ամեն ինչ,
Տեսել ենք նաև դասակարգերի
Մարտական շարքեր խրոխտ, կարգապահ,
Որոնք փշրելով գահն արքաների,
Հարթել են ազատ, նոր կյանքի ճամփա։

Ու մասնակցել ենք այդ մեծ մարտերում,
Մերթ որպես զինվոր ու մերթ՝ ղեկավար։
Մենք ճիգ ու ջանքով և համառորեն
Աստղեր ենք նույնիսկ վերից թափել վար։
Ամպերի զավակ — կայծակը խարտյաշ
Գերել ենք, ինչպես վագրին անապատի,
Մենք և՛ քանդող ենք, և հմուտ քարտաշ,
Մենք տիրապետող ամեն մի բևեռի։
Ենթարկում ենք մեզ նույնիսկ տարերքը,
Հեծնում բնության խրխնջացող ձին,
Ոչ ոք չի սանձի մեր մեծ վերելքը,
Գաղափարները մեր արևածին։

Այդ քո իր կոչված սֆինքս-հրեշին
Մենք յենթարկել ենք մեր ազդեցության,
Փոխելով նրան, քեզ կամ ուրիշին,
Փոխում ենք նաև մեզ հար-հավիտյան։

Մենք և փոխում ենք, և հար փոփոխվում,
Չես կարող յերբեք դու նույնը մնալ
Գոյության կռվի մեծ հրաբուխում,
Վարանք բաղխվում է մարդը բնության,
Զարկվում են իրար մարդկային խմբեր,
Ու հարթվում է մեծ դժվարությամբ
Կատարելության ճանապարհը վեհ։

Ի՞նչ է այս բանը, (Նա մոտիկ առվից
Վերցրեց մի ափ պարզ ու մաքուր ջուր)
«Մի անգույն հեղուկ է ուրիշ վոչինչ» —
Կասեր Վարդենը, կասեր անպատճառ։
Տես, արեն ինչպես յելավ, բարձրացավ
Ու հեռվում թողեց լեռներ, յերկիրներ,
Յեվ քեզ թվում է, թե անշարժացած
Այս մեր յերկիրը պառկել է քնել,
Իսկ արև հսկան պտույտ է գալիս
Այդ մեր լիլիպուտ ծույլ աշխարհի շուրջ։
Յեվ մի՞թե այդպես չեն դառել դարեր՝
Բազմացել մարդիկ հավատով ու լուրջ։

Թեև այս միտքը դեռ դարեր առաջ
Ծիծաղելի յեր, բայց այժմ էլ, այժմ էլ՝
Բարձրացնելով աղմուկ ու շառաչ,
Շարունակում ես դու նույնը կրկնել։
Յեվ քեզ թվում է հին հույների պես՝
Աշխարհը վորպես միթխարի ափսե,
Իսկ շուրջը նրա մի փրփրադեզ,
Անհուն ովկիանոս՝ դաժան ու անսեր,
Վորի ջրերին դեռ վոչ մի ճամփորդ
Չի համարձակվել իր նավը հանել
Դեպի անծանոթ, կուսական ափեր,
Դեպի հմայիչ, անհայտ հեռուներ։

Բայց մենք քեզ պես չենք։ Մենք նվաճում ենք
Բնությունը մեծ, թեև նա հաճախ

Հանում է մեր դեմ կատաղի տարերք։
Ու թանգ է ծախում իր դանձերը ճոխ։
Ցեվ այդ մարտերում, հենց այդ մարտերում
Մենք ճանաչում ենք աշխարհն բազմազան,
Իր ընթացքի մեջ անվերջ, անդադրում,
Իր փոփոխման մեջ վեհ ու բազմաձայն։
Թեև ղոհում ենք մարտիկ ողաչու,
Ծավալդնացներ և՛ խիղախ, և՛ վեհ,
Բայց մարտնչելով նորից ենք թռչում
Հիմալայներից, Մոնբլաններից վեր։

Մենք նոր մարդիկ ենք։ Բայլ քայլի վրա
Աշխարհն ենք հիմքից, հաստատ նվաճում,
Ցեվ մաքառումով ու խնդությամբ վառ
Տիեզերքը վողջ մոտից ճանաչում։
Թեև դժվար է մեր ընտրած ուղին,
Խոչնդոտներով, կոփձեերով լի,
Մերթ հանդիպում ենք դորշ մառախուղի՝
Մերթ անդունդներին մութ ու ահալի,
Բայց մենք կտրում ենք ուղին այդ խուլթոտ՝
Վորպես նոր Կոլումբ, վորպես Մագելան...
Իսկ դու այդպես խեղճ, այդպես վարանոտ՝
Ցերդում ես դարձյալ քո հին ալեւուն։

Լենայի բերնով հպարտ խոսում եր
Ամենակարող փաստերի լեզուն.
Նա և՛ համոզում, և՛ խոր հուզում եր,
Իր անկեղծությամբ — յերկնի պես լազուր։
Նկատում եյի, վոր Սերգոն նույնպես,
Սիրով է լսում հուզված Լենային,
Նրա շողարձակ աչքերում, կարծես,
Մի զույգ բոցավառ խարույկներ կային։
Ո՞, յես ոտերին այդքան խղճալի,
Այդքան թեաթափ դեռ չեյի տեսել.—
Նա պատրաստվում եր, վոր նորից ճառի,
Յերբ Սերգոն նրան սկսեց «շոյել».—

— Բայց ինչու, ինչու այսքան վառ, ազատ,
Այսքան փառավոր կյանքը մեր գունեղ,
Աչքիդ թվում է անարև, անզարդ
Մի բանտ, մի շիրիմ և՛ խոնավ, և՛ նեղ։
Ո՜, մի՞թե, մի՞թե խանդը օձածին,
Թշվառությունը — չարիքների մայր,
Այդքան սիրելի, այդքան լուսածիր,
Դեղուհիներ են դարձել քեզ համար,
Վոր յերբ հիմնովին արմատից քանդում
Ու դեն ենք նետում այդ հրեշներին,
Դու մի թունավոր անեծք ես կարդում
Մեր դարին ու մեր սեգ հերոսներին։

Սիրտը, ասացիր, դարձել է հիմա
Անհույզ, անավյուն, միապաղաղ, չոր,
Սակայն կա՞, արդյոք, մի անհույս հիմար,
Վոր հավատա այդ մտքերիդ ճահճոտ։
Յեվ մի՞թե անցյալ վորևե դարում
Մարդն ունեցել է այնքան գունագեղ,
Այնքան կենսառատ, այնքան լիարյուն
Հույզեր, յերազներ, մտքեր ու յերգեր,
Քան մեր օրերի հերոսը խիզախ,
Աշխարհը փոխող այդ անպարտելին,
Քան ջահելները մեր մշտածիծաղ,
Վոր «տիրանում են բոլոր բերդերին»...

Մի հասարակ փաստ — Կարդացե՞լ ես այդ,
«Հերկած խոպան»-ը։ Կարդացել ես։ Լա՛վ։
Կա՞ արդյոք այնտեղ «օթելլոյան խանդ»,
Կամ անհույս վշտի մի բարակիկ լար...
Չկա։ Չես վիճում։ Հապա ի՞նչն է, վոր
Նրան տվել է այդքան վառ հմայք...
Դա կյանքը փոխող մարդկանց փառավոր
Հերոսությունն է ու հույզերը տաք.
Դա նոր աշխարհի հիմքերը գցող

Դավիդաշենի հայացքն է պայծառ,
Դա մեր յեռանոցն է, մեր հուշերը ծով,
Մեր կամքն է, կամքը... Այժմ հասկացիր...

Ճիշտ ասաց Լենան, որ մենք ե՛ փոխում,
Եվ փոփոխվում ենք անվերջ, անընդհատ,
Բայց ճիշտ է և այն՝ որ մեր այդ ուղին
Չի այնքան հանգիստ, սալարկված ու հարթ։
Մենք ամեն մի գիրք, մի երգ, մի գագաթ,
Մի նոր մարդ անգամ նվաճելու համար,
Պայքարել ենք միշտ, պայքարում ենք արդ,
Մարտեր ենք մղում ե՛ խիստ, ե՛ համառ։
Ու ամեն մի օր, ամեն մի վայրկյան
Մենք թե փոխում ենք, և թե փոփոխվում...
Ի՜նչպես դիմանա քո այդ խանդ-արքան
Մեր մեծ մարտերի փոթորկոտ բովում։

Այսպես օրինակ՝ տարիներ առաջ
Անսահման սիրով լսում էյի յես
Զուռնայի ձայնը, որ դառնահառաչ
Շարժվում էր առա՜ջ ինչպես ծանր յեղ։
Երբ լսում էյի Բեթհովեն, Մոցարտ,
Նույնիսկ Շոպենը ու Չայկովսկին,
Ձանձրանում էյի, զայրանում անչափ
Ու բարձրախոսը անջատում իսկույն։
Սպասում էյի՝ մինչև կլներ
Աշխարհահռչակ պայծառ Բեթհովեն
Ու մեկը լացով հանդամբր կղլեր
Մի ծանրածանր, ախմուր հորովել։

Իսկ այժմ անվերջ ուզում եմ լսել
Եվ Բեթհովենը, և Չայկովսկին,
Թեև սեգյահը ինձ շատ է հուզել
Ու այսոր էլ դեռ հուզում է կրկին։
Որ-օրի վրա հույզերն էլ մեզ հետ,

Աճում, ճոխանում, փոխվում են անվերջ,
Այս հարցի մասին, ինքնագոհ պոետ,
Զուր ես այս ձորում բորբոքում մի վեճ։
«Հերկած խոպան»-ից մինչև մեր օրեր,
Ինչքան է փոխվել մարդը մեր դարի,
Իզուր ես տենչում նրան որոնել
Լալկան ձայներով քո խարխուլ թառի։

Մինչ վեճը թափի թևեր է առնում,
Փաբրիկ կրակը դառնում է հրդեհ,
Զանգուլի ափին, խորախոր ձորում
Գյումուշ կայանն է բարձրանում մեր դեմ։
Գյումուշ, ո՜, Գյումուշ՝ վիթխարի մի սիրտ,
Վոր բաբախում է անվերջ, անընդհատ
Ու մեր աշխարհին տալիս է և՛ խինդ,
Ե՛վ ճերմակ ածուխ, և՛ սպիտակ վարդ,
Վոր մեր գյուղերին, մեր քաղաքներին
Տալիս է անթիվ անթառամ շուշան,
Ու շողշողում է՝ դերթ գալիքների,
Վառ գալիքների մի ազդանշան։

Գյումուշ, ո՜, Գյումուշ... բայց ահա արդեն
Մեր դեմ բացվում է հիանալի մի գյուղ.
Շենքեր լուսալի, մարդիկ ժպտադեմ,
Ելեքտրիկ լամպեր՝ նոր բացված կնդուղ...
Շենքերի առաջ՝ ծիծղուն պարտեզներ,
Դողարիկ փողոցներ — ծառազարդ, մաքուր,
Ել չկան, չկան աթարի դեզեր
Մրոտ խրճիթներ, դեմքեր կեղտակուր...
Գյումուշ գյուղն է սա, ինչքան է փոխվել,
Բայց ափեզերքում կա անփոփոխ բան.
Գյումուշն ել ճիգով խոյանում է վեր
Կարելով կյանքի փառավոր ճամբան։

Մեր սրտում այրող հրճվանքի վարդեր՝
Մի վերջին անգամ նայում ենք գյուղին,

Շենքերին շքեղ, ծառերին պարթև
Ու շարունակում մեր բռնած ուղին։
Անցնում ենք անծիր դաշտերի միջով...
Վաղորդության հուրն է բորբոքվել.
Մեր շուրջը կանաչ արտերի մի ծով,
Վոչ սայլի ճռինչ, վոչ ծանր հորովել։
Վոլորուն ուղին ձգվում է անվերջ,
Որը դառնում է ավելի դյութիչ,
Սակայն Վարդենցը բացել է մի վեճ
Ժխտում «քանդում» է ամե՜ն, ամեն ինչ։

Վեճը կրում է խիստ լարված բնույթ,
Առաջ են մղվում նորանոր հարցեր...
Ջահել գյուղացին զգալով ձանձրույթ,
Անկարող է իր զարմանքը սանձել։
Ու մոտենալով Արզաքյանց գյուղին,
Թեև ցավելով ու ափսոսանքով,
Բայց նրանք ընդմիշտ թեքեցին ուղին՝
Մեր տարորինակ պահից զժգոհ.
Ու գյուղ բարձրացան քայլերով հաստատ,
Վիշտ պատճառելով քնքուշ Լենային։
Վերից գալիս էր ջրերով արծաթ
Անուշ համերգով գետը լեռնային։

Նրանց հետևից ցնծուն աչքերով
Մեր պատմաբանը նայեց մի րոպե.—
«Խե՜ղճ Բաննոֆոն, խեղճ Բաննոֆոն,
Այս մեր աշխարհը քեզ ո՞վ էր ճամբել։
Ո՜, մեծ գլխանական, ո՜, խիզախ ճամբորդ,
Ինչե՜ր չեն տեսել աչքերդ արթուն,
Աթարի բուրգեր, հյուղեր գետնափոր
Ու համատարած խոր տգիտություն։
Բեղանից հետո ինչե՜ր չեն անցել,
Դարեր են թռել արընթաց թափով,
Բայց գյուղն իր տեսքով նույնն էր մնացել՝
Արոր ու թոնիր, հյուղեր գետնափոր։

Եվ չկան նրանք — խրճիթները կուզ,
Հորանջող գյուղի ձանձրույթը մռայլ.
Այժմ լույսերի լամպերը — վողջույն՝
Բոցկլտում են վառ ու արևափայլ։
Յեվ մարդու հոգին հինավորին փոխվել,
Սրտում ծաղկել են նոր զգացմունքներ՝
Յերկիրս այժմ արշավում է վեր՝
Դեպի նորանոր, պայծառ բարձունքներ։
Աշխարհափոխման ի՜նչ յեռանդ, ի՜նչ թափ,
Վազերության ինչպիսի ալիք,
Յեվ ի՜նչ խաղերով քո պատկերը տամ՝
Կոմունիստական վառվող գալիքը։

Մինչ պատմարանը բանաստեղծ դարձած
Գալիքի մասին պոեմ եր կարդում,
Բժնու շենքերը մեր դեմ բարձրացան
Մի պեղածիծաղ, արևոտ հովտում։
Բայց մենք քաղաքը դիտելով հեռվից՝
Նոր կայարանում նստեցինք գնացք,
Իսկ պատմարանը մեզնից անջատվեց,
Նստեց իր ավտոն ու քաղաք գնաց։
Խոստացանք նրան մեր վերադարձին
Մի քանի օրով հյուր մնալ իր մոտ.
Սուլեց վիթխարի մեր յերկաթե ձին
Ու ձորում թնդաց ցնծությունը հորդ...

. . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . .

Արևը հանդարտ թեքվում եր արդեն,
Յերբ նավից իջանք Սևանա կղզին։
Ի՜նչ առատությամբ բուրում են վարդեր,
Ի՜նչ քաղցր է ժպտում ճերմակ ակացին։
Ծովից փչում է զովաշունչ քամին.
Ու սվսվում են ծառերը ծաղկած.
Յելնում են ահա աչքիս եկրանին

Շենքեր լուսալի ու արևառագձ
Եվ հողի, հանքի հարվածայիններ -
Բանվորներ հպարտ ու ինքնավստահ
Լսվում են անվերջ կիթառի ձայներ,
Երգերը սիրո և զվարթության։

Ո՞ւմ ստեղծագործ ձեռքն է կառուցել
Այս խոպան կղզում այսպիսի հրաշք,
Այդ ո՞ւմ անդրին է այդպես բարձրացել՝
Հայացքով պայծառ և՛ վեհ, և՛ հրաշ։
Ո՜, դա հանճարեղ, մեծ, արևաջինջ
Իլյիչի ձեռքն է, Իլյիչի անդրին...
Ինչպե՞ս չարձակեմ խենթ ցնծության ճիչ,
Ինչպես չողջունեմ իմ պայծառ դարին։
Իսկ Սերգո՞ն... լավ է այդ մասին լսել։
Թույլ գրչովս ի՞նչպես պատկերեմ նրան...
Նա մեզնից զատվում ու ինչպես մի լեռ,
Բարձրանում է դեպ, մեծ սանատորիան...

Անհագ ծծելով բույրը վարդերի,
Մենք զբոսնում ենք մինչև ուշ գիշեր...
Մի տեղ հնչում են լարերը թառի,
Մի տեղ գովում են և գինին, և սեր։
Հոգնել ենք թեև յերկար շրջելուց,
Բայց քնի մասին մտածող չկա։
Գուցե ման գայինք մինչև արշալույս՝
Թե վոր պոետն իրեն վատ չզգար։
Հյուրանոց գալով մենք վորոշեցինք,
Վոր մեր Վարդենցը մնա բուժվելու,
Իսկ յես ու Լենան արևածագին,
Ընկերների հետ գնանք Զիբուխլու...

## ՅԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### Արևոտ գիշեր

Նկարիչ արփին բոցե վրձինով
Դունապարդում է ջրերը արծաթ,
Ու մեր նավակը աշխուժ ցնծումով
Լիճը հերկելով առնում է նոր թափ։
Չգիտեմ, ինչու բոլորը հանկարծ
Փափագ ենք զգում տեսնել Ջիբուխլուն.
Հիշում ենք նորից մեր արևակայծ
Մուրացան յերգչի տողերը տխրուն։
Հեռու մշուշից յելնում են մեր դեմ
Հին գյուղի դեմքեր աչքերով շիվար,
Նրանք բոլորիս թեև ծանոթ են,
Բայց սրտով այնքան օտար են, օտար։

Վոնց բիբլիական մի Նոյ նահապետ՝
Նավն է բարձրանում Վեդունցը — Սարգիս,
Վորպես մոլորված անծանոթ ճամբորդ
Ջիբուխլու ձեռքին նստում է կողքիս։
Տրտնջում է նա՝ մինուճար վորդուց,
«Նոյի ապստամբից» այդ նամարդագույն,
Վոր գյուղը թողեց անուսում, անլույս,
Փաստաբան դարձավ, մնաց քաղաքում։
Դառն հեկեկում է իր սրտի խորքում
Ու արցունք թափում՝ ինչպես վարար գետ,
Կարծես վողբում է, կարծես մրմնջում
Մի հին գյուղատան այդ ծերունու հետ։

Սրտանց լալիս է այդ Սարգիս րիձան
Մինչև ծովափը, մինչև Զիրուխյու...
Ահա տղերքը նավակից իջան, —
Տեղից կանգնում եմ ինքս էլ իջնելու,
Ու ձեռք եմ պարզում վշտակիր հյուրիս,
Ուզում եմ նրան ափն իջեցնել,
Բայց նա ցնդել է, կորել է հեռվում՝
Վորպես տխրադեմ սառնաշունչ ձմեռ։
Մենք վար ենք իջնում նավահանգստում
Ու մտնում ենք մի բուրող ծառուղի.
Հեռվից նայում են աչքերով ժպտուն
Ճերմակ շենքերը բազմատուն գյուղի։

Գյուղ ենք բարձրանում։ Մեր ճանապարհին
Ինչպիսի՜ չքնաղ հրաշալիքներ,
Գալիս խփվում են ծովի ափերին,
Գրոհի յելած թեթև ալիքներ։
Ու ալիքների բաշերից բռնած՝
Լողում են ծովում կին, տղամարդիկ,
Տարերքը հաղթել չի կարող նրանց,
Նրանք հմուտ են ու անվախ մարտիկ։
Ահա կխտամերկ կանանց մի ջոկատ,
Վարին մարզում է հրաշագեղ մի կին,
Նրանց կրծքերը՝ փրփրացող կաթ,
Իսկ մարմինները այրող դյութանք են։

Գեղատեսիլ են կանայքն այդ գյուղի
Ցեվ նրբակերտ են, և նոճահասակ,
Ո՛, նրանց ճկուն, ճկուն մեջքերին
Ինչ լավ է սազում գեղջկական նազանք։
Նրանք հունական արձանների պես
Զնաշխարհիկ են ու հոգեզմայլ,
Խաղաղ լճի պես հստակ են ու պայծ,
Ցեվ ջինջ են ինչպես մարմնագույն մարմար։
Դես վոչ մի, վոչ մի մեծ քանդակագործ

Չի կերտել այդքան հմայիչ ու վեհ,
Այդքան համաչափ, այդքան նրբագիծ
Ու կենդանաշունչ դեմքեր, մարմիններ։

Գյուղագիրները մեր մեծաքանքար,
Հին, անգրագետ, անխոս գեղջկուհուն
Գովել են անչափ, անվերջ ու այնքան,
Որ քեզ թվում է, թե մի հմայուն,
Մի չնաշխարհիկ, մի լուսակարկաչ
Էյակ է յեղել այդ մեր գեղջկուհին։
Սակայն յես էլ եմ ծանոթ այդ կանանց,
Այդ Զարդարներին, Անթառամներին,
Կարիքը նրանց կոկորդն եր սեղմել,
Դարձրել հաստավոտ ու կարճահասակ,
Բայց տխրապատում պոետները մեր
Այդ համարել են ազգային պարծանք։

Հանգստի ժամն է։ Մոտակա հանդից
Ու այգիներից այդ բուրումնաշատ,
Ծովափ են թափվել ժիր ու խնդալից,
Այնքան կենսաբուխ ծեր, յերիտասարդ։
Կանայք վարդաշուրթ, մարտիկներ — արի,
Առնական, ինչպես հաղթ գլադիատոր,
Նրանց թրծել է հուրը պայքարի,
Ճակատամարտերն մեծ ու փառավոր։
Ո՜, համայնական անծիր դաշտերի,
Դաշտերից մեկին՝ սիրավառ վողջույն,
Քեզ, հին Չիբուխլու, քո հին դարերին,
Մութ խրճիթներին հավերժական քուն...

Ահա Չիբուխլուն։ Ծովեզրյա մի գյուղ,
Ճերմակ տները ծառերում կորած,
Վոչ կավե հյուղեր, վոչ աթարածուխ
Յերդիկներ մրոտ, վոչ այնքան գոված
Հարսները համր ու լաչակավոր,
Վոչ ծերունիներ փայտերին կռթնած,

Հեքիաթներ պատմող ու հուշակավոր,
Վոչ հավետ չարքաշ ու ընդմիշտ քրտնած
Դեմքեր արևախաշ ու թիկունքներ կուզ։
Յեվ վոչ գամփռներ այնքան աժդահա,
Դռներին հսկող ու աղմկահույզ,
Վոչ ել մածակներ չար ու հաղեհան։

Ահա Ջիբուխլուն։ Փողոցներում լայն,
Մայթերի վրա այս ստվերաշատ
Մանուկներ կան ժիր, աղջիկներ կան վառ,
Աչիկներ կան սև ու հոնքերը սաթ։
Գյուղից ել վոչ մի և վոչ մի քուլա
Ծուխ չի բարձրանում դեպ գարնան յերկինք,
Բոլորը վառում են ելեկտրական լամպ,—
Ել ինչի՞ յե պետք աթար կամ թրիք։
Ել ի՞նչ, ի՞նչ յերդիկ, ել ի՞նչ ծուխ, ի՞նչ մուր,
Յերբ համայնական խոհանոցներում,
Տներում հատակ հար ու ամենուր
Ճերմակ ածուխն ե շողարձակ վառվում։

Ո՛, նոր Ջիբուխլու, յես ի՞նչ խոսքերով,
Քեզ ի՞նչպես, ի՞նչպես, ի՞նչպես պատկերեմ։
Վոր գալիք մարդուն իմ այս յերգերով,
Իմ այս հույզերով գրավեմ, գերեմ,
Վոր գալիք մարդիկ քեզ այնպես հիշեն,
Ինչպես հիշում եմ յես հին Ջիբուխլուն,
Յերբ ձեռք եմ առնում վարպետ քարտաշի՝
Մեր Մուրացանի գրքերը վշտուն։
Ի՞նչ շեշտ, ի՞նչ հնչյուն, ի՞նչ ռիթմ գործածեմ,
Վոր ներդաշնակի քո մեծ վերելքին,—
Ահա աչքերս անցյալին հառած,
Մեր վարպետներին հիշում եմ կրկին։

Հին գյուղի մասին այնքա՜ն սրտառուչ
Յերգեր ե հյուսել Թումանյանը ջինջ...
Ո՛, այդ յերգերի արծաթե առուն

Լոռու ձորերից դեռ կանչում է ինձ։
Կաթի սեր քաշող դեղձուկն է յերգել,
Յերգել է նաև բեղարած մաճկալ,
Ու հորինել է «Յերգեր ու վերքեր»
Մեր հայ Պառնասի մեծագույն արքան,
Հին գյուղի մասին խոր ափսոսանքով,
Լացով էր պատմում Տերյանը նրբին,
Ո՛, նա ուզում էր ճոճող նիզակով
Կործանման գրկից փրկել այդ վորբին։

Այդ մարդիկ ինչե՞ր, ինչեր կզգային,
Թե վոր ապրեին այս մեր որերում...
Յերանի՜ հիմա քնից զարթնեյին,
Ու հանդիպեյինք նոր Զիրուխլույում։
Նորից շրջեյինք ձորերը Լոռու
Յեվ Ալագյազի փեշին ման գայինք,
Աչքով տեսնեյին այս մեր աշխարհում
Դրահի յելած ծովը մարդկային։
Ծխնելույզների ծուխը դիտեյին,
Դիտեյին գյուղեր մաքրաջինջ, ճերմակ,
Ընկուզենու տակ քեֆի նստեյինք,
Իրար գրկելով և՛ սիրտ, և՛ բաժակ...

Զարթնեցեք քնից, վարպետներ պայծառ,
Յեվ մեզ ուղեկցեք մի ժամ, մի վայրկյան,
Ի՞նչ ես փափագում բոստա՜ն, սալվի ծա՜ռ,
Անդարդ սի՜րտ, լա՜ռ սե՜ր, ջերմ Իսահակյան։
Ի՞նչ ես յերազում, լուսաժպիտ մարդ,
Ծաղկուն լույսե՞րը՝ Լոռու ձորերում,
Ելեքտրիկ լամպե՞րը՝ ինչպես ադամանդ՝
Մեր անդնդախոր կիրճ ու ձորերում...
Ի՞նչ ես անուրջում, աշնան սիրահար,
Մթնշաղ սիրող ցրտահար պոետ,
Արեծա՞գ, վարդե՞ր, արշալույսը վառ, —
Դե՛, վեր կաց, վեր կաց, վայելիր մեզ հետ...

Ես այս խոհերի գիրկն էի ընկել,
Այս մտքերն էին իմ հոգին հուզում,
Վերհիշում էի մոռացված յերգեր,
Երգեր տխրանուշ, յերգեր յերազուն,
Երբ կանգ առանք մենք մի վեհ, սյունազարդ
Ու արևալի մեծ շենքի առաջ։ —
Մեզ առաջնորդող մի յերիտասարդ,
«Գյուղի դպրոցն է» — բարձրաձայն ասաց։
Դռնից ներս մտանք։ Դատարկ էին վողջ
Լսարանները լուսալի ու լայն. —
Այստեղ յեղել է մի գետնափոր վորջ,
Ուր ապրում էր մի նախրապան Թևլան։

— Այստեղ, — ասում է մի ծեր գյուղացի, —
Տեր Մարուքեյի դպրոցն է յեղել,
Ո՜, քանի՜ անգամ մեջքիս աքացի,
Ձեռքիս՝ ճիպոտի հարված է ավել։
Ընծայի հարցը՝ թե ինչու այսոր
Դպրոցում չկա վոչ մի աշակերտ,
Զարմանքով լսեց աչքերով լազուր
Մի ջահել աղջիկ՝ դուսալ ու բարեկիրթ։
— Աշակերտները, պատասխանեց ծեր,
Թավուտ հոնքերով մի հաղթանդամ մարդ —
Աշակերտները դաշտ են գնացել
Ուսուցիչների առաջնորդությամբ։

Իրագործել ենք պատգամն Իլյիչի, —
Պրակտիկայի ճանապարհը մեծ
Լուսավորում ենք տեսության անշեջ,
Վառ փարոսներով։ Ու էլ չենք գիջի
Մենք մեր գրաված դիրքերն անառիկ։
Իմ ջահելության ժամանակներում
Շատ էի լսում յես պոլիտեխնիկ
Դպրոցի մասին։ Ինչե՜ր չէր գրում
Մանկավարժների բանակը բազում։

Զմրունելով այդ վեհ բառի վողին,
Լուսնոտի նման դեգերում եյին
Բյուր մեթոդների լաբիրինթոսում...

Իսկ այժմ... Սակայն կներեք դուք ինձ,
Վոր ձեզ պատմում եմ մի բանի մասին,
Վորին ծանոթ եք ինձնից գերաղանց
Ցեվ լավ հմուտ եք այդ այրող հարցին։
Ներեցեք, վոր ձեզ հյուրընկալելու,
Ցեվ մի դովարան տանելու տեղակ,
Կարդում եմ վաղուց ասված «ալելու»,
Վորպես նորություն և դյութիչ, և տաք։
Համեցեք, իջնենք կոմմունի այգին,
Բիչ հանգստացեք, հետո կգնաք.
Դուցե կպատեք յեկող գնացքին,
Դուցե ավտոյով,— ինչպես կամենաք,

Ցեվ իմ այն հարցին, թե անդրադես
Մարդիկ կա՞ն արդյոք Զիբուխլու գյուղում,
Մի լայնալանջ կին՝ աչքերն լույսի դեմ,
Պատասխանում է ու քմծիծաղում.
— Ներեցեք, ընկեր, դա շատ հին հարց է,
Բառարաններից վաղուց վերացված,
Մի հայացք գցեք դուք հարևանցի,
Տեսեք՝ Զիբուխլուն ինչպես է փոխված։
Մեր գյուղում միայն բարձրագույն ավարտ
Կանանց տոկոսը հիսունից անց է,
Դրագետ են վողջ ծեր, յերիտասարդ,
Նախկին Զիբուխլուն անհետ կորած է։

Այսպես զրույցով իջնում ենք այգին,
Ուր ծաղիկները նոր են փթթում,
Ցեվ ուր խմում են լույսն արեգակի
Վարդերը գունեղ, վարդերը ժպտուն։
Նստում ենք ծիծղուն թավ նշենու տակ
Ու թիկն ենք տալիս կանաչի գորգին,

Վերից նայում է աչքի պես հստակ,
Խաղաղ ծովի պես մի կապույտ յերկինք։
Ճաշում ենք հենց այդ բնության գրկում,
Ըմպում ենք բույրը բյուր ծաղիկների.
Զգացինք՝ ինչպես յեղավ իրիկուն,
Ինչպես արևը թեկնեց լեռներին։

Հազիվ հասնում ենք նոր Դիլիջանից
Հևիհև յեկող մի ճեպընթացի,
Բայց ո՜ւր է, ո՜ւր է այդ անուրջային,
Այդ պահը տղան, այնքան տխրագին։
Մենք մենակ թողած նրան Սևանում՝
Վերադառնում ենք նորից Յերևան.
Ո՞վ գիտե, այժմ ուր են սավառնում
Նրա մտքերը և՛ սուր, և՛ ունայն։
Վերադառնում ենք, բայց առանց նրան,
Մի լարից «զուրկ են» ջութակները մեր.
Ո՜, ո՜վ կարող է Վարդենցի նման
Հին յեղանակներն «անուշ» նվագել...

. . . . . . . . . . . . . . . . . .

Սակայն այս ի՞նչ է, ընթերցող ընկեր,
Մոտիկ տուր, հրճվիր, ցնծությամբ խնդա,
Սևանից մինչև Մասիսն ալեհեր՝
Լույսերի ծով է, շողքերի անտառ...
Կանգ առ, ով գնացք, դանդաղիր մի քիչ,
Որ յերկար դիտենք տեսարանը այս.
Կանգ առ, ո՜, կանգ առ, թող այս բարձունքից
Դիտենք մի չքնաղ, վոսկեղեն յերազ։
«Կանգ առ, ո, վայրկյան, ո, ո՜րքան, ո՜րքան
Գեղեցիկ ես դու» — քեզ նման չքնաղ
Վայրկյան իր որում դեռ արև արքան
Ցերեկը, ո՜, յերբեք չի մտաբերում...

. . . . . . . . . . . . . . . . . .

Յերկու որ հետո Լենային տեսա
Տրիբունի վրա մի մեծ շքերթի,

Կանգնել էր վեմպես անառիկ մի սար՝
Հայացքը հառած անցնող շարքերին։
Երերթից հետո, մենք գտանք իրար,
Նա իր գրպանից հանեց մի ծրար…

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

Կանգ առանք ահա։ Մեր ոտքերի տակ
Մի անդնդախոր, գլխապտույտ ձոր,
Իսկ ձորի ափին ամուր, անխորտակ,
Իր յերգերի պես՝ պարզ ու միաձույլ
Կանգնել է ծերուկ պոետ Լոռեցին…
Նրա արձանի առջևում նստած՝
Այդ խորհրդավոր նամակը բացինք·
Յեվ ահա լսիր, թե ինչ էր գրած…

— Սիրելի Լենա, գրաբերիս հետ
Ղրկում եմ վերջին, վերջին նամակս,
Ինձ հետ միասին մի ծիծաղախիտ,
Մի կապուտաչ լիճ բարևում է քեզ։
Քեզ բարևում է լիճը յեզերող
Անտառում կորած այս լեռնաշղթան,
Բարևում են քեզ հավետ յերազող
Մարդակերպ, մռայլ ժայռերը ախտան։
Քեզ բարևում են այս ջրերը ջինջ,
Ու բարդիները քամուց ալվան,
Բարևում է քեզ նաև մի աղջիկ,
Մի հավերժահարս՝ անունը Սևան։

Յերջանիկ Լենա, յերկար գիշերներ
Ինձ տանջում եր մի անլուծելի հարց,
Ու յերբեք, յերբեք հանգիստ չի քնել
Իմ հոգին խռով ու հողմահալած։
Յես դանիական այդ Թագաժառանգ
Համլետի նման շատ եյի խոհում,
Ինչպես պղնձի կանաչավուն ժանգ՝
Սիրտս կրծում եր կասկածը աննուն։
Ու չեյի կարող գրոհի գնալ,
Վճռել վերջապես՝ լինե՞լ թե չլինե՞լ...
Բայց այսօր... Այսօր, սիրելի Լենա
Յես վորոշել եմ հավիտյան քնել։

Ունեցել եմ խոր հուսահատության՝
Խելագարության տանջալի որեր,
Մղձավանջային գիշերում տարտամ
Աշնան քամին է սիրտս ոլորել։
Բայց Համլետի պես յես չեմ սարսափել
Անդրշիրիմյան անհայտությունից,
Չի սանձի նման իմ կամքը զսպել
Ու մահվան գրկից հետ է քաշել ինձ
Այս հիասքանչ, այս հոգեզմայլ
Համայնապարփակ բնության վոգին
Ու վորպես մի խիստ, սակայն սիրող մայր՝
Ինձ շղթայել է այս ոտար կյանքին։

Ո՛, բնության պես նրբին նկարիչ
Չի ծնել, Լենա, վոչ մի մոլորակ,
Ռաֆայելի պես հանճարները ջինջ
Այդ վարպետի մոտ պատրանք են, պատրանք...
Ծովեր կախարդող Այվազովսկին,
Մի Լեոնարդո կամ մի Ֆիդիաս,
Մի մրրկահույզ, բոցաշունչ Պուշկին
Չափածո խոսքի կատարն այդ անհաս,
Վարպետ բնության ստեղծագործած

Պատկերներն են լոկ պատճենահանում,
Ու դուք, խեղճերդ, աչքերդ չռած՝
Նայում եք նրանց, ապրում, հիանում...

Իսկ ես դեռ մանուկ, մանուկ օրերից
Աշակերտել եմ այդ մեծ վարպետին,
Օտար եմ յեղել ձեր աղմկալից,
Ձեր շփոթաձայն յերգին ու մարտին։
Եվ ահա այսօր, մեռնելուց առաջ
Նորից ըմպում եմ իմ հին վարպետի
Գինու բաժակից։ Աչքերս հառած
Երբեք չնիրհող ջրի կապույտին,
Դիտում եմ լիճը... Ո՜, խաղա՜ղ է նա,
Սիրելի Լենա, անսահման խաղաղ,
Մի չարաճճի գեղուհու նման
Կարծես ուզում է հոգուս հետ խաղալ...

Դիտում եմ լիճը։ Վարպետ բնության
Վրձինով գծված մի չքնաղ պատկեր.
Այնքան եմ, այնքան ավազին պառկել,
Անրջել անուշ ու նայել նրան...
Սակայն մի ժամից ավելի յերկար
Չեմ կարող դիտել նույնիսկ հանճարեղ
Նկարչի գործը, դի ձանձրույթ արքան,
Մտնելով հոգիս զորքով իր ահեղ,—
Իմ համբերության թույլ իշխանության
Բոլոր բերդերին տիրում է մեկից
Ու վիզս դցած մի ժանգոտ շղթա,
Տանջում, խոշտանգում ու խեղդում է ինձ։

Բնության կերտած ամեն մի պատկեր
Հանդես է գալիս միասնության մեջ,
Բայց մենք քանդում ենք, աղճատում անվերջ
Այդ միասնության շենքը փառահեղ...
Այսպես օրինակ՝ սիրելի Լենա,
Նկարիչները աշխարհահռչակ

Գործադրելով և՛ հանճար, և՛ ջանք,
Ծովը հանձնում են ճերմակ կտավին։
Եվ նույնիսկ օվկիանն իր մեծ ցասումով,
Մի Հովհանն ահեղ կամ մի Ավրորա՝
Նրանց վրձինի կախարդ շարժումով
Լուռ քարանում են կտավի վրա։

Բայց նկարներում այդ հիասքանչ
Միշտ պակասում է մի էական բան.—
Ահա մի առու, անխոս, անկարկաչ
Բռնել է իրա առօրյա ճամբան։
Ահա քեզ նաև Այվազովսկու
«Իններորդ ալիք» նկարը փառահեղ,
Նավաբեկություն, փոթորիկ, սոսկում,
Ու փրփուրների խելագար հեղեղ...
Բայց պակասում է օվկիանի հոգին —
Հարաշարժ ջրի յերգը մոլեգին։
Եվ ահա այսպես՝ քանդում եք անվերջ
Բնության շենքը և՛ պայծառ, և՛ մեծ։

Բայց խոր կսկիծով քեզ գրեմ պիտի,
Որ ձանձրացել եմ նաև վարպետիս
Հրաշալիքներից... Եվ ինձ չեն հուզում
Ոչ վարդեր կարմիր, ոչ տրտում աշուն,
Ոչ ծաղկեզարդը լեռնալանջերի,
Ոչ հեղեղումը գարնան ջրերի,
Ոչ անուշ յերգը աղբյուր-պոետի,
Ոչ բարձրասլաց մեր դաշն բարդին։
Մենակությունն էլ, որ սիրում էյի
Ավելի սաստիկ, քան գիրկը տատիս,
Այժմ դարձել է մի դժոխային
Ու սիրտ հոշոտող ժանտադեմ դահիճ։

Մենակ շրջել եմ աշխարհն լայնարձակ,
Եղել եմ բոլոր թանգարաններում,
Տեսել օվկիանի ջուրը լեռնացած,

Ու կայմը՝ կորած խենթ կոհակներում։
Եղել եմ ձյունոտ հեռու հյուսիսում,
Հյուսիսափայլն է շողացել գլխիս,
Աշխարհի բոլոր չքնաղ ափերում
Նավս գցել է խորախոր խարիսխ։
Ու անտառներ եմ շրջել կուսական,
Ամպերին հասնող ծառեր եմ տեսել,
Եվ բարձրացել եմ Էվերեստ հսկան,
Ուր վայելել եմ անմահության սեր…

Եղել եմ նաև Նեղոսի հովտում,
Պիրամիդներ եմ տեսել վեհանիստ,
Իսկ այդ սֆինքսը… Հեքիաթ անպատում՝
Եվ խորհրդավոր, և՛ հավետ հանգիստ…
Բայց միշտ տխուր եմ յեղել յես հոգով,
Ու ձանձրացել եմ դիտել — լռելուց,
Եվ կրել եմ յես անհուն տանջանքով
Մենակությունը, վորպես ծանր լուծ։
Մենակության պես, սիրելի Լենա,
Չկա ավելի սարսափելի բան,
Այս աշխարհը ինձ թվում է հիմա,
Մի անծայրածիր, մի հեղձուցիչ բանտ…

Այժմ եմ հասկանում, թե ինչ վիթխարի
Վիշտ է ունեցել Աբու-Մահարին,
Վոր այդպես ցասկոտ, այդպես թունալի
Մահավճիռ է կարդում իր դարին։
Բայց ու՞ր է գնում մարդն այդ խելագար,
Այդ ու՞ր է տանում իր կարավանին,
Այդ ու՞մ է թողնում նարգիզ, նունուֆար,
Եվ վարդերը վառ, և արմավենին։
— Դեպի արևը, — ասում է մի ձայն, —
Դեպի անապատ, վոսկեղեն հեռուն…
Բայց առանց ընկեր, սիրելի Լենա,
Ցուրտ մենությունն է կանչում Մահարուն։

Նորից կարդացի յես յերեկ գիշեր
Վերջին նամակը վշտոտ Վերթերի,
Այնտեղ թեև կար անհանգչելի սեր,
Ու վառ բուրմունքը գարնան վարդերի,
Ու թեև կային սրտառուչ տողեր,
Սիրտ լացացնող ձայներ կիթառի,
Բայց սովորաբար նա յէլ է թողել
Մի խղճուկ կտակ իր հզոր դարին.
Կտակել է նա, վոր իրեն թաղեն
Հեռավոր դաշտում մի զույգ ծառի տակ,
Վոր մահից հետո գոնե դագաղում
Զգա մենակ ու անհիշատակ։

Դրանից յել մեծ սնափառություն,
Սիրելի Լենա, նշել կարող եմ.
Ունենաս այնքան մեծ արիություն,
Վոր հերոսաբար մահն արհամարհես,
Հետո կտակես, թե ինձ հիշեցեք,
Մարդիկ, ո՛, մարդիկ ինձ մի մոռանաք,
Դուք, վոր կյանքի մեջ ինձ հոշոտեցիք,
Ծաղիկներ ցանեք դագաղիս վրա...
Վերթեր, ո՛, Վերթեր, ամոթ է, ամոթ,
Այդքան խեղճանալ, այդքան ընկճվե՛լ, —
Դու վոր աշխարհը ցնցեցիր մահով
Ու վողջ Գերմանիան քնից հանիր վեր.

Ինքնասպանությո՛ւն, քեզ թվում է դա
Մի սնամեջ բառ, թուլամորթի քայլ.
Գուցե ծիծաղով նամակս կարդաս
Ու ինձ համարես մի խեղճ խելագար...
Չե՞ վոր այդպես են մարզել քո հոգին
Մանկապարտեզից մինչ համալսարան,
Չե՞ վոր քամվում են սև անարգանքին
Ինքնասպանի անունը վառման.
Ու չե՞ վոր, չե՞ վոր մտքովդ չի անցել

Ինքնասպան լինել, սիրելի Լենա,
Այդ գազանը քեզ չի սպառնացել
Իր ժանիքներով դաշույնանման։

Բայց ինքնասպան լինելու համար
Պետք է ունենալ մեծ հերոսություն,
Իսկ հերոս լինել, սիրելի Լենա,
Դեռ չի հաջողվել ամեն մի մարդու։
Յեվ նամանավանդ, յերբ կանխորոշում,
Յերբ մտածում ես գիշերները յերկար,
Յերբ կա քո սրտի ալեկոծ խորքում
Բազմիվող հույզերի խելահեղ պայքար,
Յերբ թողնելու յես ընդմիշտ, վերջնական,
Ջրերը հստակ, յերկինքը կապույտ՝
Գնում մի աշխարհ, վորտեղից սակայն,
«Չի վերադարձել դեռ վոչ մի ճամբորդ»։

Յեվ իրոք, Լենա, չկա ավելի
Հանդուգն, համարձակ, հերոսական քայլ,
Քան յերբ մտնում ես անդարձ ավերին
Կյանքդ, անցյալդ ու քո ապագան։
Բայց ապագայուրկ մարդ եմ յես հիմա,
Իսկ ներկան... Ներկաս մի կախարդիչ սուտ.
Ինձ համարում են ցնորված հիմար
Ու նիզակ ճոճող ասպետ — Դոն-Կիխոտ։
Գուցե ինձ հիշեն մի քանի ընկեր
Ու մի քանի ժամ իմ մահը սգան,
Զի վոր գրել եմ մի քանի յերգեր,
Յերգեր սիրավառ ու լիրիկական։

Ու ինչպես մի մարդ, վոր կաթիլ կաթիլ
Թույն է կուլ տալիս դեռ մանկությունից
Յեվ իր առնական հասակում արդեն
Չի քաշվում նույնիսկ մի բաժակ թույնից,
Այնպես էլ այժմ, այս բարձր ժայռից

Անվախ նետվում եմ յես գիրկը ծովի...
Թող ալիքները բռնեն լափեն ինձ,
Թող գանգս խապառ, խապառ փշրվի
Ու ձուլվի ծովին, հալվի նրա մեջ,
Թող հյուլեանա վողնաշարը իմ,
Ու ջրերի հետ թափառեմ անվերջ
Մինչև արևը բաղխվի աշխարհին։

Դե, ընդունիր ինձ, ծո՜վ իմ կապուտաչ,
Տուր սրտիս հանգիստ, հավերժական քուն,
Ո, սիրտս, սիրտս, սիրտս սիրատանջ
Քո գիրկն է գալիս, իմ հարազատ քույր։
Փախչում եմ, փախչում այս հարափոփոխ,
Այս հավերժահոս կյանքի հորձանքից,
Փրկիր, օ, փրկիր ամեն ինչ լափող
Վոչնչացումի յերկաթյա ձեռքից։
Գրկիր ինձ, գրկիր, ծո՜վ իմ կապուտաչ,
Դու հավետ անքուն իմ հարազատ քույր,
Յեվ սիրտս, սիրտս, սիրտս սիրատանջ
Թող լինի ազատ ու քեզ պես մաքուր։

. . . . . . . . . . . . . . . . . . .

Ինձանից հետո և վոչ մի կտակ,
Վոչ մի հիշատակ չեմ ուզում թողնել...
Թե վոր պատահմամբ գիակս գտաք,
Խնդրում եմ, խնդրում, հողում չթաղեք,
Ինձ նորից ծովի յերախը գցեք
Թող ալիքների թևերին լող տամ,
Նամակիս լեզուն հրով փակեցեք,
Վոր սիրտս ուրիշ մարդիկ չկարդան,
Վոչ վոք չլսի, վոչ վոք չիմանա,
Վոր ծնվել եմ յես, ապրել մահացել։
Չէ՞ վոր աշխարհը ձեզ էլ չի մնա,—
Ինչի՞ վրա յե խնդությունը ձեր...

. . . . . . . . . . . . . . . . . .

Դուցե Վարդենցի նամակի վոգին
Տատերին թվար արտասովոր բան,
Չե վոր նրանում կային «թանգագին»
«Անմնման» վոճեր — վեհ, վոսկեբարբառ.
Չե՛ վոր Վարդենցը իր պոետական
Վողջ գանձարանը հանել եր հանդես,
Դուրս թափել վոճի գորգեր դյութական,
Պատկերներ, հույզեր՝ նրբանյուս բեհեզ...
Բայց իր եյությամբ այդ «բարձրասլաց»,
«Թեավոր» վոգին դուրս յեկավ մի հեզ,
Անհույս, անարև մահամերձի լաց
Ու մահվան ձոնված վողբալի մի յերգ։

* * *

Լենան նամակը կարդալուց հետո
Մի քիչ լուռ մնաց, հետո վեր կացավ
Ու հաստատակամ, շանթի պես հատու՝
Դեմքիս սևեռեց աչքերը պայծառ։
— Վեր կաց, Արմենակ, — ասաց մեղմաբար,
Այդ մարդուն այժմ խղճալ ել չարժե.
Նա բազուկներովն արնադուրկ, անկար՝
Ուզում եր հսկա լեռները շարժել.
Ո՛, նա ուզում եր սանձահարել մեր
Այս քառատրոփ կյանքի նժույգ ձին.
Սակայն ջախջախված՝ ընկավ անհեր,
Ու առաջ թռավ ձին արևածին։

* * *

Վարդենցն ուզում եր պատմության թռչող,
Պտտող անիվը հանել իր ճամբից,
Սակայն տապալվեց՝ ինչպես մի չոր ճյուղ
Հանկարծ ընկնում ե բարձրացած հողմից։
Ո՛, Վարդենցներին փրկություն չկա,
Մեծ կյանքն ե նրանց մատնել մահացման,
Նրանց դեմ չկա վոչ վառ ապագա,

Ո՛չ զարնան վարդեր, ո՛չ հույսեր անմար։
Դրա համար եր Վարդենցը գովերգում
Ինքնասպանների «հերոսությունը».
Դրա համար է, որ այս վառ կյանքում
Նրանք հեշտությամբ ըմպում են թույնը...

Վաղ առավոտյան յելնում եմ փողոց։
Մայիսի մեկն է՝ ցնծություն, շքերթ՝
Մարդկային ծովը, հորդառատ ու հոծ՝
Իսկ խնդությունը՝ գարնանային գետ։
Գնում եմ մի թերթ, սիրով կարդում եմ
Իմ նոր պոեմը, Մայիսի մասին.
Կարդալուց հետո անհոգ թերթում եմ
Ու աչքս հառում վերջին յերեսին։
Հեռու անկյունում, որպես «սուգի» քող,
Սևին է տալիս յերկու լացող տող.
«Սևանա կղզու մեծ քարափի տակ
Գտնվել է մի անծանոթ դիակ»...

Քաղաքում հորդում, հորձանք է տալիս
Ցերեկի, նվագի գետը վարարուն.
Ի՜նչ հաղթական է հերոսը գալիս,
Սրտում՝ արշալույս, աչքերում՝ գարուն...
Ու ահա հպարտ անցնում են նրանք,
Շարքերը խիտ են, սերտ ու ամրակուռ։
Համաչափ, վստահ, ջլապինդ, արագ
Անցնում են ջահել աղջիկներ գանգուր։
Ահա կարմրավառ դրոշը գրկած՝
Քայլում է Լենինյան շարքի առաջից.
Նրա աչքերում՝ անհանգչելի կայծ,
Հայացքը՝ վճիտ յերկնքի պես ջինջ...

## ԿՅԱՆՔԻՍ ՃԱՄԲԱՆ

Սիրելի Ոզա, նստել եմ ահա
Բնության գրկում՝ արմավենու տակ.
Վորպես սրտահույզ մի սրնգահար՝
Գոգքիս յերգում են զեփյուռ ու վտակ։
Նրանց ձայնակցում, համերգում են բյուր
Կարկաչուն աղբյուր, թռչուններ նորեկ.
Ինչքան ուզում ես՝ ծաղիկների բույր,
Գույներ բազմազան, և՛ յերանգ, և՛ յերգ...
Յերկինքը այնպես կապույտ է, անբիծ,
Ոդը զովաշունչ, դաշտերը՝ կանաչ,
Հույզերիս գետը յելած ափերից
Խայտող ջրերով թռչում է առաջ։

Իմ վոտքերի տակ մի անհատակ ձոր,
Հայացքիս առաջ՝ քառագագաթ սար,
Քիչ հեռվում՝ կանաչ արտերի մի ծով,
Դաշտեր բերկրալի, անեզր, անծայր։
Դարավոր ձորում—յերկաթի զնգոց,
Կառուցման պաթոս, մուրճերի համերգ,
Ու ամենուրեք մարդն ստեղծագործ,
Միտքը խուզարկու, և շինարար ձեռք։
Ծաղկած ծառերին թառել են, կարծես,
Թիթեռներ ճերմակ ու բազմահազար։
Այսպիսի պատկեր դեռ չի տվել մեզ
Հին նկարչության և վոչ մի հանճար։

Մտերիմ Ոդա, նստել եմ ահա
Այդ պատկերի դեմ՝ դերթ հանդիպատես։
Ծաղկի թերթեր են թափվում իմ վրա
Ու յես կարոտով վերհիշում եմ քեզ.
Վերհիշում եմ քեզ, մարտաշունչ ընկեր,
Քեզ՝ անհանգչելի յեռանդի խարույկ,
Իմ սիրտն էլ գարնան շորեր է հագել,—
Յես հիմա այնպես ուրախ եմ, առույգ։
Յես հիմա այնպես — աշխույժ եմ, Ոդա,
Այնպես հուսավառ, այնպես լավատես,
Վհատությունը ինձ խորթ է, օտար։—
Ու խինդս, ահա, հաղորդում եմ քեզ։

Անմոռաց Ոդա, ինչպես լուսարձակ՝
Կյանքիս գիշերվա մութը պատռելով՝
Թռչում են հուշերս... Ահա մի գյուղակ,
Միջին մի տնակ՝ խարխուլ պատերով։
Այդ իմ հայրենի գյուղն է հուշ դարձել,
Այդ մեր խրճիթն է՝ որրան մանկության,
Հիշում եմ տատիս՝ կորաքամակ, ծեր,
Յեղբորս՝ մի հսկա-վեհ ու հաղթանդամ.
Ահա իմ մայրը՝ հեռու օրերից
Կարծես կանչում է, ձեռքով անում ինձ.
Ու հունձ է անում հայրս հողագործ՝
Թաղված հասկերի ծովում ալեկոծ։

Մեր գյուղակն ուներ չքնաղ բնություն —
Մի կողմը դաշտ էր, յերկու կողմը՝ սար,
Ծվարել էր նա լայնարձակ հովտում,
Ուր հողն էր բերրի ու ջրերը, սառ։
Ուր բերքն էր առատ, արոտը՝ փարթամ,
Օդը կենսատու, այգին՝ մրգաշատ,
Ուր ցցվում էին՝ դերթ հսկա տիտան՝
Ծառեր հինավուրց, քերծեր մամռապատ։
Հիասքանչ յերկինք, գեղեցիկ լեռներ,

Անթիվ առուներ, աղբյուրներ վճիտ,
Կախարդիչ գարուն, կարճատև ձմեռ,
Ծաղկառատ ձորեր — խայտաբղետ չիթ։

Բայց այդ սարերին, հողին ու ջրին
Իր թաթն էր դրել մի ժանտատես բեկ,
Մեկ բաժին թողել խրճիթները հին,
Զարքաշ աշխատանք, քարափները լերկ,
Մեկ բաժին թողել՝ սև աղքատություն,
Սնահավատ միտք, սահմանափակ խելք,
Մեկ բաժին թողել հեքիաթներ սրտում,
Յեկեղեցի, բանտ, սրտամորմոք յերգ։
Մեկ բաժին թողել վաշխառու, տերտեր,
Հարկեր բազմազան՝ դանակի պես սուր,
Մեկ բաժին թողել վիրավոր սրտեր,
Ու ծովածավալ վրեժի ցասում։

Այստեղ էր անցնում, սիրելի Ոգա,
Իմ մանկությունը — վանդակված թռչուն,
Յերբ վողջ աշխարհը հիմքից վորոտաց
Սկսվեց հրի, սրի շառաչյուն։
Դեմ դեմի յելան — յերկրներ, ազգեր,
Իրար բաղխվեցին հսկաների պես.
Գյուղերը դարձան կուրացած աչքեր,
Իսկ կյանքը՝ թաղման սև սգահանդես։
Ինքնակալ մահը տիրեց աշխարհին,
Սար ու ձորերը լուռ ամայացան,
Ու ընդմիշտ թողած մեր խրճիթը հին,
Յես դաժան կյանքում ուղևոր դարձա...

Սրտակից Ոգա, այժմ էլ սարսուռով,
Ահով եմ հիշում իմ կյանքի ճամբան։
Յես ճամբիս տեսա և՛ մարդակեր սով,
Յեվ մահվան սարսափ, և՛ դաշտեր խոպան.
Տեսա պալատներ — ցոփություն, կրքի,
Խրճիթներ տեսա — մութ, արևազուրկ,

Կրեցի սուգի, հեծկլտող յերգի,
Լացող աչքերի ձանձրույթը անձուկ։
Յես կյանքում տեսա հայացքներ մռայլ,
Յեվ արհամարհանք, և՛ քարորտություն,
Հին կյանքը, Ոդա, վորպես մի խորթ մայր,
Իմ սրտին տվեց լոկ թախիծ ու թույն։

Ու հիմա, ահա, յերբ շուրջս յերգի,
Ծաղկի, ծիծաղի ծովն է վարարում,
Հասունանում է ծովատատ բերքի,
Խորախոր հերկի մի բեղուն գարուն,
Յերբ մարդու հոգուց, մաքից, հույզերից
Մաքրում — թափում ենք հնության փոշին,
Յերբ ամենուրեք — այնպե՜ս խնդալից —
Խայտում, խնդում են մանկիկները ժիր,
Յերբ բարձրանում են նոր աշխարհ, նոր մարդ,
Նոր յերգ, նոր հույզեր, նոր սիրտ ու նոր սեր,
Անցյալս, ահա, վորպես տհաճ սարդ,
Հուշերիս առաջ վոստայն է հյուսել։

Ինչպես արևի պայծառ լույսի տակ
Իրերն ավելի պարզ են յերևում,
Այնպես՝ անցյալիս անդունդն անհատակ
Այս մեր մարտաշունչ ցնծուն օրերում
Ավելի լավ է իր վողջ եյությամբ,
Այլանդակությամբ բացվում իմ առաջ...
Ո՜, դա ինչ կյանք եր, դժոխք եր, զնդան,
Գիշեր՝ սոսկալի ու անլուսաբաց։
Տառապում եյի այդ խեղդող բանտում,
Անլույս գիշերում՝ մութ ու ահավոր,
Յերբ լսվեց դղիրդ, դրոհի թնդյուն
Ու բացվեց անմար մի նոր առավոտ։

Յեվ ինչպես ձմռան հաջորդում է վառ,
Թարմություն բերող կենսատատ գարուն,
Այդպես ել, ահա, այդ այգը զվարթ,

Իմ սիրտը լցրեց խնդությամբ անհուն։
Բացկլայ հոգիս։ Ու սիրտս դարձավ
Հույսի, յեռանդի անսպառ մի ծով,
Հին կյանքը՝ վորպես մռայլ քարանձավ
Փլվեց, ավերվեց մի հաղթ հարվածով։
Փոխվեց իմ կյանքի հունը տանջալի,
Իմ դեմ բացվեցին — նոր հորիզոններ
Ու շղթայակապ սիրտըս տանջալի
Դուրս յեկավ բանտից, զնդանից անել...

Այդ օրից, Ոգա, սկսվեց ահա
Իսկական կյանքիս վերելքի ուղին,
Անվերջ մաքրելով հոգիս վշտահար
Ախտերից, թույնից — դարավոր ու հին,
Յես վեր բարձրացա դժոխք-անդունդից
Ու մտա մի լայն, անծայրածիր դաշտ,
Ուր ջերմ սիրով վողջունեցին ինձ
Նոր կյանքը կերտող բյուրավոր քարտաշ,
Ու ինձ առնելով իրենց հորձանքում,
Իմ մտքին տվին բազեյի թևեր,
Յես սովորեցի լինել աննկուն,
Կռվել, խիզախել, ձգտել դեպի վեր։

Ո՜, այն աշխարհում, ուր մարդը մարդուն
Գազան է, Ոգա, շատ է անհնար
«Փայտե խրճիթից մինչ սպիտակ տուն»
Հաստատ քայլերով վերև բարձրանալ։
Յեվ յեթե մեկը բարձրանում էլ է,
Քանի՜, քանիսներ կործանում են անհետ...
Նրանց ճամբին կան, և՛ անառիկ լեռ,
Յեվ խութոտ ծովեր, և՛ ճահիճ, և՛ գետ։
Ու տիրում է այդ աշխարհի մարդկանց
Մի ապշեցուցիչ զարմանք անպատում,
Յերբ մեկը «բախտով» հասնում է հանկարծ,
«Փայտե խրճիթից մինչ սպիտակ տուն»։

Կյանքի հատակից ինձ հետ միասին,
Այնքա՜ն թշվառներ յելան բարձրացան,
Կպատմեմ միայն յես մեկի մասին,
Վորին ծանոթ են աչքերդ պայծառ։
Իմ այդ ընկերոջ անունն է Մինաս,
Ինքը հաղթանդամ, մի պարթև տիտան.
Վորպես տանջալի, հեղձուցիչ յերազ՝
Մինասն էլ տեսավ կյանքը մանկական։
Թե տառապանքի ինչ որեր տեսանք՝
Սոսկում եմ նույնիսկ հիշել այդ մասին,
Բայց, տե՛ս, մաքառման մի հուժկու հոսանք
Վորտեղի՞ց վորտեղ հանեց Մինասին։

Այդ տաղանդավոր «սանքյուլոտ» տղան
Բռնեց գիտության ուղին դժվարին.
Իր սրտում վառեց աստղեր հուրհուրան
Ու վեր բարձրացավ՝ գերթ զինվոր արի։
Տիրեց գիտության ամրակուռ բերդին,
Համաշխարհային նոր գյուտեր արեց,
Ո՞վ, այդ հողագործ գյուղացու վորդին,
Ինչպե՜ս գանձեր լույս աշխարհ հանեց...
Նա հիմա արդեն հռչակ է հանել՝
Վորպես մի խոշոր ջահել կենսաբան
Ու բաց է անում նոր ճանապարհներ,
Յե՛վ խիզախորեն, և՛ հերոսաբար։

Իսկ յես իմ ճամփին լույս մուսաների,
Յերգի, գեղեցիկ մեծ աշխարհն ընկա,
Ինձ հմայեցին բարձր սարերի
Կատարները վեհ, գիշերն լուսնկա,
Ինձ ներշնչեցին վարդերը հուրհուր
Հասկերը ծփուն, աղջիկները վառ,
Հոգիս դյութեցին ովկիանների անհուն,
Ծովերն ալեկոծ ու մրրկահար.
Ինձ վոգեկոչեց մարդը մաքառող,

Նոր կյանքը կերտող մարդն հերոսական
Հոգիս մագնիսեց ամենակարող
Աշխատանքը սուրբ ու նվիրական։

Մանուկ հասակից մեր Թումանյանի
Վճիտ յերգերը ինձ հմայեցին,
Վորպես կամարը վառ ծիածանի՝
Սրտիս մեջ մնաց այդ մեծ Լոռեցին։
Ու Շեքսպիրի համայնապարփակ
Հանճարի հրով հոգիս տաքացավ,
Սիրեցի նրա արևի պես բարկ,
Ովկիանի պես խոր «Համլետ»-ը պայծառ։
Պուշկինն ու Հայնեն կենսուրախություն,
Պարզություն ու թև տվին իմ յերգին,
Ինչպես շանթածին ամպի դղրդյուն՝
Յերգիս տոն տվեց փոթորկոտ Գորկին։

Ու ահա այսպես՝ իմ պայծառ ընկեր,
Յելնելով կյանքի խորունկ հատակից,
Ընդմիշտ ցրելով, և՛ վիշտ և՛ թախիծ՝
Յես յերկարաձիգ ճամբա յեմ ընկել,
Ու ճանապարհիս Թումանյանի ջինջ,
Ջուլալ աղբյուրից մի բաժակ ըմպած՝
Մի կայծ վերցրած Հայնեյի հրից՝
Պուշկինի յերգի բուրը գինով արբած՝
Յեկել հասել եմ մի մեծ լեռան տակ,
Վորի գագաթը ձյունոտ է ու վեհ,
Ու հիմա, ահա, կարոտով անհագ,
Հաստատ քայլերով բարձրանում եմ վեր...

Отв. редактор **А. Адоян**
Тех. редактор **И. Карамян**
Обложка и титул **Леткара**

А. САРМЕН

# П О Л Е Т

(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении.
Москва, Армянский пер., 2. Зак. 1236.
Главлит № Б—12972. Тираж 3000. Сд. в наб.
19/VIII-35 г. Подписано к печ. 20/IX-35 г.
Печ. л. 11½. В 1 п. л. 39,000 п. зн.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220039527

(704.)

A II 39527